

ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՄԴԱՐՅԱՆ



ԵՐԵՎԱՆ

1895

1895

1895

1895

1895





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

ЭЛЬМИРА ГЕВОРКЯН

АРУТЮН АЛАМДАРЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ


Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

11
A 58387

ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977




Ուսումնասիրությունը նվիրված է XIX և XX և առաջին կեսի լուսավորական շարժման ականավոր դեմքերից մեկի՝ Բանասանդ, գիտնական, մանկավարժ Հարություն Ալամդարյանի կյանքի ու ստեղծագործության համակողմանի քննությանը:

Պատասխանատու խմբագիր

Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

Գ $\frac{70202-}{703(02)-77}$ 53-77

© Հանդիսանում է ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977



Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

XIX դարի առաջին քառորդում հայ ժողովուրդը շարունակում էր մնալ իրավաքաղաքական ծանր վիճակում: Սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի տիրապետության ներքո Հայաստանն ամայացել, աղքատացել էր: Անտանելի հարկերը, ճնշումն ու շահագործումը, աղգային-կրոնական հալածանքները սարսափի մեջ էին պահում հայ ժողովրդին: Ծանր պայմաններից ելք որոնելու համար, ժողովրդի մի ստվար մասը՝ հայրերն ու չափահաս որդիները, թողնելով հարազատ հողն ու տունը, բռնում էին օտարության ճամփան, որ ծանոթ էր հայ ժողովրդին դարեր ի վեր:

«...Խղճալի աղզն մեր՝ ողորմելի կացութեամբ տարագիր լինի, որն մնան կենդանի, եթէ ոչ գտանել զկերակուրս իւրեանց, խոտ ճարակեն և մեռանին, մնալով կարօտանաց հացի և հանդերձի,— նկարագրում է իր ազգակիցների վիճակը սպահանցի Դավիթ Տեր-Մկրտչյանը՝ 1817 թվականին Հովակիմ Լազարյանին գրած իր աղերսագրում,— վա՛յ ինձ թէ Զուղայ,— շարունակում է նա իր սրտաճմլիկ նամակը.— ինչպես վերջին ողորմելութիւնն է՛հաս, որ չեմ կարող գրով պատմել իշխանիդ իմոյ, չունիմ ինչ ասել, բարերարն Աստուած լիալի՛ր կերակրի և յազեցուցանէ զխղճալի ազգին մերոյ՝ և տացէ

ողորմութիւնն երկրիս մերում... ամենայն ուտելիք բաղում անձինք չեն կարողանում ձեռն արկանել, մնան միշտ կարօտ... և ամենայն ինչ թանկ... սաստիկ հարկապահանջութիւնն, թէ եկեղեցականաց և թէ քրիստոնէից... թէ որքան նեղութեան և վերջին կետ սահման ուղորսելութեան միջի եմք, որ զազգն մեր ի նեղութենէ և ի չքաւորութենէ մոռացան զհայրենիս և զորդիս իւրեանց, եղեն պանդխտութեամբ յամենայն երկիր, այժմ ևս փախստական լինեն, զի որք կարող են փախչել, անկարողքն մնալով ի մէջ դերութեան...»¹:

Հիշյալ ժամանակաշրջանը նշանավորվում է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում խմորվող նոր երևույթներով, ազգային ինքնագիտակցության զարգացմամբ: Այդ բանին նպաստում են մի կողմից տնտեսական զարգացման նոր ուղի մտած հայ գաղթօջախները, մյուս կողմից, որը և ամենակարևորն է, մայր հայրենիքում դեռևս նախորդ դարից ծնունդ առած ազգային-ազատագրական շարժումները: Հեռավոր Կալկաթայում, Մադրասում, Պոլսում, Զմյուռնիայում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Թիֆլիսում, էջմիածնում և այլուր, ստեղծվում են մշակույթի օջախներ՝ դպրոցներ, տպարաններ, հրատարակչական ընկերություններ: Այս առումով առանձնապես նշանակալի դեր են խաղում Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, Հաղարյան ճեմարանը, էջմիածնի հոգևոր դպրոցը, հնդկահայ գաղութը, Պոլիսը և հայկական այլ կրթական օջախներ:

XIX դարի գրական ստեղծագործական կյանքի արթնացումը նշանավորվում է բաղձաթիւղ նոր երևույթներով: Դրանցից առաջինը ազգային թատրոնի վերածնունդն էր: Հետևելով ֆրանսիական կլասիցիստներին, Մխիթարյան հայրերը գրում են ազգային պատմական ողբերգություններ՝ նյութը վերցնելով հայ ժողովրդի անցյալի հերոսական պատմությունից: 1805 թ. Ե. Թովմաճանը գրում է «Հայկ Դյուցազն» հայրենասիրական դրաման: Ա. Բաղրատունին 1815 թ. գրում է «Եր-

¹ ՆՍՍՀ Մինիստրների սովետին առնիթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), Հաղարյանների արխիվ, թղթ. 10 է. գ. 11, վավ. 16: Այսուհետև՝ Մատենադարան:

վանդ Բ» ողբերգությունը, 1819-ին՝ «Գնելի եղերական մահը», Պետրոս Մինասյանը՝ առաջին պրոֆեսիոնալ դրամատուրգը, օգտվելով Ռասինից, 1829 թ. հորինում է «Մեծն Միհրդատ» ողբերգությունը: Պատմական թատերական երկերից բացի, այդ տարիներին ստեղծվում էին նաև ժամանակակից կրոնա-հայրենասիրական, կենցաղային թեմաներով պիեսներ: XIX դարի-առաջին երեսնամյակում ստեղծված այսօրինակ պիեսներից հիշատակության արժանի է Գ. Շերմազանյանի «Նկարագրութիւնք ինչ-ինչ զործոց Կարապետ ելպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի հայոց գաղթելոց ի Տայս» պամֆլետային պիեսը: Թատերական ներկայացումներ են կազմակերպվում նաև Ներսիսյան դպրոցում: Այստեղ 1828 թ. աշակերտների ուժերով բեմադրվում է Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը»: Հայ թատերական արվեստի վերածննդի ալիքը հասնում է նաև հեռավոր հնդկահայ գաղութը: Բոմբեյում, գեռևս 1815 թ. հիմնադրված «Օճանսիյուռյան ընկերությունը», որի գլխավոր անդամներից մեկն էր Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցին, 1821 թ. Կալիաթայում հրատարակում է «Խտրադիմայ դժողութիան» պիեսը: Այս կատակերգությունը հայ երգիծական թատերգության առաջին նմուշն է և իր շոշափած հարցերով (ընտանեկան, կենցաղային, սոցիալական) հանդիսանում է Գ. Սունդուկյանի կատակերգությունների նախատիպը: Թատերական երկեր են հորինվում և բեմադրվում նաև Նոր Նախիջևանում, Պոլսում, Աստրախանում և այլուր:

Զգալի շափով հառաջանում է նաև հայկական մամուլի զարգացումը: Մի գործ, որի սկիզբը նշանավորվում է տակավին 18-րդ դարի վերջերում՝ 1794—1796 թթ. Մադրասում հիմնադրված «Ազգարարով»: Սրան հաջորդում է Պոլսում «Արշարունյաց ընկերության» միջոցով 1812—1816 թթ. հրատարակված «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը, իսկ 1816 թ. Աստրախանում լույս է ընծայվում «Արևելյան ծանուցմունք» արևելահայ առաջին շաբաթաթերթը՝ ռուսերեն և հայերեն լեզուներով:

Դարասկզբում զգալի աշխուժություն է նկատվում նաև հայկական արվեստի բնագավառում: Իր զարգացման երրորդ

Հետաքննել և արձանագրել թիֆլիսի Հովնաթանյանների նկարչական արվեստը: 1813 թ. Վենետիկում տպագրվում է «Մանրանկարչությունը և մինիատյուրա արհեստ մանրակրկիտ ներկերանդ նկարագրութեան» նորատիպ ուսումնասիրությունը, որի հեղինակը փորձում է հայ դարավոր, հարուստ պատմություն ունեցող մանրանկարչության արվեստի փորձից ելնելով, մշակել համապատասխան կանոններ, օրենքներ: Հայ նկարչական արվեստի թնազտվածում իր կատարած աշխատանքով լայն ճանաչում է ստանում էջմիածնի միաբան Սահակ Մուղկարարը: Նրան մտահոգում է Հայաստանում արվեստների և հատկապես մանրանկարչության արվեստի զարգացման գործը պատշաճ հիմքերի վրա դնելու հարցը: Նկարչական արվեստի զարգացմանը զուգընթաց XIX դարի առաջին երեք տասնամյակներում գործնական քայլեր է արվում նաև հայ երաժշտական կուլտուրայի ուղղությամբ: Հայտնի է, որ միջնադարյան հայկական ծայնագրության սիստեմը՝ խաղաղությունը, դեռևս հին ժամանակից կորստյան էր մատնվել: Նոր, եվրոպական երաժշտության ծայնագրությամբ միայն հնարավոր էր կորցնող փրկել ժողովրդի մեջ դեռ կենդանի հայ երաժշտության անզուգական նմուշները: Այդ դժվարին գործի իրականացումը իր վրա է վերցնում դարասկզբի նշանավոր գործիչ, երաժշտագետ Պապա Համբարձում Լիմոնճյանը: Նա ստեղծում է հայկական ծայնագրության նոր սիստեմը և դրանով հնարավորություն էրնձեռում եվրոպական երաժշտության նիշերով դրի առնելու հայ միջնադարյան հոգևոր և աշխարհիկ երաժշտության անմահ կոթողները:

Նոր թափ է ստանում նաև հայ տպագրության գործը: Առանձնապես Վենետիկը, ապա Պոլիսը, Կալկաթան, Մոսկվան, Նոր Նախիջևանը, էջմիածինը, Աստրախանը և հայաշատ այլ ավայրեր դառնում են տպագրության գործի կենտրոններ, հրատարակվում և վերահրատարակվում են ինքնուրույն և թարգմանական գրքեր: Այս ճանապարհով հայության լայն շրջաններն են թափանցում եվրոպական և ռուսական ստեղծագործական մտքի նվաճումները և նույնպես հայ գրական կյանքի համակողմանի զարգացմանը:

Հայ գրական շարժման այս ընդհանուր առաջընթացը նպաստավոր հող է ստեղծում ոչ միայն թատերական, այլ ընդհանրապես գրական-գեղարվեստական նոր երկերի՝ արձակ և չափածո ստեղծագործությունների զարգացման համար։ Վեներտիկի և Վիննայի Միֆարյանները լայնացնում են իրենց գիտա-մշակութային ։ գործունեության շրջանակները։ Այդ օջախները նպաստում են բորբոքելու հայ ժողովրդի սերն ու հետաքրքրությունը դեպի պատմական անցյալը, դեպի իր նախնիների ստեղծած հոգևոր ժառանգությունը՝ գիրն ու գրականությունը։

Հայ ժողովրդի առաջավոր գործիչներն իրենց հայացքն ուղղել էին դեպի Ռուսաստանը՝ անհամեմատ քաղաքակրթված ու լուսավորված այդ մեծ երկիրը։ Կողմնորոշումը դեպի բրիտանոյա Ռուսաստանը ներթափանցում է պարսկա-թուրքական դաժան տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի լայն խավերը։

1804—1813 թթ. ռուս-պարսկական, 1806—1812 թթ. ռուս-թուրքական և 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներում հայ ժողովրդի զավակները ռուս զինվորների հետ հերոսաբար պայքարում էին պարսկա-թուրքական բռնակալների դեմ։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով։ Վերջինիս օգնությամբ Արևելյան Հայաստանը վերջնականապես ազատագրվեց պարսկական կեղեքիչների դարավոր լծից։ Մայր հայրենիքի արևելյան հատվածի ազատագրությունը, որպես պատմական խոշոր իրադարձություն, մեծապես նպաստեց աշխարհասփյուռ հայ ժողովրդի գոյապայքարին։ Սկսվեց հայության սոցիալական ու կուլտուրական կյանքի զարգացման մի նոր շրջան։ Բարեկալվեց ռուսական հողում պառսպարված հայ ժողովրդի տնտեսությունը, առևտուրը։ Հնչեցին մշակույթի սկսեց զարգանալ հայաբնակ այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Մոսկվան, Պետերբուրգը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, Թիֆլիսը։ Մշակութային այդ օջախներ-

րում էին գործում ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջադեմ գործիչները, որոնք մեծ դեր կատարեցին հայ գրականության, գիտության ու մշակույթի բնագավառներում: Հայ ստեղծագործական միտքն սկսեց ազատագրվել արևելյան սահմանափակությունից և եվրոպական լուսավորության ուղին բռնել:

XIX դարի առաջին երեսնամյակը մի առանձնահատուկ շրջան դարձավ գեղարվեստական գրականության համար: Դա: Լլասիցիզմի զարգացման բուռն շրջանն էր, որը միաժամանակ հող հանդիսացավ նոր, աշխարհաբար գրականության սկզբնավորման համար: Այլ կերպ ասած, գեղարվեստական գրականության մեջ մի կողմից բուռն զարգացում ապրեց լլասիցիստական գրաբարյան բանաստեղծությունը, մյուս կողմից կաղմավորվեց և իր հետագա զարգացման ուղին գտավ նոր աշխարհաբար գրականությունը:

Դարի առաջին երեսնամյակում հանդես եկան մեծ թվով գրաբարակեզու բանաստեղծներ՝ Աբրահամ Աստաբադցի վարդապետը, Գրիգոր Գապասախալյանը, Ղուկաս Ինճիճյանը, Դաբրիել Ավետիքյանը, Մանուել Զախչախյանը, Արսեն Բազրատունին, Հարություն Ալամդարյանը, Մեսրոպ Թադիադյանը և այլք: Դրանցից մի մասը իր գործունեությունն սկսել էր նախորդ դարի վերջին տասնամյակից:

Այս բանաստեղծներն իրենց գործերով թեև որոշակիորեն չէին սահմանազատվում միջնադարյան տաղերգուներից, բայց նրանց մի զգալի մասի մոտ առկա էին ազգային նոր բանաստեղծության ընդգծված ձևեր և եղանակներ: Բանաստեղծության հնից եկող հիմնական թեմաների՝ կրոնաբարոյախոսության, սիրո, պանդխտության, կյանքի ու մահվան, վարդի և սոխակի և այլ մոտիվների հետ միասին, նոր տեսքով վերականգնվում էր կրոնահալոցնասիրական թեման, որը զրեթե դուրս էր մնացել միջնադարյան նշանավոր քնարերգուների ստեղծագործության շրջանակներից: Առավել շեշտված տարբերությունը XIX դարի առաջին երեք տասնամյակների և նախորդ դարերի բանաստեղծների միջև, նկատ-

վում է գրական տեսակների մեջ: Թեմատիկ առումով թարմություն են բերում լիրիկական բանաստեղծությունը և դյուցազներգությունը: Գրական այս տեսակների նշանավոր ներկայացուցիչներ հանդիսացան Արսեն Բազրատունին, Հարություն Ալամդարյանը և Հովհան Վանանդեցին:

Սրանց շարքում, որպես քնարերգակ, իր ուրույն տեղն ունի Հարություն Ալամդարյանը:

* * *

Ալամդարյանը XIX դարի առաջին տասնամյակներին պատմաքաղաքական ու գրական-մշակութային կյանքի ծրնունդն է, հայ նոր քնարերգության նշանավոր ներկայացուցիչը, լուսավորական շարժման առաջամարտիկներից մեկը, նշանավոր մանկավարժն ու գիտնականը: Ալամդարյանը ռուսական կողմնորոշման գործիչ է՝ բառիս խոր նշանակությամբ: Նրան, իբրև հայ հասարակական մտքի առաջադեմ ներկայացուցիչի, ոգևորել է Հայաստանը և հայ ժողովրդին պարսկա-թուրքական բռնակալների լծից Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու գաղափարը:

Մեծ է Ալամդարյանի հրախտիքը ռուսումնա-կրթական, լուսավորական շարժման ասպարեզում: Նրան, իրավամբ, կարելի է համարել հայ նոր դպրոցի ջահակիրը, նախաաբովյանական շրջանի հայ մանկավարժության ականավոր ներկայացուցիչներից մեկը: Ալամդարյանի անունը անքակտելիորեն կապվում է XIX դարի առաջին քառորդում ծնունդ առած հայ երեք նշանավոր ռուսումնական հաստատությունների՝ Աստրախանի Աղաբաբյան դպրոցի (1810), Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1815) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1824) հիմնադրման պատմության հետ: Նա վառ հետք է թողել ժամանակի հայ գրական-մշակութային կյանքի պատմության մեջ:

Ալամդարյանը լայն շփման ու մեծ միջավայրի գործիչ էր: Նա շրջապատված է եղել XIX դարի առաջին կեսի հայ հասարակական կյանքի նշանավոր գործիչներով, ինչպիսիք են Լազարյանները, Ներսես Աշտարակեցին, Սերովբե Պատ-

կանյանը, Խաչատուր Աբովյանը և այլք: Կարելի է ասել՝ չկա ժամանակաշրջանի հայ գրական մշակույթի, ազգային-լուսավորական, եկեղեցական կյանքին վերաբերող որևէ վավերագիր, ուր չհիշատակվի Ալամդարյանի անունը և չկա մի ժամանակակից գործիչ, որ երախտագիտությամբ չգնահատի նրա ծառայությունները: Ալամդարյանի հետ կապված գրադրությունների, նամակների թիվը հասնում է հազարի: Կարճատև է եղել նրա ստեղծագործական կյանքը, սակայն բազմախորհուրդ է նրա գրական-հասարակական գործունեությունը:

Ալամդարյանի կյանքի և գործունեության մասին շատերն են գրել: Նրա անունը, նրա բանաստեղծությունները քննել են գտել ժողովածուներում, երգարաններում, դասագրքերում: Առաջինը Գաբրիել Պատկանյանն է շարադրել Ալամդարյանի կենսագրությունը, որից մի հատված՝ «Հարություն վարդապետ Ալամդարյան» խորագրով, տպագրվել է 1863 թ. «Հյուսիս» շաբաթաթերթում²: Այստեղ նա, հին վարքագիրների նման, ներբողում է Ալամդարյանի անձը և նկարագրում նրա ողբերգական մահը:

1865 թ. «Մեղու Հայաստանի»-ում Միր. Պատկանյանը տպագրում է «Ալամդարյան Հարություն վարդապետի հիշատակը» վերնագրով հաղորդումը³: 1893 թ. Ա. Այվազյանը իր «Շար հայ կենսագրությանց» աշխատության մեջ⁴, փոքր ինչ հանգամանալից, խոսում է Ալամդարյանի կյանքի ու գործունեության մասին և ներկայացնում նրա համառոտ կենսագրությունը: Ալամդարյանի մասին 1908 թ. հոգվածով հանդես է եկել բանաստեղծ-թատերագետ Լ. Մանվելյանը և ապա առանձին գլուխ հատկացրել նրան իր «Ռուսահայ գրականության պատմությունում»⁵, փորձելով ցույց տալ նրա տեղն ու դերը հայ բանաստեղծության պատմության մեջ:

2 Տե՛ս «Հյուսիս», 1863, № 1, էջ 5—6, № 2, էջ 11—13:

3 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1865, № 25, էջ 198—203:

4 Տե՛ս Ա. Այվազյան, Շար հայ կենսագրությանց, մասն Ա, 1893, էջ 124—143:

5 Տե՛ս «Գեղարվեստ», № 2, 1908, էջ 104—107, «Ռուսահայ գրականության պատմություն», Ա, 1909, էջ 24—33:

Մեծաւաստակ հայագետ Մանուկ Աբեղյանն «Ուրվագր-
ծեր XIX դարու հայոց գրականութեան» ուսումնասիրութեան
մեջ⁶, առաջին երեսնամյակի բանաստեղծութեանը նվիրւած
բաժնում, կենսագրական ակնարկից հետո, անդրադառնում
է Ալամդարյանի բանաստեղծութեաններին՝ համարելով նը-
րան անձնական վշտի երգիչ:

Ալամդարյանի կյանքի ու գործունեութեան մասին տալա-
գրւած նյութերի բացակայութեան պատճառով կենսագիր-
ները մեծ մասամբ կրկնում են միմյանց՝ շրջանցելով նրա
կյանքի մոտկոյլան և նորնախիջեանյան տարիները:

Նշանավոր հայագետ Քերովբե Պատկանյանը (Ալամ-
դարյանի թոռ մոր կողմից) 1884 թ. Պետերբուրգում հրա-
տարակում է Ալամդարյանի բանաստեղծութեանների ժողո-
վածուն⁷: Դա Ալամդարյանի երկերի առաջին և առայժմ
միակ հրատարակութեանն է:

Ալամդարյանի Ներսիսյան դպրոցի գործունեութեան
հանգամանակից ուսումնասիրութեանն ու դնահատութեանը
տրւած են Ալ. Երիցյանի «Ամենայն հայոց կաթողիկոսութեանը
և Կովկասի հայք XIX դարում» և «Պատմութեան 75-ա-
մյա դարձեալ Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի» ստւա-
րածաւալ աշխատութեաններում⁸: Երիցյանը, առաջինը
օգտագործելով էջմիածնի արխիւը, իր աշխատութեան մեջ
համապատասխան նամակներ ու փաստաթղթեր է մեջ բե-
րում՝ Ալամդարյանի գործունեութեանը Ներսիսյան դպրո-
ցում բնութագրելով իբրև «Դար Ալամդարյանի»:

Ալամդարյանին, իրենց աշխատութեաններում անդրա-

6 Տե՛ս Մ. Աբեղյան, «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականու-
թեան պատմութեանից», «Արարատ» ամսագիր, 1909, էջ 722—723, նույնի
երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 549—621:

7 «Չափաբերականք», 1884, Պետերբուրգ:

8 Ալ. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսութեանը և Կովկասի հայք
XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, նույնի Պատմութեան 75-ամյա դո-
ւթեան Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ, հ. Ա, Թիֆլիս,
1898:

գարձել են Ե. Շահազիզը⁹, Մսեր Մազիսարոսը¹⁰, Վրթանես Փափազյանը¹¹ և ուրիշներ:

Պետք է նկատել, սակայն, որ Ալամդարյանի գրական ժառանգության շուրջ գիտական հետաքրքրություն է առաջացել մեր օրերում: Հայ գրականության պատմության դըպրոցական դասագրքերում, սկսած 1938 թ., Ալամդարյանը Թաղիադյանի հետ միասին ներկայացվում է առանձին բաժնով: 1957 թ. հրատարակվում է գրականագետ Ա. Ինճիկյանի «Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը» հոգվածը¹², ուր առաջին անգամ ամբողջական խոսք է ասվում Ալամդարյանի գրական ժառանգության վերաբերյալ:

1960 թ. «Բանբեր Մատենադարանի» № 5 ում տպագրվում է Շ. Նազարյանի «Հարություն Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները»¹³, հոգվածը, որտեղ համառոտակի ներկայացվում է Ալամդարյանի մոսկովյան տարիների գրական-մանկավարժական գործունեությունը: Նույն թվականին «Հայ նոր գրականության պատմության» առաջին հատորում տպագրվում է Ա. Ինճիկյանի «Հարություն Ալամդարյան» արժեքավոր ուսումնասիրությունը¹⁴, ուր գիտական գնահատության են ենթարկվում Ալամդարյանի բանաստեղծությունները:

Գրականագետ Ս. Սարինյանը «Հայկական ռուման-

9 Ե. Շահազիզ, Հարություն վարդապետ Ալամդարյան, «Էջմիածին», 1945, № 5, էջ 27—37:

10 Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմէոնէ մինչ ցՅովհաննէս Վ ամբ տեառն (1763—1831), 1876, ի Մոսկուա, էջ 143:

11 Վրթ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 325—327:

12 Տե՛ս Ա. Ինճիկյան, Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. դիտ., 1957, № 9, էջ 63—73:

13 Տե՛ս Շ. Նազարյան, Հարություն Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 177—197:

14 Տե՛ս Ա. Ինճիկյան, Հարություն Ալամդարյան, «Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, Երևան, 1962, էջ 290—317:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՂԱՊԵՏԻ

ՎԼԱՍՏՈՐԵԱՆՑ

ՀԱՓԱՔԵՐԱԿԱՆՁ

(ՁՆ. 1798, ՀՅԽՑ. 1834)

Խ. ԳԵՏՏԵՐԻՆԻՐԿ

ՀՂԵՐՈՆ Խ. Դ. ՄԱՍԿԻՆԻ

1888-1.

«Զափարեղականքի» անվանաթերթը

տիղմ» ծավալուն աշխատության մեջ¹⁵, անդրադառնալով Ալամդարյանին, մատնանշում է նրա տեղը՝ կլասիցիզմից-ռոմանտիզմի անցման շրջանի հայ քնարերգության մեջ:

Ալամդարյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ նոր փաստական տեղեկություններ է հաղորդում գրականագետ Պ. Հակոբյանն իր «Խաչատուր Աբովյան» ուշադրավ մենագրությունում¹⁶:

Պատմաբան Մ. Ներսիսյանն իր «Հայ-ռուս հարաբերությունների պատմության» երկրորդ հատորում¹⁷ խոսում է Ալամդարյանի և դեկաբրիստ Պուշկինի հարաբերությունների մասին: Ալամդարյանին առանձին էջ է հատկացնում նաև Ա. Իգնատյանը իր «Հաղարյան ճեմարան» աշխատության մեջ¹⁸:

Զնայած այս բոլորին, պետք է նկատել, որ մինչև այժմ հրապարակի վրա չկա Ալամդարյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ մի ամբողջական, քիչ թե շատ ընդգրքվուն ուսումնասիրություն:

Սույն աշխատությամբ, հայտնի և նորահայտ նյութերի հիման վրա, փորձել ենք ամբողջացնել Ալամդարյանի գրական դիմանկարը, ներկայացնել նրա կյանքի ու գործունեության հնարավորին չափ լիակատար պատմությունը և գրական ժառանգությունը:

15 Տե՛ս Ա. Սարխնյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 90—106:

16 Տե՛ս Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, Երևան, 1967:

17 Տե՛ս М. Персисян, Из истории русско-армянских отношений, том II, Ереван, 1961, стр. 262—265.

18 Տե՛ս Ա. Իգնատյան, Հաղարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 164—168:

A II
58387

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն


ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ
ՀԱՅԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հարուսթյուն (Գևորգ) Ալամդարյանը ծնվել է 1795 թվականի հունվարի 14-ին, Աստրախանում¹։ Ալամդարյանի նախնիները 1747 թվականին գաղթել են պատմական Հայաստանի Հեր (այժմյան՝ Խոյ) գավառից և բնակություն հաստատել պարսկական գյուղերից մեկում։ Պասը՝ Հովակիմը, ըստ հրեույթին, եղել է խանի դրոշակակիրներից մեկը, որտեղից և ծագել է նրա ազգանունը (ալամդար—դրոշակակիր)։

Ալամդարյանի հայրը՝ մաշկակար Մանուկը (Մանուկ Խաչատրյան Ալամդարյան) հմուտ, գործիմաց արհեստավորի համբավ ուներ։ Իսկ մայրը՝ մեծահարուստ աղա Մաթևոսի դուստրը, օրինակելի տանտիրուհի էր։ Նրանք ունեցել են հրեք արու զավակ. մեծը եղել է Գևորգը՝ ապագա բանաստեղծ Հարուսթյուն Ալամդարյանը։

Ալամդարյանը կրթվել, դաստիարակվել է այդ բարեպաշտ ընտանիքում։ Մանուկը նպատակադրել էր Գևորգ որ-

¹ Կենսագիրներից ոմանք Ալամդարյանի ծննդյան թվականը համարում են 1795 թվականի հունվարի 25-ը, ոմանք էլ՝ 1796 թվականի սեպտեմբերի 25-ը։ Մենք հիմք ենք ընդունել Մատենադարանում պահվող Ալամդարյանի ձեռքով լրացրած ծառայական ցուցակը, ուր նրա ծննդյան թվականը նշված է 1795 թ. հունվարի 14-ը։



դուն կուսակրոնն պարձնել: Այդ տարիներին Աստրախանի հոգևոր թեմի առաջնորդն էր Եփրեմ արքեպիսկոպոսը, որը մոտիկից ճանաչելով ու սիրելով պատանի Ալամդարյանին, որդեգրում է նրան և նրա կրթության գործը հանձնում իր փոխանորդ Ստեփանոս վարդապետ Արարատյանին: Ստեփանոսը դառնում է Ալամդարյանի առաջին ուսուցիչը: Ուսումնատենչ պատանին կարճ ժամանակամիջոցում այնպիսի ընդունակություն է դրսևորում, որ ոգևորում է իր ուսուցչին և Եփրեմ արքեպիսկոպոսին:

1808 թ. Աստրախանում բացվում է Աղաբաբյան նշանավոր դպրոցը², ուր և ընդունվում է Ալամդարյանը: 1809 թ. Եփրեմ կաթողիկոսի հրավերով Աստրախան է գալիս հռչակավոր մանկավարժ, հայկաբան, բանաստեղծ Սերովբե Պատկանյանը և ստանձնում Աղաբաբյան դպրոցի հայոց լեզվի վարժապետի պաշտոնը³: Ալամդարյանը կարճ ժամանակում դառնում է Աղաբաբյան վարժարանի սիրված աշակերտներից մեկը և իր վրա բեռնում Սերովբե վարժապետի ուշադրությունը: Ս. Պատկանյանը նկատելով Ալամդարյանի արտակարգ ընդունակություններն ու բուռն սերը դեպի ուսումնն ու գիտությունը, առանձնահատուկ հոգատարություն է ցուցաբերում նրա նկատմամբ՝ «հայրական խանդավառանք և առաւել ևս նախասիրական ջանիւք կնկրտէր մշտեկի և յառաջացնել Ալամդարեանի հանճարը և կրակ ու բոց միտքը»⁴:

² Աղաբաբյան դպրոցը հիմնվել է աստրախանցի մեծահարուստ Նիկողայոս Աղաբաբյանի ջանքերով, իր և վախճանված եղբոր՝ դպրոցին հատկացրած գրամազրիով: Դպրոցը պաշտոնապես բացվել է 1810 թ., սակայն սկսած 1808 թվականներից այնտեղ պարապմունքներ են եղել:

³ Ժամանակի մեծահամբավ հայագետ Սերովբե Պատկանյանն ուսանել է Վենետիկի սուրբ Ղազար կղզում: Պոչում ունեցել է մասնավոր պանսիոն: Լալն ճանաչում է գտել իրրե լեզվագետ, քերականագետ և բանաստեղծ: 1794 թ. տեղափոխվել է Թիֆլիս, ուր նույնպես բաց է արել մասնավոր դպրոց: Հովսեփ ԱրղուՅյան նրկայնարագուկը նրան հորջորջել է «վարժապետ հայոց»:

⁴ Տե՛ս Ա. Այվազյան, Շար հայ կենսագրությանց, Պոլիս, 1893, էջ 127:

⁴ Տե՛ս Ա. Այվազյան, Շար հայ կենսագրությանց, հ. Ա, Պոլիս, 1893, էջ 127:

էջմիածնում՝ եկեղեցական և բազում այլ գործերով ծանրաբեռնված Եփրեմ կաթողիկոսը չէր մոռանում Ալամդարյանին: Նրա համոզմամբ պատանի Գեորգին մեծ ապագա էր սպասում: Սերովբե վարժապետին ուղարկած կոնդակներում, Եփրեմը հորդորում էր նրան՝ ջանք չխնայել Ալամդարյանի կրթության գործն առաջ մղելու համար, «նրան շուտ հասցնել, ազդին պիտոյանալու»⁵: Ուշագրավ է, որ այդ կոնդակներից մեկի լուսանցքում ներսեւ Աշտարակեցին ավելացնում է, որ թեև ինքը չի ճանաչում Ալամդարյանին, բայց դատելով Եփրեմ կաթողիկոսի խոսքերից, նախազգում է, որ նա մի օր պիտի հավասարվի Հարություն Բասենցի վարդապետին, և եթե իրեն՝ Աշտարակեցուն, բախտ վիճակվի Ալամդարյանին վարդապետ ձեռնադրել, ապա նրան կտա իր հոր անունը՝ Հարություն, քանի որ բոլոր Հարություն քահանաները, այդ թվում և Բասենցին, խելոք մարդիկ են եղել ու անձնվիրաբար ծառայել են ազգին⁶:

Սակայն Ալամդարյանի ճակատագրի տնօրինության հարցում գլխավոր դերը պատկանում էր Սերովբե Պատկանյանին: «Հայոց վարժապետը», որ ուներ կյանքի ու մանկավարժական աշխատանքի մեծ փորձ, եղել էր Ավստրիայում, Իտալիայում, գիտեր մի շարք լեզուներ, և իբրև հայրենասեր բանաստեղծ և ուսուցիչ մեծ համբավ էր վայելում, աշխատում էր իր մեջ ամբարված գիտելիքները փոխանցել իր աշակերտներին: Ժամանակի նշանավոր մանկավարժը զօր ու գիշեր պարապում էր Ալամդարյանի հետ, իտալերենի առանձին դասեր տալիս նրան: Սերովբե վարժապետի հոգածությամբ Ալամդարյանը Աղաբաբյան դպրոցում ստանում է բազմակողմանի կրթություն: Նա հիմնովին

5 Տե՛ս Գ. Պատկանյան, Հարություն վարդապետ, երբեմն քահանա Ալամդարեանց, ՉՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 249:

6 Հարություն Բասենցին ուսյալ եպիսկոպոս էր, նա հավանություն ուներ Սիմեոն կաթողիկոսիչ հետո ինքը կաթողիկոսանալու, սակայն երբ ընտրվում է Ղուկասը, Բասենցին ընդմիշտ հեռանում է էջմիածնից, գնում է Տրիեստ, ուր և վախճանվում է:

սովորում է քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, աստվածաբանություն, փիլիսոփայություն, թվաբանություն, եկեղեցական պատմություն, ռուսաց քերականություն, պոեզիա, իրավագիտություն: Լարված պարսպմունքները դպրոցում և տանը՝ Սիրովբե վարժապետի մոտ, նպաստում են Ալամդարյանի մտավոր առաջադիմությանը: «Երկուստեք մթերևաց յինքն զգիտութիւնս մին ի դպրոցէն անտի, և միւս առ յառանձին պարսպմանէն իւրոյ, առ ոտս նոյնոյ մեծիմաստ վարժապետին: Սոյն օրինակ երկապատիկ աշխատութիւնք նորա, մինչ ցայն կէտ հրահանգեցին զնա, մինչև կարող եղև ընկալուլ զդպրոցական զգովանի ատեստատ»,— գրում է Հովհաննէս Քուլութեկյանը⁷:

Մինչև «վարժապետության ատեստատ» ստանալը, Ալամդարյանը Աղաբաբյան դպրոցի բարձր դասարաններում սովորելիս, միաժամանակ դասավանդում է հայոց լեզու: Այսպիսով, նա 16—17 տարեկան հասակում առաջին քայլերն է անում մանկավարժության ասպարեզում:

Աշակերտական նստարանից, միաժամանակ, պատանի Ալամդարյանի մեջ աճում, զարգանում էին հասարակական, ազգային գործչի գծերը:

Ալամդարյանը բնականից օժտված էր նաև երաժշտական ընդունակությամբ և լավ երգում էր: Նրա նախաձեռնությամբ Աղաբաբյան դպրոցում կազմակերպվում է երգչախումբ, և պատանի Գևորգը դառնում է խմբի ղեկավար: Շուտով նրա երգչախումբը համերգներով հանդես է գալիս և գրավում տեղի հայ հասարակության ուշադրությունը: Եվ ինչպե՞ս կապակցույթ էջմիածին մեկնելու առթիվ Աստրախանում կազմակերպվում է հրաժեշտի պաշտոնական հանդես: Հանդեսում Ալամդարյանի երգչախումբը ազգային հայրենասիրական երգեր է կատարում և մեծ հուզմունք պատճառում ամենքին: Այդ հանդեսից հետո, Աստրախանի հայ հասարակությունը, մանավանդ բարձրաստիճան անձինք,

⁷ ԳԱԹ, Հովհ. Քուլութեկյանի ֆոնդ, № 9:

հաճախ հրավիրում են Ալամդարյանին իր երգչախմբով մասնակից լինելու ընտանեկան տոնախմբություններին:

1813 թ. Ալամդարյանը փայլուն գնահատականներով ավարտում է Ազաբաբյան դպրոցը: Սերովբե վարժապետը նպատակահարմար է գտնում իր սիրելի աշակերտի ուժերն ի սպաս դնելու ազգային լուսավորության գործին և աշխատում է այդ ուղղությամբ: Ալամդարյանի ուսումնառության, առաջագիմության, բնածին տաղանդի ու օրինակելի վարքի մասին խոսում է ամեն տեղ խանդավառությամբ: Եփրեմ կաթողիկոսն, իր հերթին, առիթը բաց չի թողնում խոսելու այն հույսերի մասին, որ ինքը կապում էր իր որդեգրի՝ երիտասարդ Ալամդարյանի հետ: Ալամդարյանի համբավը դուրս է գալիս Աստրախանից: Սերովբե վարժապետը նրա մասին գրում է Լազարյաններին, որոնք Ալամդարյանին հրավիրում են Մոսկվա:

Ալամդարյանը 1813 թվականին, երբ նոր էր բոլորել 18 տարին, ամուսնանում է աստրախանցի Հարություն Արզազուլյանի դստեր՝ Մարգարիտի հետ⁸: Օրիորդը նշանավոր գերգաստանի դուստր էր, հայտնի էր իր զեղեցկությամբ ու սլարկեշտությամբ: Ամուսնությունից մեկ ամիս անց, Ալամդարյանն ընդունելով Լազարյանների հրավերը, մեկնում է Մոսկվա և, որոշ ժամանակ հետո, ընտանիքով հաստատվում այնտեղ:

1813 թ. դեկտեմբերին Ալամդարյանն արդեն Մոսկվայում էր: Հայտնի է, որ այդ շրջանում Լազարյաններն իրադործում էին Մոսկվայում արևելյան լեզուների մի խոշոր ուսումնական հաստատություն ստեղծելու իրենց վաղեմի

⁸ Այդ ամուսնությունից ծնվում են Ալամդարյանի երեք դուստրերը՝ Մարիամը, որը հնազապյում ամուսնանում է աստրախանցի ոմն Հովակիմ Իլյակոնովի հետ: Երկրորդ դուստրը՝ Աննան, ծնված 1817 թ. հունիսի 24-ին, նշանավոր հալագետ Քերովրե Պատկանյանի մայրն էր և կինը ավագ բահանա Տեր Պետրոս Պատկանյանի: Կրտսեր դուստրը՝ Կատարինեն, ասպրում էր Ստավրոպոլում, ամուսնացած էր Մաթևոս անունով բահանայի հետ: Ալամդարյանն ունեցել է նաև Հովսեփ անունով մի որդի, որը մահացել է փոքր հասակում: (ԳԱԲ. Քուչուրեկյանի ֆոնդ, № 9):

ծրագիրը և ուսուցչական ուժի հավաքագրում այդ նպատակի համար։ Ալամդարյանը, ընդունակ ու եռանդուն մի երիտասարդ, խիստ հարմար թեկնածու էր ազգային այդ կարևոր դործի մեջ ներգրավելու համար։ Հաշվի առնելով Ալամդարյանի քաջավարժությունը հայերեն և ռուսերեն լեզուների մեջ, կադարյանները նրան ընդունում են իրենց մոտ՝ իբրև քարտուղար, թարգմանիչ և ուսուցիչ։

Ալամդարյանը ներգրավվում է ճեմարանի հիմնադրման հետ կապված աշխատանքներում։ Նա աշխատում է մեծ ոգևորությամբ ու պարտքի խոր դիտակցությամբ՝ ձգտելով իր բոլոր ուժերով անձնվիրաբար ծառայել կադարյանների ազգաշինական գործին։ Կադարյաններն իրենց հերթին ջերմ հոգատարությամբ են շրջապատում նրան։ Ալամդարյանը կարճ ժամանակամիջոցում դառնում է կադարյանների ողջ գիրդառտանի մտերիմ և վստահելի անձը։

Ի նշան դեպի Ալամդարյանն ունեցած որդիական սիրո Հովակիմ կադարյանը Գևորգ Ալամդարյանին կոչում է Հարություն⁹։

Այսպիսով, Գևորգ դպիր Ալամդարյանը վերանվանվում է Հարություն Ալամդարյան։

1814 թ. նոյեմբերի 18-ի նամակով Ալամդարյանը վշտակցում է Հովակիմ կադարյանին նրա որդու մահվան առթիվ և իր որդիական նվիրվածությունը հավաստում նրան. «Եղո՛ւկ ճաշակեալ ի քաղցրիկն յորդիս ծնողիդ իմոյ, զգաւնաղէտ պտուղս մահառիթ թնդանողաց աշխարհաւեր թշնամւոյն—ընդհարեալ է անուշահոտ ծաղիկն ձեր ի մահուն խորշակէ, ի մանգաղէ շարին. լեա՞լ է նա կիրակուր մահազենաց նորա—եղո՛ւկ, եղո՛ւկ...

...Հայր իմ. որովհետև որդեակ ձեր սլացաւ ի ձէնջ վերձեմելով ի ծոց յաւիտենական հայրենւոյն իւրոց, զկեանս իմ

⁹ Հարություն կադարյանը Հովակիմ կադարյանի երրորդ որդին էր, ծնված 1791 թ.։ Կամավոր մասնակցում է ռուս-ֆրանսիական 1812 թվականի պատերազմին և զոհվում 1813 թ. հոկտեմբերի 4-ին, 20 տարեկան հասակում։

նուիրեմ տեառնդ, որդեգրեմ հօրդ, հպատակիմ յամենայն սրտէ, յամենայն զօրութենէ, յամենայն ակնարկութեանց ծնօղիդ հնազանդիմ, մինչ զի և զոհիլ կենօքս ի կամս վեհիդ, միմիայն, ազադակեմ, մի՛ նսեմացուցանել զլոյս բբաց աշաց խմոց և ազգի հայոց, զայն երկրպագեմ և առ վեհագնուհի կենակիցն տեառնդ, զի իւրաքանչիւր վայրկեան կենաց ձերոց զանձառելի օգուտս նուիրէ ազգի մերոց, մանաւանդ հեքոյս...»¹⁰:

Այդ օրերին, Ալամդարյանի հայրը՝ Մանուկ Ալամդարյանը, նույնպես ցավակցական նամակ է հղում Հովակիմ Լազարյանին, միաժամանակ իր անսահման երախտագիտությունն հայտնելով իր որդու նկատմամբ ցույց տված հոգատարության համար և խնդրում, որ եթե հնարավոր է, իր երկրորդ որդուն՝ Խաչատուրին ևս ընդունի Լազարյան ճեմարանը¹¹:

Ալամդարյանի և Լազարյանների փոխհարաբերությունները հետզհետե դառնում են ավելի սերտ բարեկամական-մտերմական: Ալամդարյանն առիթը բաց չի թողնում իր խորին երախտագիտությունը, սրտի խոսքը հայտնելու ազգի և իր բարերարների: Նոր տարվա, ծննդյան տոնի օրերին, նա հատուկ շնորհավորանքներ, շնորհակալական նամակներ է ուղարկում, երբեմն բանաստեղծությամբ, քնարական զեղումներով, երբեմն ազատ շարադրանքով ներբողում նրանց ազգանվեր գործը: 1814 թ. դեկտեմբերի 28-ին, Նոր տարվա առթիվ, Ալամդարյանը Հովակիմ Լազարյանին գրում է. «Ո՞չ ապաքէն արժան է ամենաջերմեռանդ որդեական ի դուրսս ամսոց, և յաւուրս նշանաւորս տարւոյ ներկայանալ առաջի

¹⁰ Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, թղթ. 104, դ. Տ, վավ. 18:

¹¹ Խաչատուր Ալամդարյանն ընդունվում է Լազարյան ճեմարան և այն ավարտելուց հետո դբադվում թարգմանություններով, որոնցից հայտնի է՝ «Չուարճախօսութիւնք հատրնոիր հաւաքեալ ի զանազան գրութոց մեծա-նուն հեղինակաց և թարգմանեալ պարզիմաց ոճով ի զուարճութիւն բանասիրաց» գործը, թարգմանված «Товарищ разумный и замысловатый» գրքից: (Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, № 1):

հօր իւրոյ, և որդիական սիրալիրութեամբ գոհանալ զնմանէ վասն բաղմակերպեան շնորհաց և գթութեանց, որովք վայիլէ նա: Արդարեւ թէպէտ եռանդն սիրոյ և ջերմեռանդութեան բորբոքի ի սրտի իմում առ ձեզ, բայց որովհետեւ եմ ես հինի ի ձէնջ այժմ, վասն այսորիկ թղթով ներկայացնալ ի սպասու ձեր, շնորհատրեմ ամենախոնարհաբար զնոր տարի և զբարի կաղանդ և զյառաջիկայ ծնունդ և մկրտութիւն կենսատուին մերոյ Յիսուսի Քրիստոսի, աղաղակելով միանգամայն առ Աստուած.

Յաւիտենից՝ Աստուած հզօր՝ ողորմութեան,
Աղբիւր շնորհաց՝ ամենառատ՝ ձիր փրկութեան...:
Հիւսք նուագաց՝ որք են պտուղ մտաց մարդկան,
Քեզ մատուցեալք՝ ջերմ բաղձանօք՝ եռանդութեան,
Որպէս զբուրումն՝ անուշ խնկոց կամ կնդրկան,
Ընկալնուս սիրով՝ և վարձատրես՝ ըստ քում
բարութեան»:

Ալամդարյանը Լազարյանների գործը համարում է մարդասիրական, ազգասիրական սխրանք, նրանց զնահատում է իբրեւ պետականությունից զուրկ, օգնության կարոտ հայ ժողովրդի կուլտուրական շինարարության ջահակիրներ:

«Ի սկզբան՝ ամիս նորոյ՝ ուրախութեան,
Օրհնեա զսլասկ՝ քաղցրութեան քո՝ անճառական,
Իմ բարերար՝ Վեհազնէի՝ Աղաղարեան,
Յովակիմայ՝ մեծ իշխանի տո՛ւր զերկար կեան:

Հիւսեալ պսակ՝ է նա զլիսոյ ազգի Հայկեան,
Ծաղկապաճոյճ՝ յոյժ երփնորակ՝ վայելչական,
Ուրեմն Աստուած՝ հանդերձ զարմօք՝ և տոհմական
Պահեա զնա՝ մշտազուարճ՝ և անսասան:

Եւ ես երբեմնապէս մտածելով զանպատում մարդասիրութեանց ձերոց՝ որովք լցուցիք զիս, և զանճառելի ազ-

գասիրութիւնէ ձերմէ քննելով, յորմէ ստիպեալ ձեր՝ որպիսի
թէ անքուն աչօք հոգեայք զբարօրութիւնէ համազգեաց ձերոց
և հայրենակցաց նուագեմ առ ձեզ.

Ո՛ւ պսակ ակնակապ՝ ցնծութիւն Հայկազանց,
Ապաւէն անսասան՝ նման քաջ մաղղեղանց,
Առ ունօղս տենչանաց՝ ի ստացուած գիտութեանց...
Միշտ զաջ քո՝ յիմ վերայ դի՛ր սիրովն գթութեանց...
Բարբառով խրախուսման՝ բերկրեցո՛ւ զծիրս մտաց»¹²:

1814 թ. կաղարջան ճեմարանի հիմնադրման և միա-
ժամանակ ուսման սկզբնավորման տարին է: Հովակիմ կա-
ղարջանը, Մոսկվայում, հայկական եկեղեցու դեմհանդիման,
1814 թ. մայիսի 25-ին հիմնում է իր ուսումնարանը: Նույն
օրերին Ալամդարյանը պատրաստում է ճեմարանի ծրագիրը՝
«Բանն վասն հիմնադրութեան ուսումնարանի»՝ բաղկացած
14 կետից:

«1. Սահմանէ զիմաստութիւնն, 2. Զօգուտ նորա, 3.
Զիսկութիւն օգտի նորա, 4. Հնարք տարածանլոյ զայն ի հա-
սարակութեան, 5. Իսկութիւն շորսին, 6. Զնախկին հեղի-
նակսն, որք ջանան տարածանիլ ի մեզ զայն, 7. Յատկա-
ցեալքն ի սերնդեան Աղաղարեանց առ աւարտումն գործոյս,
8. Հրաւէր ի ցնծութիւն զազգ հայոց. 9. Աւետիս առ նա
վասն բացման աղբեր իմաստից, 10. Թէ անտի յարիցեն ան-
ղուղական անձինք ի պիտանութիւն յիւրաքանչիւր անդամս
հասարակութեան, 11. Աւետիս առ մանկունս հայոց. 12 և 13.
Թէ յինչ պատիւ ունին վերանալ իսկագոյն ասպնջակսնք
իմաստից, 14. Մաղթանք առ հոգին սուրբ աստուած ի վար-
ձատրեալ զհեղինակս գործոյն»¹³:

Այս նախագծի իրագործման առաջին քայլը, ճեմարանի
հիմնադրման առթիվ կազմակերպված հանդեսն է. «Հրավէր
ի ցնծութեան զազգ հայոց», «Աւետիս առ նա վասն բացման

¹² Մ. Մսերյանց, Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայա-
զատաց կաղարեան տոհմի, Մոսկուա, 1856, էջ 116—117:

¹³ Մատենադարան, կաղարջան ճեմարանի արխիվ, թղթ. 104, գ. 8,
վավ. 18:

աղբեր խմաստից», «Մաղթանք առ հոգևոր սրբոյ աստուած ի վարձատրեալ զհեղինակս գործոյն» 1814 թ. մայիսի 25-ին տեղի է ունենում հանդեսը, որին մասնակցում են հայ և ռուս եկեղեցական գործիչներ, մտավորականներ, իշխանական դասի ներկայացուցիչներ, կայսերական համալսարանի դասախոսներ և այլք։ Հանդեսն սկսվում է կաղարջանների տոհմի ննջեցյալների և Հայրենական պատերազմում զոհված Հարություն կաղարջանի հիշատակին նվիրված պատարագով։ Այնուհետև հանդես է գալիս Ալամդարյանը մի ատենախոսութեամբ, որով խորապես հուզում է ունկնդիրներին։ Ապա օրհնում են ճեմարանի շինութեան հիմքը։

«Բէ ի հայոց և թէ ի ռուսաց կոչեցեալ էին թուով յիսուն արք,—գրում է Ալամդարյանը Հովակիմ կաղարջանին այդ օրվա տպավորութեան յիշատակին,— ես ըստ կամաց Ա. Ա. Առաքելովին կոչեցի զոմն ի քահանայից գաղիացոց Lameperen անուն և ղերկու ուսուցիչս յԱկադէմիայն։ Զսոսա զամենեսեան կոչեցաք թղթով, որ ունէր զայս օրինակ. «Ի տասներորդում ժամու սկսեցաք զսուրբ պատարագն ղերահանդէս իմն կերպիւ, զկնի այնորիկ եկեալ ի կեդրոն եկեղեցւոյ հանդերձ ամենայն ուխտի մանկամբք եկեղեցւոյ, սկսեցաք կատարել զպաշտամունս վասն հոգւոց համօրէն ննջեցելոց տոհմին Աղաղարեանց և մանաւանդ վասն ղերապատիւ Տէր մերոյ Յարութին Աղաղարեանց... յետ այնորիկ արձանաջայ հէքս ի տեղոջ իմիք ի բարձրաւանդակի կառուցելոյ վասն իմ և արտաբերեցի զբանն իմ, ներհդեալ ի նմա և ի ձէնճն օծեալ զբանսն, ապա սուրբ խաչիւ և այլն... և ապա սրսկեալ չուրքք մշտկաւ զհիմամբն և ժողովրդեամբն դարձաք ի տուն ի նախաճաշիկս առնել... Եւ ես ընդ երկուց աշակերտաց իմոց կանգնեալ երգէի, աղաղակելով յիւրաքանչիւր գործառութիւնս ամին և ինձ համաձայնէր ձայն բազմականին։ Զօրինակ ճառիս իմոյ երկու լեզուս գրեալ կամէի առ ձեզ մատուցանել, բայց առին յինէն, խնդրելով ի ձէնջ, հայր իմ և տէր, զի ներհսջիք, ի միւսում փօշտացի յղելոյ եմ յանյապաղ...»¹⁴։

¹⁴ Նույն տեղում, թղթ. 104, դ. 8, վավ. 34։

Մենք դիտավորութեամբ մեջ բերինք Լազարյան ճեմարանի շէնքի հիմնադրութեան առթիւ 1814 թվականի մայիսի 25-ին տեղի ունեցած այս հանդեսի մանրամասն նկարագիրը, որովհետեւ գրականութեան մեջ ուսումնարանի շէնքի հիմնադրման տարեթիւը շփոթում են ուսումնարանի բացման տարեթիւի հետ և տարբեր կարծիքներ հայտնում ուսումնարանի բացման վերաբերյալ:

Լազարյան ճեմարանի գործունեութեան շուրջ եղած գրականութեան մեջ, նրա սկզբնավորման շրջանին վերաբերող հասկացումները սեղմ են, կցկտուր: Պատմական անհրաժեշտ փաստերի բացակայութեան պատճառով, Լազարյան ճեմարանի պատմությունը շարադրող գրեթէ բոլոր հեղինակները շրջանցում են ճեմարանի 1813—1820 թթ. գործունեությունը: Նրանք բավարարվում են ճեմարանի հիմնադրման վերաբերյալ եղած պաշտոնական մի քանի հրովարտականերով և դրանց հիման վրա հետեւություններ անում: Մինչդեռ Ալամդարյանի՝ Հովակիմ Լազարյանին գրած (Մոսկվայից-Պետերբուրգ) 1813—1819 թթ. նամակները, որոնք բավականաչափ մեծ թիւ են կազմում, նոր և ուշագրավ փաստեր են պարունակում Լազարյան ճեմարանի սկզբնավորման պատմության մասին:

Ճեմարանի աշակերտներից Հովսեփ Թադևոսյանը 1953 թ. Վիեննայում հրատարակել է ստվարահատոր մի աշխատություն՝ «Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց»: Այստեղ նա օգտագործում է ճեմարանի պատմության մասին անցյալ դարից մինչև մեր օրերը հայերին և ռուսերին լեզուներով եղած գրեթէ ողջ գրականությունը, շարադրում Լազարյան ճեմարանի պատմությունը, սակայն նա ևս չի անդրադառնում ուսումնարանի 1813—1823 թթ. գործունեությանը: Ավելին. հիշատակելով Միքայիլ Սալւանթյանի և Սերովբե վարդապետի անունները, նա լռութեամբ է անցնում Ալամդարյանի կողքով: Եթէ Հ. Թադևոսյանը ծանոթ լինիր Ալամդարյանի արխիվին ու նրա գործունեությանը, անշուշտ պարզություն կ'ունենր ուսումնարանի հիմնադրման հարցի շուրջ եղած

տարակարծիքների մեջ: Նա, ի մի բերելով Լազարյան ճեմարանի հիմնադրման վերաբերյալ գրականության մեջ եղած կարծիքները, նշում է, որ ըստ պրոֆեսոր Գիդուլյանովի, ճեմարանի հիմնադրումը տեղի է ունեցել 1814 թվականին, շենքի կառուցումն ավարտվել է 1816 թվականին, ուսումնական տարին սկսվել է 1817 թվականին: Ըստ Մսերյանի, ճեմարանի հիմքը դրվել է 1814 թվականին, իսկ դասավանդումն սկսվել է 1816 թվականից: Պրոֆեսոր Զինովևի կարծիքով ճեմարանի հիմքը դրվել է 1814 թվականի մայիսի 15-ին, իսկ ուսուցումը սկսվել է 1815 թվականից և այլն: Ամփոփելով այդ հարցի շուրջ եղած կարծիքները, Հ. Թադևլոսյանը գտնում է, որ ճեմարանի հիմնադրման ժամանակը պետք է համարել 1815 թվականը¹⁵: Ալամդարյանի նամակները նոր լույս են սփռում այս հարցերի վրա: Հովակիմ Լազարյանին գրած 1814 թ. մայիսի 18-ի և 25-ի նամակներում, Ալամդարյանը խոսում է Լազարյան ճեմարանի շենքի հիմնադրման առթիվ գրած իր «Բանն վասն հիմնադրութեան ուսումնարանի» և այդ առթիվ կայացած հանգեսի մասին, իսկ 1816 թվականի հուլիսի 25-ի նամակում նա գրում է, որ հունիսի 21-ին Հովակիմ Լազարյանի հրամանով սլաշտոնապես շահագործման հանձնվեց «հայաշեն ուսումնարանը և հանրակացարանը»: Այսպիսով, հավաստի տվյալների համաձայն, Լազարյան ճեմարանի շենքը հիմնադրվել է 1814 թ. մայիսին, իսկ շահագործման հանձնվել 1816 թվականի հունիսին: Հայտնի է, որ մինչև ուսումնարանի հիմնական շենքի կառուցումը, 1814 թ. սկսած, չքավոր աշակերտներից փոքրիկ խմբեր են կազմվել, իսկ պարապմունքներն անց են կացվել առանձնատներում ու կոլեջներում:

Ալամդարյանը Մոսկվա էր եկել ոչ միայն աշխատելու, ալլև սովորելու: Նրան չէին բավարարում Աղաբաբյան դպրոցում ստացած գիտելիքները և վճռել էր կատարելագործել իր ուսումը Մոսկվայի կայսերական համալսարանում: Հովակիմ Լազարյանի միջնորդությամբ, նա 1814 թվականին

¹⁵ Տե՛ս Հ. Թադևլոսյան, Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց, Վիեննա, 1953, էջ 38:

ընդունվում է Մոսկվայի կայսերական համալսարանը, ըստ երևույթին, իբրև ազատ ունկնդիր: «...յաւուր յորում արժանաւորեցայ ընկալնուլ ի ձէնջ զհրաման վասն դասառութեան փիլիսոփայութեան, իսկոյն սկզբնաւորեցի դաս առնուլ զլօղիգայ, զնախկին մասն նորա, թէպէտ զայն ի վաղուց ուսեալ էի ի մերս բարբառ, սակայն այժմ ընդ միմեանս բաղդադմամբ լաւ ևս արծարծումք, և գտի առ Թոմա Իվանիչ Դաւիթովին զֆիզիգայ, զմեթֆիզիգայ, և զբարոյական աստուածաբանութիւն, յորս պարապիմ յաւուրն ժամ մի: Զոռոսերէն աստուածաբանութիւնն բովանդակ ուսայ, և զերկուս մասն ի մեր բարբառ վերածի՝ որոց մի մասն է եթ մնացեալ: Լատիներին Աստուածաշունչ կամ նոր կտակարան երբեք ոչ գտանի աստ»¹⁶:

Ալամդարյանն այս նամակը գրել է 1814 թվականի մարտի 23-ին: Նշանակում է հենց նույն թվականի առաջին ամիսներին նա սկսել է իր դասառնությունը կայսերական համալսարանում:

Ալամդարյանը մեծ ցանկություն ուներ՝ խորացնելու նաև լատիներենի իմացությունը: Մի քանի անգամ նա խընդրում է ֆրանսիացի լատինագետ Լամպերանի օգնությունը, բայց մերժում է ստանում: Ի վերջո, դարձյալ Հովակիմ Լազարյանի միջամտությամբ, Լամպերանը համաձայնվում է պարապել Ալամդարյանի հետ՝ շաբաթական մի քանի ժամ:

Լազարյանները նպատակահարմար են գտնում երիտասարդ Ալամդարյանի ուժերը օգտագործել միաժամանակ Մոսկվայի հայ հոգևոր համայնքի զործերում: Նրանց միջնորդությամբ, 1814 թվականի փետրվարի 1-ին, Ռուսաստանի հոգևոր թեմի առաջնորդ Հովհաննես Գառնակերյանը հայոց եկեղեցում Ալամդարյանին ձեռնադրում է քահանա:

Ալամդարյանը օժտված էր հռետորական բացառիկ ձիրքով: Նրա ճառերը, խոսքը, եկեղեցական, դպրոցական հանդեսներում, հավաքույթներում լսվում էին մեծ հետաքրքրությամբ: Այսքան բարեմասնությունների տեր մի երիտասարդ

¹⁶ Մատենադարան, Լազարյան ձեռարանի արխիվ, Թղթ. 104, գ. 8, վավ. 16:

քահանայի կարիքը բնականաբար պետք է զգար նաև Մոսկվայի հոգևոր կառավարությունը: Ուստի Ալամդարյանի բազում պարտականությունների վրա ավելանում է նաև մի նորը. 1814 թ. դեկտեմբերին նա ընտրվում է Մոսկվայի հայոց հոգևոր կառավարության անդամ: Թեև, ինչպես արվեն նկատեցինք, Ալամդարյանը եկեղեցական գործերի մեջ մըտնելու ներքին մշտն չունեի, սակայն հասկանում էր հոգևոր պաշտոնի կարևորությունը ազգի լուսավորության դործն առաջ մղելու համար, ուստի նա ստանձնում է և այդ պարտականությունը:

Ալամդարյանին ամենից առաջ զբաղում էին ուսումն ու գիտությունը, դպրոցն ու մանկավարժությունը: Նրա գլխավոր նպատակն էր լուսավորել հայազգի մանուկներին՝ «մեքաղնեայ համբակաց»:

Ալամդարյանն առանձին սիրով էր զբաղվում աշակերտների համալրման գործով: Այդ հարցը նա նախապատրաստում էր երկու պլանով: Աշակերտներ էր հավաքագրում մի կողմից դեռավարժների՝ նախապատրաստական խմբերի համար, մյուս կողմից՝ միջին դասարանների համար, որոնք արդեն պետք է ստացած լինեին որոշ աստիճանի կրթություն և ճանարան մտնեին միայն շարունակելու և ավարտելու ուսման լրիվ ընթացքը: Հետագայում այս խմբի առավել ընդունակ աշակերտներից պիտի ընտրվեին ուսուցիչներին փոխարինողներ:

Ամենադժվարին հարցերից մեկը ուսուցչական ուժերի հավաքագրումն էր: Նախապատրաստական խմբերի համար չկային համապատասխան ուսուցիչներ: Նախատեսված էր այդ խմբերի հետ պարապել հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, լատիներեն, թվաբանություն և աշխարհագրություն, բայց Ալամդարյանը դժվարանում էր այդ առարկաների համար ուսուցիչներ ապահովելու: Հովակիմ Լազարյանին գրած բաղձաթիվ նամակների մեջ, Ալամդարյանը դժգոհում է այդ առթիվ. «Վասն ուսաց լեզուի ուսուցչի գինչ և գրեալ էիք, ըստ ամենայնի խելամուտ եղէ, բայց, տէր ի՛մ, եթէ աշակերտք իմ բաւականասցին միմիայն ուսմամբ լեզուի ուսաց, այո՛,

կարեւոր բառնալ յուս իմ զաշխատանս, կրթելով զնոսա յայն լեզու ևս, բայց որովհետեւ պատճառ զալստեան նոցա յուսումնարանս մեր այն է՝ զի ուսցին զաղղիացւոց և զլատինացւոց լեզուսն, զկատարեալ թուաբանութիւն և զաշխարհագրութիւն. կարիցեն՞ ևս զայսոսիկ ևս ուսուցանել. ո՞չ ապաքէն ոչ ի միտքէ ամսույս ի հրաժարիլ ուսուցչին կամէին ցրուիլ աշակերտք իմ, բայց ի Յովակիմ մանկանէն, և կոչէին զիս երիցս յեօթնեկի զնալ ի տունս նոցա և ուսուցանել զնոսա զհայ լեզու...»¹⁷:

Ուսումնարանի առաջին տարիների աշխատանքների գծավարությունները շատ էին: Անհրաժեշտ պայմաններ չլինելու պատճառով, տարբեր քաղաքներից ու հայաշատ վայրերից հավաքված աշակերտներից շատերը ցրվում էին: Երիտասարդ մանկավարժը աշակերտների կապը ուսումնարանի հետ ամրապնդելու նպատակով ստիպված է լինում ոմանց հետ պարապմունքներ անցկացնել նրանց տներում:

Ուսումնական շենքի և հանրակացարանի հիմնական մասը կառուցվելուց հետո, գծավարություններն աստիճանաբար նվազում են: Կաղարյանների հրավերով ուսումնարան են մուտք գործում նոր ուժեր: Բացի Ալամդարյանից, առանձին խմբերի հետ պարապմունքներ են սկսում նաև Ալեքսանդր Խուդաբաշյանը, Հովակիմ կրոնավորը (հետագայում Միքայել Սալլանթյան), Սերովբե Կարնեցին և ուրիշներ:

1815 թվականին Ալամդարյանն ուներ ընդամենը 10 աշակերտ, իսկ 1816 թվականին նրանց թիվը հասնում է 30-ի: Դրանք չբավոր ընտանիքների զավակներ էին, այսպես կոչված ձրիաղարժներ, որոնք ապրում և սովորում էին Կաղարյանների հուղածությամբ:

Մեծ ոգևորությամբ է գործում երիտասարդ Ալամդարյանը: Կաղարյանների վստահությունն ու աջակցությունը կրկնապատկում են հայրենանվեր երիտասարդի եռանդը. «Անձն իմ ատեալ է ըստ ամենայնի զախտ ծուլութեանն,— գրում է Ալամդարյանը 1814 թ. նամակներից մեկում,— ըստ

¹⁷ Մատենադարան, Կաղարյան հիմարանի արխիվ, թղթ. 104, գ. 8, վավ. 42:

կարի ղակատեալ կամ յընթերցումն հոգեշահ զրուածոց, բաւականապէս թարգմանութիւնս առնեմ ի լատին լեզուէ ի ռուսաց բարբառ, իսկ ի ռուսաց լեզուէ ի մերս բարբառ. զցայգ և զցերեկ դեղերիմ թարգմանել և ողորմութեամբ ամենակալին աստուծոյ օր ըստ օրէ զնորանոր ռճից բուռն հարկանիմ՝ կրթելով հաւասարապէս որպէս զանձն իմ, սոյն գունակ և ինձ յանձնեալ զաշակերտս ի խելամտութիւնս ընթերցուածոց, ի շարագրութիւնս քաղցունս, ի վարս համեստութեան և բարեկենդանութեան՝ ըստ չափու կարողութեանս՝ պահելով միանգամայն զխրատական պատուիրանս ձեր՝ յարկեղ յիշողականութեան իմոյ, որպէս ծանրագին»¹⁸:

Այդ օրերին Ալեքսանդր Խուդաբաշչանը, որին Հովակիմ Լազարյանը հանձնարարել էր ստուգել Ալամդարյանի աշակերտների առաջագիմությունը, իր մի նամակում գրում է. «Եւ վասն տէր Յարութիւն քահանայի պարտ եմ վկայել, որ դա ջանացողութեամբ իւրով ի կրթել զմանկունս, ոչ սակաւ արդիւնաւորութիւն խոստանայ առ ապայն աղօթօգուտ ուսումնարանի ձերում: Տեսի զթարգմանութիւնս երից աշակերտաց իւրոց ի ռուսաց և ի լատին լեզուացն ի մերս բարբառ, որք յոյժ գովելիք են. ի մէջ հնդից աշակերտացն, որք են յուսումնարանի, այս երեքն բաւական յառաջացեալք են յուսմունս, որք զքերականութիւնն աւարտեալ ընթեռնուն ալժմ զճարտասանութիւնն այնքան արդեամբք, մինչ սոքա ևս ի կարճ ժամանակի կարեն օգնական լինել վարժապետացն ի ժամանակի դասասացութեան: Զայսոսիկ տեսեալ արդարեւ պարտաւորեցայ շնորհակալիլ ի տէր Յարութիւնէ, զի սորին հետեողութիւն միայն է, որ յառաջացուցեալ է զայսչափ կրթութիւն երից մանկանցն ի լեզու հայոց»¹⁹:

Ալամդարյանը մտահոգվում էր իրեն հանձնված աշակերտների ոչ միայն առաջագիմությամբ, այլև նրանց բնավորության ձևավորման, բարոյական դաստիարակության հարցերով: Նա իր նպատակն էր համարում աշակերտներին

¹⁸ Նույն տեղում, թղթ. 104, դ. 8, վավ. 33:

¹⁹ Նույն տեղում, վավ. 53:

տալու համակողմանի կրթություն, նրանց մեջ սերմանելու մարդկային բարձր հատկանիշներ:

Ինչպես նշեցինք, 1816 թ. Ալամդարյանն ուներ արդեն 30 աշակերտ, որոնց հետ պարապում էր քերականություն, աստվածաբանություն, հայոց լեզու: Նրանց առաջադիմությունը Ալամդարյանն զգում էր օրավուր և այդ մեծ հույսեր էր ներշնչում նրան. «Ըստ նախագոյն յայտարարութեանս իմում ձեզ՝ աշխիկ ևս կրկնեմ առ ձեզ ի միամտութիւն ի կողմանէ աշակերտացս ուսման վարժարանիս մերոյ, քանզի աշխիկ գտանեն առ իս կրեքտասան աշակերտք, զորս խրիստաֆոր Եկիմիշ, խոհեմազարդ իշխանորդին ձեր գիտէ յաւանէ յանուանէ՝ որք առհասարակ պարապին յերկու լեզուս, և երեկիքն ի նոցունց պարապին ի դասառնութիւնս հայոց, ռուսաց, լատինացւոց և զաղղիացւոցն լեզուաց, ևս և յուսումն թուաբանական, աշխարհագրական, պատմաբանական և այլն, զորս յուսալի է յետ իրիք միջոցի գտանել ի կատարելութեան, եթէ Տեառն յաջողեսցէ կամք»²⁰:

Մոսկվայում, հենց առաջին տարիներից, զարգանում ու կատարելագործվում էր Ալամդարյան մանկավարժն ու ուսուցիչը: Նրան ոգևորում էր իր ուսուցչի՝ Սերովբե վարժապետի բարոյական կերպարը: Վերջինս իր դաստիարակության մեթոդներով, աշակերտներին նկատմամբ ունեցած քնքուշ, հայրական վարվեցողությամբ, անջնջելի տպավորություն էր թողել Ալամդարյանի վրա: Նա ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների վերաբերյալ այլ պատկերացումներ չունէր և շարունակում էր ընթանալ իր երախտավորի գծած ճանապարհով:

«Քաղցրութիւն ուսման քաղցր եղանակաւ մատակարարել»: Այս պահանջով Ալամդարյանն ընդդիմանում էր հին սիստեմին կառչած այն մանկավարժներին, որոնց հետ ամեն օր շփվում, աշխատում էր: Դասը վարել հանդիստ եղանակով, մտերմիկ մթնոլորտում, չդիմել դաժան խստությունների, ծեծի, «Իմումս տկար կառավարութեան յանձնեալ մանկտիքն կան պարապեալ յուսմունս իւրեանց լաւ, քան զառաջինն,

²⁰ Նույն տեղում, վավ. 13:

ականունելով տիրական խնամոց ձերոց, որոց վասն խնդրիմ զոլ ըստ ամենայնի միամիտ, զի կամք իմ է զքաղցրութիւնն ուսման՝ քաղցր եղանակաւ մատակարարել նոցա, և ոչ խնստութեամբ և զանիւր հանդոյն դահճաց, քանզի այն խստութիւն որ զինէն է քարոզեալ առաջի տեառնդ՝ բացի բարուց իմոց, նա և կոշմանս իսկ իմում ոչ է վայելչական, ուրեմն այլ թշնամի արար զայն, բաղեսցուք զայն ի բաց հետամուտ բարեաց լինելով»²¹։

Միջնադարյան սխոլաստիկ կրթության ու դաստիարակության հիմնական միջոցի՝ ծեծի դեմ Ալամդարյանի այս պահանջը, մանկավարժ բանաստեղծի, առաջին հիմնական պատվիրանն էր։ Հետեւել հմլրոպացի մանկավարժներին, գործել «ըստ օրինոյ հմլրոպական վարժապետաց», շժանրաբեռնել աշակերտի միտքը, մատչելի եղանակով բացատրել նյութը, սկսել հեշտից և աստիճանաբար գնալ դեպի բարդը, քչից դեպի շատը, «փոքր առ փոքր», որպեսզի «նորաբողբոջ մանկունքն» իրենց դասը յուրացնեն արմատաւիս, դշուրությամբ։ Հարցաքննության ժամանակ Ալամդարյանը դարձյալ կարևոր դերը տալիս է ուսուցչին։ Ըստ նրա, ուսուցչի վերաբերմունքից, տրամադրությունից է կախված քննվող աշակերտի հաջողությունը։ Քննության պահին ուսուցչի խստությունը, կոպտությունը, փշրում է երեխայի հոգին, արգելափակում նրա միտքն ու լեզուն։ Նրեխան կորցնում է իրեն, մոռանում իմացածը, կարկամում։ Հովակիմ Լազարյանին գրած իր նամակներից մեկում Ալամդարյանը դառնաւիս բողոքում է Հովակիմ կրօնավորի դեմ այն բանի համար, որ վերջինս Ալամդարյանի աշակերտների գիտելիքները ստուգելու ժամանակ այն աստիճան կոպտություն ու դաժանություն է ցուցաբերել, որ նույնիսկ իր ամենաառաջադիմ աշակերտները շփոթվել են։ «...ի նորաբողբոջ աշակերտացն իմոց, ըստ օրինակի վարձկանի և ոչ անձնագիր հովուի հարցանելով որոտմամբ՝ ամիշեցոյց զնոսա, որք հազիւ կարէին խոսիլ ընդ նմա, թող թէ համարձակ պատասխանել, զորոց զշարագրու-

²¹ Նույն տեղում, թղթ. 105, գ. 11, վավ. 1։

թիւնս յղեալ եմ առ ձեզ և աստ ևս ունիմ՝ Աստուծով ի դաշն ձեր հարցէք առ ի նոցունց, որք եթէ կարկեսցին, դատապարտութեան հղէց արժանի...»²²:

Աստիճանաբար աճում է Լազարյան ճեմարանի աշակերտների թիվը: Հովակիմ և Խաչատուր Լազարյաններն իրենց առաջ հատուկ նպատակ են դնում ուսումնարանի դռները լայնորեն բացելու բուն Հայաստանից և հայաշատ այլ, հեռավոր քաղաքներից եկող աշակերտների առջև: Ուշագրավ է, որ Ալամդարյանն անձամբ հետեւում էր այդպիսի աշակերտների ուսման ընթացքին և այդ առթիվ տեղեկութուններ հաղորդում Հովակիմ Լազարյանին և Աստրախան՝ համապատասխանաբար: «Ի նմանական յաղդային այդուջ մերում փոքր առ փոքր փթթիլ սկսանին և ուշիմ մանկունքն առաքելականքն ի քաղաքիցդ»,— գրում է Ալամդարյանը Մոսկվայից Աստրախան՝ Հովհաննես արքեպիսկոպոսին, որախությամբ նշելով նրանց առաջադիմության փաստը: Լազարյանների միջավայրում Ալամդարյանը՝ ընդամենը 20—21 տարեկան մի երիտասարդ, ներկայանում է իբրև առանձնաշնորհ մի մտավորական, որի ուժերը կարելի էր ի սպաս դնել լուսավորության բարդ ու դժվարին դործի բոլոր բնագավառներում: Այդ տարիներին Մոսկվայում Լազարյանները ճեմարանին կից կազմակերպում են «Հնասիրաց ընկերություն»²³, որի նախագահն էր Հովակիմ Լազարյանը, իսկ պատվավոր անդամները՝ Խաչատուր և Նղիադար Լազարյանները: Այդ ընկերությունն իր ներկայացուցիչներն ուներ հայաշատ մի շարք քաղաքներում՝ Մոսկվայում, Թիֆլիսում, Պոլսում և այլն: Հնասիրաց ընկերությունն ուներ նաև իր գործարար անդամները: Ալամդարյանն ընտրվում է ընկերության Մոսկվայի ներկայացուցիչ: Գործարար անդամները, նախադահույթյան հանձնարարությամբ, դանազան թարգմանություններ են կատարում, որոնք լույս են տեսնում Մոսկ-

²² Նույն տեղում, վավ. 8:

²³ *Слѣд ГМОАДА* (Государственный московский областной архив древних актов), ф. 213, д. 1, л. 252.

վայի և Պետերբուրգի լրագրերում և առանձին գրքերով: Թարգմանությունների մի մասը տպագրվել է «Փյունիկ Հայաստան աշխարհի» ժողովածուում²⁴, որտեղ, անկասկած տեղ են գտել նաև Ալամդարյանի աշխատությունները: Գրական ու մեթոդական աշխատանքների, դասագրքեր կազմելու, զանազան թարգմանությունների և այլ բնույթի աշխատանքների համար, Ալամդարյանը անհրաժեշտ գրականության խիստ պակաս էր զգում: Այդ մասին նա հաճախ էր գրում Հովակիմ կաղարյանին: Վերջինս օգնում էր Ալամդարյանին՝ Պետերբուրգից ուղարկելով «պէսպէս գրեանք զանազան հեղինակաց»: «...Կալնում չիս զվտահութիւն մեծագոյն խընդրելով ի վեհանձնութենէ ձերմէ զի զխոստացեալ մատեանսն չդեսչիք առ իմս նուաստութիւն, չընթերցանութիւն և ի լուսաւորութիւն, որք են՝ պատմութիւնքն Զամչեան, երկու հատար մնացորդքն աշխարհագրութեան, վարք Մխիթարայ Աբբային և մի հատոր ևս «Зрелище мира» այն է՝ տեսարան աշխարհի, որովք մխիթարելոց եք զիս ի սիրտ և յոգի»²⁵:

Ալամդարյանը շնորհակալություն է հայտնում Հովակիմ կաղարյանին «Զհոգեպարար և զպարգես, որ են շքնազգոյնք մատեանք»՝ «Քարոզ մատեան Մասիլիոնի», «Մեթոդոլոգիա», «Բան առ քարտզից Ֆիլարեթի», «Բառգիրք ռուսաց», «Բառգիրք հայկազեան լեզուի» և այլ «գրեանք» ստանալու համար: Այդ նամակներից պարզվում է, թե ինչպիսի գրքեր են հղել Ալամդարյանի տրամադրության տակ, ի՞նչ աղբյուրներից է օգտվել նա իր մտավոր աշխատանքների ընթացքում: Հայտնի է դառնում նաև, որ Ալամդարյանն իր ձեռքի տակ ունեցել է նախապուշկինյան շրջանի գրողների և հրապարակախոսների երկերը: Նա ամենից շատ խանդավառված է եղել Կարամզինով: Սիրել է հալ միջնադարյան բանաստեղծներին, օգտվել Ներսիս Շնորհալու և Ներսիս կամբ-

24 Տե՛ս նույն տեղում: Մեզ չհաջողվեց գտնել այս ժողովածուի որևէ օրինակը:

25 Մատենադարան, կաղարյան ճեմարանի արխիվ, թղթ. 105, գ. 11, վավ. 1:

րոնացու մատենագիտական աշխատանքներից՝ նրանց անվանելով «գեղահրաշ բանաստեղծք»:

Ազգային լուսավորության գործն առաջ մղելու կարևոր խթաններից մեկը տպագրությունն էր. քաջ գիտակցելով դրա կարևորությունը, Ալամդարյանը տեղգորեն աշխատում էր նաև այդ ուղղությամբ: Հայագիտական հույժ կարևոր գործերի վերահրատարակության, ինչպես նաև ուսումնարանի ներսում պատրաստվող նոր, ինքնուրույն և թարգմանական աշխատությունները տպագրելու համար Ալամդարյանը ձեռնարկում էր կազարյան ճեմարանին կից հայկական տպարան ստեղծել: 1815 թ. հոկտեմբերին նա Հովակիմ կազարյանին գրում է. «Բաց ի մէնջ ամենայն ազգ ունին...», և որ «ի փառս ազգի և ի պարծանս ուսումնասիրաց» անհրաժեշտ է անպատճառ մտածել տպարան ստեղծելու մասին: Ալամդարյանը հայտնում է կազարյանին, որ այդ նպատակի համար շահագործված են նաև Մոսկվայի մի շաբաթ բարեպաշտոն մարդիկ և նրանք հանձն են առնում հոգալու տպարանի ծախսերը²⁶, Բանաստեղծի խաղաղ աշխատանքային կյանքը պղտորվում է, երբ կազարյանների հատուկ հրավերով Մոզդուկից Մոսկվա է տեղափոխվում Հովակիմ վարդապետը: Բանն այն է, որ վերջինս Մոսկվա էր եկել ավելի մեծ պահանջներով, քան նախատեսված էր նրա համար: Երիտասարդ Ալամդարյանի ճեմարանում և ընդհանրապես հայ և ռուս մտավորականության շրջաններում ունեցած ակնառու դերն ու կշիռը, նրա աշխատանքի արդյունավետությունը, նրա անձի հմայքն առհասարակ, շարժում են Հովակիմ կրոնավորի նախանձը: Նա Ալամդարյանին դիտում է իբրև մի մեծ խոշընդոտ՝ կանգնած իր փառքի ճանապարհին: Ալամդարյանի ինքնավստահ ու մտածված գործելակերպը, նրա ազատամտությունը դուր չեն գալիս նաև Մոսկվայի հայոց հոգևոր կառավարության մի քանի անդամների: Ձգտելով կասեցնել Ալամդարյանի հետզհետե աճող հեղինակությունը, նրանք միանում են Հովակիմ կրոնավորի հետ և ամբաս-

²⁶ Կազարյան ճեմարանի տպարանը հիմնվում է միայն 1829 թ.:

տանում Ալամդարյանին՝ Լազարյանների մոտ։ Նրանց, այսպիսով, հաջողվում է խախտել Ալամդարյանի նկատմամբ Հովակիմ և Խաչատուր Լազարյանների համակրանքն ու վրստահությունը։ «Սրբակրոն դասի» որոշ ներկայացուցիչներ, ինչպես նկարագրում է Ալամդարյանը, մոլեղնում են այն բանի համար, որ նա Լազարյանների միջնորդությամբ հատուկ քարոզներ էր կարգում հայոց եկեղեցում։ «Սրբակրոն դասը եկեղեցականաց քաղաքիս այժմ ըստ կարի զակատեալ կան զհետ վայելչական ընթացից և աստուածահաճոյ վարուց որպէս յերեկն և եռանդն ընդ որս և ժողովրդականք իսկ որ ինչ անցք անցին ընդ իս, հաւաստի եմ, թէ եղեն ի խրատ մեղաց իմոց կամ ի զգուշութիւն յապագայից շարեաց, ուրեմն ամենախոնարհաբար հայցեմ, բարերար տէր, գիտելով զիսկութիւն ասացուածոյս՝ բարեհաճեցարո՛ւք վերստին զբարգաւաճեալ տունկս ձեօք՝ շնորհազեղութեամբ ձերով յառաւել մեծ, արգասաւոր և ի վայելչագոյն ծառ փոխարկել»²⁷։

Պայքարը Ալամդարյանի դեմ տարվում էր մտածված ձևով, երկու ուղղությամբ՝ մի կողմից տեղի եկեղեցականների, մյուս կողմից ուսումնարանի ներսում՝ Հովակիմ կրոնավորի գլխավորությամբ։ Ալամդարյանը ստիպված է լինում այս ամենի մասին գրել Հովակիմ Լազարյանին, բացատրել, թե որքան անհիմն են նրանց մեղադրանքները, կրկնում իր հավատարմության երդումը և թախանձագին խնդրում՝ չհավատալ այդ զրպարտիչներին. «Միայն թէ մի՛ ամենեցուն զրպարտանաց տալցէ զտեղի ի մասին իմ»։

Ալամդարյանին պակաս գլխացավոնք չի պատճառում նաև եկեղեցական կառավարության անդամ լինելու հանդամանքը։ Նա Լազարյանների հանձնարարությամբ պիտք է գործնական մասնակցություն ունենար երեցփոխի ընտրություններին։ Նրա բաղմամբիւ նամակներից հայտնի է դառնում, թե ինչպիսի պառակտություններ ու հակասություններ գոյություն ունեին եկեղեցական խորհրդի ներսում։ Նա կա-

²⁷ Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, Թղթ. 104, գ. 8, վավ. 42։

զարյաններից հանձնարարություն է ստանում նախկին երեց-
փոխի փոխարեն (Գրիգորի Պետրովիչ Մորոզովի) երեցփոխ
ընտրել Մատվեյ Պավլովիչին, մինչդեռ վերջինս ընտրության
օրերին սխալ տեղեկությունների ստանալով, կարծում է, թե
Ալամդարյանն իր դեմ է դործում։ Այս և նման թյուրիմացու-
թյունները, ճիշտ է, ի վերջո հարթվում են, և Ալամդարյանին
հաջողվում է վերականգնել խաղաղությունը, հակառակորդ-
ները ներում են խնդրում, սակայն քիչ հուզմունք ու տառա-
պանք չեն պատճառում նրան։

Այսուամենայնիվ, Ալամդարյանի առաջին և ամենամեծ
հակառակորդը մնում է Հովակիմ կրոնավորը։ Ալամդարյա-
նի հաջողությունները ամենից առավել նրա մաղձն էին շար-
ժում, և նա գաղտնի, թե բացահայտ, պալքարում էր՝ ձգտե-
լով ինչ գնով էլ լինի՝ փակել նրա առջև կաղարյանների բաց
դռները։ Այդ կրոնավորը, որ պաշտոնապես հրաժարվել էր
կաթոլիկական դավանանքից և լուսավորչականություն ըն-
դունելով, դարձել էր Միքայել Սալլահյան, տանել չէր կա-
րող Ալամդարյանի հետևողական ազատամտությունը... Առա-
ջագիծ գործչի համար չկար հեթանոս կամ քրիստոնյա,
ուղղափառ կամ կաթոլիկ, նա առաջին հերթին գնահատում
էր մարդուն, նրա գործը, այդ գործի հասարակական դերն ու
նշանակությունը։ «...Ձի վասն իմ ըստ օրինի քրիստոնէու-
թեանս չիմ խաիւր ո՛չ հրէի, և ո՛չ հեթանոսի, և ո՛չ առ ուղղա-
փառ քրիստոնէի, բարին այնպէս անբաժան է ի բարեսի-
ւաց,— գրում է հումանիստ բանաստեղծը,— որպէս ստուերն
առ ի մարմնոյ»²⁸։ (Այս և հետագա ընդգծումները մերն են
—Է. Գ.)։

Ալամդարյանի ազատամտությունը խախտում էր կրո-
նական տարբեր դավանանքների միջև եղած սահմանները և
հենց այս էր, որ ամենից առաջ դայրացնում էր Հովակիմ
կրոնավորին։ Կաղարյանների առջև ձևանալով իբրև Հայաս-
տանյաց եկեղեցու դադափարների ջահակիր, նա չէր կարո-
ղանում թաքցնել իր ատելությունը լուսավորչական Ալամ-

²⁸ Նույն տեղում, թղթ. 105, գ. 11, վավ. 10,

դարյանի նկատմամբ: Նամակներով, թե անձնական հանդիպումների ժամանակ, Հովակիմ վարդապետն առիթը բաց չէր թողնում ներկայացնելու իրեն որպես մեծահոգի, վեհանձն ազգային գործչի, իսկ Ալամդարյանին՝ խառնակչի և բանասերի:

«...Ի սակս տէր Յարութիւն քահանայի, զոր յանձնէք մեզ, յայտ առնեմք, զի հանդէս վարուց նորա և զապերախտութիւն առ ուսուցիչ իւր Սերովբէ վարժապետն յԱժտարխան, և զպէս-պէս անցս նորա, որ աստ, և որ յԱժտարխան ընդ ժողովուրդն և ընդ Մանուէլ վարդապետն, ալլովքն հանդերձ, թէպէտ կանխաւ լուեալ էաք ի Մօղդոք քաղաքի, ուր ի փողոցս ի բերանս ռամկաց քարոզեալ լինէին այդպիսի առաքինութիւնք նորա, սակայն մեք ի գալստեան աստ իբրու զսիրելի հղբայր ընկալաք զնա ամենայն պատուով... րստ որում քաջ դիտեմք, թէ որչափ դիտութիւն ունի, սակայն ի վերայ այսր ամենայնի շարժեալ յանսանձ բռնութենէ կրից իւրոց՝ այժմէն սկսեալ է վատահամբաւել զմեզ ի տունս, ասելով թէ տգէտ ոմն է սա, թէ՛ ոչ ունի զգիտութիւն որչափ համբաւն հնչէ և թէ հս առաւել դիտութիւն ունիմ և իմաստուն հմ, քան զմա, և թէ աղայ Յովակիմն ոչ ճանաչէ զգիտունն ու զտգէտն և զայլ սոյնօրինակ անկարգութիւն բազումս զրպարտեալ է զմէնջ...»²⁹:

Այս պարսավագիրը կատարում է իր դերը: Մոսկվայում ապրող Խաչատուր Լազարյանն սկսում է թերահավատորեն վերաբերվել Ալամդարյանին և Հովակիմ կրօնավորի ու Ալամդարյանի միջև եղած անախորժությունների մասին գրում է հորը՝ Հովակիմ Լազարյանին, ի վնաս Ալամդարյանի: Հովակիմ Լազարյանը, հավատ ընծայելով որդու գրածին, Պետերբուրգից կարգադրում է. «Հայր Յովակիմ վարդապետին կացուցանել ուսուցիչ հայոց և լատին լեզուաց, ուսուցանելով և կրթելով զմանկտիս հրկուց լեզուաց զքերականութիւն, զճարտասանութիւն՝ զտրամաբանութիւն, ապա առաջ ընթանալով, զպատմութիւն և զաշխարհագրութիւն, և ոմանց, զկնի վերոյիշեալ հմտութեանց, զաստուածաբանութիւն:

²⁹ ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ, № 455:

Տէր Յարութիւն քահանային մերոյ կացուցանել ի օգնութիւն յիշեալ վարդապետին իբրև երկրորդ ուսուցիչ հայոց և ուսաց լեզուաց, որ մանկտեացն կրթեսցէ ի քերականութեան, ճարտասանութեան և տրամաբանութեան, հայոց և ուսաց լեզուաց, որպէս որ հայր Յովակիմ վարդապետն և քահանայն ըստ խորհրդոց իւրեանց բարի գործեն և լաւապէս կարգաւորեսցեն»³⁰:

Այս կարգադրությունները փոխում են ամեն ինչ. Հովակիմ կրօնավորը հասնում է իր նպատակին: Ալամդարյանը շարունակում է դասավանդել հայոց և ուսաց լեզուներ և դառնում նրա օգնականը, բայց Հովակիմ վարդապետը դրանով էլ չի բավարարվում: Նա շարունակում է իր դարանակալ սլաքարը և համոզում կաղարջաններին՝ ճեմարանի տնտեսի պարտականությունները ևս պաշտոնապես Ալամդարյանին հանձնելու: Նա դրանով նպատակ ունի Ալամդարյանի ուշադրությունը շեղելու գիտա-մանկավարժական, ուսումնակրթական գործերից: Ավելի առաջ գնալով, գործակցելով տեղի հտադեմ ուժերի հետ, Հովակիմ կրօնավորը կեղծում է Ալամդարյանի գրագրությունները, ամեն բան թյուր ու շրջված ներկայացնում կաղարջաններին: Այս ճանապարհով նա և իր կուսակիցները հասնում են իրենց վերջնական նպատակին: Հովակիմ կաղարջանը 1816 թ. հունիսի 19-ին, պատասխանելով իր որդու նամակին, գրում է. «...Ինչպես ես տեսնում եմ, Հարություն քահանան, իր անմտության պատճառով, նրա (իմա Հովակիմ կրօնավոր) և մյուսների հետ վեճի է բռնվում և ինձ դատարկություններ է գրում: Պետք է նրան խելք սովորեցնել, որպեսզի նախանձն ու հիմարությունները թողնի և շխանդարի մեր սկսած գործին: Հովակիմ վարդապետին ասել, որ մենք նրա հետ հանդիպում կունենանք»³¹:

կաղարջանները գրիթի երես են դարձնում Ալամդարյան-

30 Մատենադարան, կաղարջան ճեմարանի արխիվ, թղթ. 102, գ. 17, վավ. 76:

31 Նույն տեղում, վավ. 83a:

նից, գնալով սահմանափակում նրա իրավունքները, կրճատում նրա աշխատավարձը: Ալամդարյանը երկար ժամանակ աշխատում է գրեթե անվճար: Նյութական ծանր վիճակը թելադրում է նրան խնդրել կադարյաններին նշանակելու տարեկան գոնե 500 ռ. աշխատավարձ՝ ոչինչ չպահանջելով «առաջին հումեայ աշխատանքի համար»: Կադարյանները, սակայն, անհետևանք են թողնում Ալամդարյանի խնդիրը: Վերջինս դիմում է Հովհաննես արքեպիսկոպոսին՝ ներկայացնելով իր ծանր վիճակը. «Այլազգի վարժապետը զեռապատիկ աւելի, քան զխնդրեալս ստանան,— գրում է նա,— և յաւուրն երեք ժամս ուսուցանին և այն՝ երիցս ի շաբաթուան, որ լինին ընդ բովանդակ շաբաթն 12 ժամը, քայց ես զցայդ և զցերեկ տքնիմ ի վարժարանին, զոր ինքեանք ևս տեսանին»³²:

Սակայն Ալամդարյանի խնդրանքը մնում է ձայն բարբառոյ յանապատի: Ավելին. բանն այնտեղ է հասնում, որ Հովակիմ կադարյանը ոչ միայն չի բավարարում բանաստեղծի արգարացի պահանջը, այլև կարգադրում է իր որդիներին՝ փակել Ալամդարյանի և նրա աշակերտների մուտքը ուսումնարանի նոր շենքը՝ նրա համար տեղ տաանձնացնելով փոքրիկ մասնաշենքում: Ալամդարյանն ընկնում է անհլանելի դրուժյան մեջ: Բողոքել կադարյանների դեմ, դա ոչ միայն անախտոժ, ծանր էր նրա համար, այլև կարող էր դիտվել որպես հանդգնություն, քայց լուել, նշանակում էր մեղանշել ճշմարտության դեմ և դառնալ թյուրիմացությունների ու խարդավանքների զոհ: Այս մտքի հետ դժվար էր հաշտվել Ալամդարյանի նման ուղղամիտ մարդու համար: Եվ ահա, հրելցվում է համբերության բաժակը, երբ այլևս նրա համար լռությունը կատարյալ մահ էր, նա գրիչ է վերցնում և իր ծանր վիճակի մասին հակիրճ տեղեկացնում Աստրախանի հոգևոր թեմի առաջնորդին: Ալամդարյանին վշտացրել էր հատկապես Խաչատուր կադարյանի վարմունքը, որն անվերապահ ճշմարտության տեղ ընդունելով Հովակիմ կրոնավո-

³² Նույն տեղում, թղթ. 105, գ. 7, վավ. 15:

րի բարբառանքները, փոխել էր նաև հոր՝ Հովակիմ Լազար-
յանի վերաբերմունքն իր նկատմամբ: Ահա թի ինչ է գրում
Ալամդարյանն այդ առթիվ հոգևոր թեմի առաջնորդին ուղղղ-
ված իր բողոքագրում. «Խաչիկ աղան սկսեաց մեծամեծս
պարսաւել զիս, և ասել թէ՝ հիթէ ոչ հաճեսցիս ձրի ծառայիլ
վարժարանի մերում, զրեցից առ հայրն, զի խնդրեսցէ ի
սրբազանէն արտաքսիլ զքեզ ի քաղաքէս, որում և պատաս-
խանեսցի, թէ՝ այդ յանցանք չէ վասն իմ, զի ևս ձրի ոչ կա-
րեմ ուսուցանել... օրըստօրէ յաճախեն պարտք իմ... և ի
բաղմատեսակ մտատանջութեանց, ի նորափթիթ հասակի
իմում սպիտակին հերքս գլխոյս և թանգութիւն այնպէս է
բռնակալեալ ի քաղաքիս, զի ոռճիկ և արդիւնք հկեղեցւոյն
ոչ բաւական լինին մեզ...»³³:

Անբարենպաստ վիճակին դումարւում են նաև ընտանե-
կան օրավուր աճող հոգսերը: Մոսկվայում են ծնւում ու մե-
ծանում նրա դուստրերը, պետք էր հոգալ ընտանիքի կարիք-
ները: Անխոնջ մանկավարժը, ինչպես նկատեցինք, աշ-
խատում էր դրեթն անվճար, ապրում օրապահիկով: Նրա
պարտքերը գնալով աճում էին... Այդ ծանր օրերին հար-
կադրված է լինում դիմելու Նոր Նախիջևան՝ Հարություն Խա-
լիպյանի օգնությանը. «Աղաչեմ զձեզ սիրով զգրամ վաճա-
ռեալ մատենիցն փութանակի յղել առ իս փօստով, զի և ինձ
պարտ է վճարել զպարտս տալին գրոցս և զմնացեալսն ե՞րբ
և վճոհսջիք, յայնժամ և յլիսսջիք. ձեզ քաջայայտ է՝ զի ես չիմ
ի դասակարգի ընչավէտ անձանց, վասնորոյ և ի սակա-
գրուածոցս զայլս կշռադատեալ՝ աճապարհսջի՞ք ի խնդրոյս
կատարումն...»³⁴:

Լազարյանները, հատկապէս Խաչատուր աղան, լսելով
այս մասին, վրդովւում է ծայրաստիճան, անվանելով Ալամ-
դարյանին «հանդուկն», «անհնազանդ»: Նա հոգևոր առաջ-
նորդի հետ համաձայնեցնում է Ալամդարյանին Մոսկվայից
հեռացնելու հարցը և այդ մասին գրում իր հորը:

33 ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ, № 455:

34 ԳԱԹ, Ե. Շահադիզի ֆոնդ, բաժ. 7, վավ. 61,

Հովակիմ Լազարյանը Պետերբուրգից իր որդիներին պատասխանում է. «Հարուժյուն քահանայի՝ ձեր նկարագրած վարքագիծը, ինձ զայրացնում է, և նա, անարժանը, մոռանալով իմ բոլոր բարերարությունները և քարոզները, ինձանից ոչ մի տող չի ստանա, մինչև ձեզնից չիմանամ, որ դարձել է ուղիղ ճանապարհի»³⁵:

Այլ էր Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի կարծիքը: Ըստ նրա «...ի բոլոր Ռուսիայ ի մէջ ազգի մերում այնպիսի քահանայ զժուարաւ գտանի»³⁶:

Պետք է նկատել միաժամանակ, որ թեև պահպանողական անձինք ամբաստանելով Ալամդարյանին, հասնում են որոշակի հաջողությունների, այնուամենայնիվ Հովակիմ Լազարյանի համակրանքը մնում է Ալամդարյանի կողմը: Այս հարցում մեծ դեր են խաղում Հովհաննես արքեպիսկոպոսը, Ներսիս Աշտարակեցին, Նիքիմ կաթողիկոսը և ուրիշներ: Հովակիմ Լազարյանը կռահում է բանի էությունը և դարձյալ հայրական խորհուրդներով ու քնքշությամբ վերաբերվում Ալամդարյանին: Այս բանին նպաստում է նաև Մոսկվա ժամանած գիտնական Սերովբե Կարնեցին: Ալամդարյանը լավ գիտեր Կարնեցուն և ուրախ էր նրա հետ աշխատելու համար: 1816 թվականի հուլիսի 24-ի նամակում 'տեղեկացնում է Հովակիմ Լազարյանին Սերովբե վարդապետի ժամանման մասին. «Բարձր արժանապատիւ Սերովբէ վարդապետն,— գրում է նա,— ի գալն իւր առ մեզ և ի կարգադրելն ղդործս ուսումնարանիս՝ աստուածային տնօրէնութեամբն յուսամբք այնպիս կարգաւորել զամենայն իրականութիւնսն, զի անուամբ և արդեամբք մերս այս ուսումնարան յամենայն կողմանց առ ինքն հրաւիրէսցէ զգաստ մերազին մանկանց»³⁷:

35 Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, թղթ. 105, գ. 17, վավ. 83:

36 Ըստ Վ. Իլյուչանի, Լազարյանների հասարակական քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 209:

37 Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, թղթ. 105, վավ. 13:

Հովակիմ Լաղարյանին դրած մի այլ նամակում, Ալամդարյանը բարձր գնահատելով Սերովբե վարդապետի անձնավորությունը, իր համոզմունքն է հայտնում, որ նրա դալով ալեի լավ հիմքերի վրա կդրվի հայազգի ղավակների ուսման ու կրթության գործը:

Սերովբե գիտնականի տեսչության շրջանում Ալամդարյանի վիճակը բարելավվում է: Պղտոր ջրերը պարզվում են: Հովակիմ կրոնավորը զգալով, որ այլևս չի կարող իր խարդավանքները շարունակել հրաժարական է տալիս ու հեռանում ճեմարանից: «Ես կամ էի լինել և ունիլ աւելի, քան զՍերովբէ վարդապետն, դուք ընդհակառակն կամեցայք պահել զիս պակաս, քան զնա» — գրում է նա Լաղարյաններին³⁸:

Հետագա տարիներին թեև Ալամդարյանը խաղաղ ու անվերդով աշխատում էր, սակայն տարբեր տեղերից ստացվող խնդրագրերը Լաղարյաններին՝ Ալամդարյանին իրենց մոտ ուղարկելու մասին, փոխում են նրա մտադրությունը: 1821 թվականի մայիսի 26-ի հրամանով Ալամդարյանն աղատվում է ճեմարանից և մեկնում Աստրախան, ըստ երեույթին այնտեղ հաստատվելու մտադրությամբ: Սակայն կնոջ անակրեկալ մահը փոխում է նրա ծրագրերը:

Լսելով իր սանի դալստյան լուրը, Սերովբե վարժապետը գնում է նրան ընդառաջ: Ժամանակակիցները պատմում են, թե որքան սրտառու է եղել նրանց հանդիպումը: Ալամդարյանը, սակայն, դեռ չէր ծրագրել իր անելիքը: 1821 թ. օգոստոսի 12-ին վախճանվում է կինը. անդառնալի կորուստը ցնցում է Ալամդարյանին: Սիրած կնոջ՝ Մարգարիտի մահը խորը հուսահատության մեջ է ձգում նրան: Ալամդարյանն այդ օրից սկսած իր բոլոր նամակների ու պաշտոնական գրությունների տակ ստորագրում է՝ թշվառական քահանա Հարություն Ալամդարյան:

Մոսկվայի հայոց եկեղեցական մատյանի մեջ Ալամդարյանն իր ձեռքով արձանագրել է. «Թշուառական Յարութին քահանայի կինն՝ Մարգարիտ Յարութինեան ի տանէն Ար-

³⁸ Նույն տեղում, թղթ. 105, գ. 11, վավ. 73:

դակ/ւելանց, վախճանուեցաւ 24 ամաց»։ Օգոստոսի 12, 1821 թվական³⁹։

Ալամդարյանն կնոջ տապանաքարի վրա փորագրել է տվել հետեյալ սրտառուշ տողերը.

Զէ՛ այդ առագաստ մերոց հարսանեաց,
Ե՛լ անտի, ե՛լ, լոյս, ե՛լ կյանք իմ կենաց,
Եթե բնութեան սարսափս յօրինեաց,
Զիս ընկալ առ քեզ յայդ գուր մթազգած⁴⁰։

Ալամդարյանն այլևս ոչինչ չունիւ Մոսկվայում։ Ծանր վիշտը սրտում, մտատանջ, հուսաբեկ, նա իր որբ դուստրի ի հետ վերադառնում է Աստրախան։ «Այս աչն, 1821 թվականի եկած տեւր Հարությունը շէր, նոր անձն, սգալորված, սեւա-վորված, անմխիթար, անսփոփ, աշխարհն ուրացած, մարմինը մեռած... և հրեք արտասուքը աչքեն շէր ցամաքի,— գրում է Գաբրիել Պատկանյանը⁴¹։

Այդ օրերին Ալամդարյանը միայն Սերովբե վարժապետի մոտ էր գտնում իր մխիթարությունը։ Պատկառելի, ազնվասիրտ վարժապետը շարունակում էր նրան սիրել հայրաբար, բաժանել նրա վիշտը։ Վարժապետը անում էր ամեն բան, որ հեռացներ Ալամդարյանից հուսահատությունը։ Նա Ալամդարյանի համար հայրենասիրական երգեր էր երգում, որպեսզի ցրվեին նրա մուսլ մտքերը։ Ուշագրավ է, որ Սերովբե վարժապետը երգում էր հատկապես Բաղդասար դպիրի «Ի ննջմանէդ արքայական», «Հերիք ողբաս գոչէս, լաս և հառաչես», «Սիրաւդ, սիրաւդ եղէ սիրահար» երգերը։

Մոսկովյան տարիները վճռական դեր կատարեցին Ալամդարյանի կյանքում։ Այստեղ էր, որ ձևավորվեց ման-

39 «Փարոս Հայաստանի», 1880, տետր Ա, էջ 22—23։

40 «Մեղու Հայաստանի», 1865, № 25։

41 Գ. Պատկանյան, Հարություն վարդապետ, երբեմն քահանա Ալամդարեանց, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 249։

կալարժ, թարգմանիչ, բանաստեղծ Ալամդարյանը: Մոսկվան հնարավորություն ընձեռեց նրան մոտիկից ծանոթանալու եվրոպական և ուսական առաջավոր մտքի նվաճումներին, հմտանալու ուսերենին, սովորելու լատիներեն, ֆրանսերեն: Նա ի մոտո ծանոթացավ ուսական և եվրոպական գրականությանը, խորացրեց գիտելիքները փիլիսոփայության, տրամաբանության մեջ և, վերջապես, մոսկովյան տարիներին հաստենացավ հայ ազգային լուսավորության, գիտության ու գրականության նշանավոր գործիչ Ալամդարյանը:

Դժբախտաբար, քիչ տվյալներ կան Ալամդարյանի կյանքի մոսկովյան ժամանակաշրջանի գրական գործունեության վերաբերյալ: Անշուշտ, կադարյան ճեմարանի հետ կապված բազմատեսակ հոգսերը, անձնական կյանքի անհաջողությունները, թույլ չեն տվել նրան կենտրոնացնելու իր ուժերը գրական ստեղծագործական աշխատանքի վրա:

Ալամդարյանն իր ժամանակի մի ղզալի մասը գործադրում էր թարգմանությունների վրա, որոնք հանձնարարում էին կադարյանները: Նրա նամակագրությունից երևում է, թե որքան շատ են հղել նման հանձնարարությունները: Ալամդարյանը թարգմանել է ուսերենից հայերեն, հայերենից ուսերեն, ինչպես նաև լատիներենից հայերեն և ուսերեն՝ կրոնական, բարոյական, եկեղեցական բազմաթիվ երկեր, օրենքներ, կանոններ, քարոզներ, որոնց ղզալի մասը մեզ չեն հասել:

«Շնորհակալ եմ մեծապէս, զի դուք խոստանայք կատարել ղխնդէրս իմ, թէ յաղագս նորոց կտակարանաց, թէ վասն քարոզից, և թէ յաղագս եղբօր իմոյ (խոսքը Մոսկվայում խաչատուրին գործի ղնելու մասին է),—գրում է Ալամդարյանը Հովակիմ կադարյանին,— ըստ կարի ղակատեալ կամ յրնթերցումն հոգեշահ գրուածոց, բաւականապէս թարգմանութիւնս առնեմ ի լատին լեզուէ ի ուսաց բարբառ, իսկ ի ուսաց լեզուէ ի մերս բարբառ...»⁴²:

⁴² Մառենադարան, կադարյան ճեմարանի արխիվ, թղթ. 104, գ. 8, վավ. 32:

Մի այլ նամակում նա հիշեցնում է, որ «զուտաբերեն աստուածաբանութիւն բովանդակ ուսայ, և զերկուս մասն ի մեր բարբառ վերածի, որոյ մի մասն է հիթ մնացեալ: Լատիններն Աստուածաշունչ կամ նոր կտակարան հրեք ոչ գտանի աստ»⁴³, «...Պատճառ մինչ ցարդ լռելոյս և պատասխանադրութենէս,— գրում է Ալամդարյանը Հովհաննէս արքեպիսկոպոսին,— ո՛չ այլ ինչ է, հիթ է ոչ բազմադիմի զբաղմունք, ընդ որս և ինչ ինչ առանձին յանձնարարութիւնք վեհազնեայ իշխանապետին հայոց տեառն Յովակիմայ Նղիադարեանց, ի պատճառս թարգմանութեանց ի մերս լեզուէ ի ռուսաց բարբառ եկեղեցական գրուածոց ոմանց, յորոց սակի է և հոգեկեցոյց կտակ կամ հանդիստ երանելոյն Յովհաննու աւետարանչի, թէպէտև առանց ի ձեռս ունելոյս զլուսաբան բացատրութիւն ի քաջաբառ սղփիս, Լամբրոնացւոյն ասեմ սրբոյ հայրապետին Ներսիսի, ոճք ինչ առգաղեալք խրթնածածուկ առագաստիւ ալաբանութեան և շրջախօսութեան ոչ ըստ ըղծից զղեցան զիրիանցն զիսկաքանչ կատարելութիւն»⁴⁴:

Ալամդարյանի թարգմանական աշխատանքի մեջ ամենաուշագրավը Ռաֆայել Դանիբեգյանցի «Ճանապարհորդությունն...» է: Բանասիրությանը հայտնի է, որ վրաց պալատական հայազգի իշխան Ռաֆայել Դանիբեգյանցի «Ճանապարհորդություն դեպի Հնդկաստան» գիրքը (տպագրված Մոսկվայում, 1815 թվականին) թարգմանվել և հրատարակության է պատրաստվել Ալամդարյանի ջանքերով: Ռաֆայել Դանիբեգյանցը գրքի նախաբանում գրում է. «1795 թվին, մարտի 15-ին, վրաց էրեկլե թագավորի հանձնարարությամբ մեկնեցի Հնդկաստան հետևյալ հանգամանքների կապակցությամբ: Մագրասում ապրում էր մի հարուստ հայ, որը տարեցտարի էրեկլիին ընծաներ էր ուղարկում: Ի հատուցումն նրա, թագավորը շնորհեց նրան մեծ գյուղ Լոսին և կալքագիրն իմ միջոցով ուղարկեց նրան: Հասնելով Մագրաս, ես այն հային կենդանի չգտա: Նա իմ դալուց մի տարի առաջ

⁴³ Նույն տեղում, գ. 8, վավ. 16:

⁴⁴ Մատենադարան, Կաթ. դիվան, Բղթ. 32, վավ. 49:

մեռել էր, հիշյալ կայքագիրը ևս հանձնեցի նրա որդուն, որն այն պահին Մադրասում էր գտնվում»⁴⁵:

Դանիբեգյանցի այս տողերից, ինչպես իրավամբ նկատում է վաստակաշատ բանասեր Մելիքսեթ-Ֆեկը, երևում է, որ Հերակլ թագավորը Ռաֆայել Դանիբեգյանցին ուղարկել էր Հնդկաստան՝ հնդկահայ նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանին հանձնելու կայքագիրը և նրան մահացած գտնելով, այն հանձնել է նրա որդուն՝ Հակոբ Շահամիրյանին: Վերադառնալուց հետո Ռ. Դանիբեգյանցը իր ուղևորության տպավորությունները հրատարակում է առանձին գրքով: Մատենադարանում պահվող արխիվային որոշ փաստաթղթեր բավական լույս են սփռում այս հարցի վրա: Պարզվում է, որ Հովակիմ Լազարյանը 1814 թվականի, հավանաբար, սկզբներին, Ալամդարյանին հանձնարարում է թարգմանելու Ռաֆայել Դանիբեգյանցի «Ճանապարհորդությունը»: Ալամդարյանը մեծ աշխատանք է կատարում վրաց պալատականի ճանապարհորդական գրառումները ոչ միայն թարգմանելու, այլև կարգի բերելու համար:

«...Ի սկզբան ներկայ ամսոյս աւարտեցի բաղմապատիկ տարժամամբ զթարգմանութիւն ճանապարհորդութեան Ռաֆայելի Դինբեկեանց: Թէ որքան էին ի նմայն կուտակութիւնք անյարիր բանագրութեանց, կամ լաւ ևս ասիլ ի զրուցաց ընկալիս ճառից, չիք հնար ընդ գրով սահմանի փակել: Գոհութիւն մեծ մերոցն և այլազանցն աշխարհագրաց, որոց օգնականութեամբ զբարիսն ժողովեալ ի փունճ մի՝ զխոտանն ի բաց մերժեցաք ըստ կարի», — գրում է Ալամդարյանը Հովակիմ Լազարյանին⁴⁶:

Լազարյանները ծանոթ են եղել ոչ միայն Ռաֆայելին, այլև նրա հորը՝ Հովսեփ Դանիբեգյանցին: 1815 թվականի հունվարին Նիդրեմ կաթողիկոսը էջմիածնից հատուկ կոնդա-

45 Մելիքսեթ-Ֆեկ, Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, մասն Գ, Երևան, 1953, էջ 212:

46 Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, թղթ. 104, գ. 8, վավ. 37:

կով խնդրում է կազարյաններին՝ անհրաժեշտ օգնություն ցույց տալու Դանիբեգյանցներին⁴⁷։

Վրաց պալատական իշխանի գրքի վրա կազարյանները նպատակահարմար չեն դաել նշելու երիտասարդ թարգմանչի անունը և նշել են միայն, որ թարգմանությունը կատարվել է վրացերենից։ «Ճանապարհորդություն» թարգմանություն հանգամանքներին ծանոթ չլինելով, վրաց արդի գրականագետները, մի քանի անգամ վերահրատարակելով Ռ. Դանիբեգյանցի գիրքը, շեշտում են, որ բնագիրը չի պահպանվել, իսկ ռուսերեն թարգմանությունը կատարվել է վրացերենից⁴⁸։ Այդ գրքում պատմական շատ արժեքավոր տեղեկություններ կան Հայաստանի և հայաբնակ մի շարք քաղաքների (Ախալցխա, էրզրում, Մուշ, Դիարբեքիր, Բաղդադ, Բեքա և այլն), ինչպես նաև հնդկահայ նշանավոր գործիչներ Շահամիրյանների և վրաց Հերակլ Զ-րդ թագավորի բարեկամական հարաբերությունների վերաբերյալ։

Ալամդարյանի Մոսկվայում կատարած թարգմանական աշխատանքներից ուշագրավ է նաև ռուս հեղինակ Բելիկովի «Հրահանգ քրիստոնեական վարդապետության» գիրքը⁴⁹, իր ժամանակին այդ աշխատությունը հայկական դպրոցներում օգտագործվել է իբրև կրոնի դասագիրք։ Այն հրկրորդ անգամ վերահրատարակվել է Մադրասում։ Ալամդարյանի թարգմանության առիթով քննադատական հոդվածով հանդես է եկել Մ. Մսերյանը⁵⁰, սակայն դասագրքի թարգմանությունն ինքնին,

47 Տե՛ս նույն տեղում, վաղ. 5։

48 Ե. Նազարյանը իր «Հարություն Ալամդարյանի մոսկովյան տարիները» հոդվածում առաջինը խոսելով այդ մասին, ենթադրում է, որ Ալամդարյանը լատիներենից է թարգմանել այս գիրքը, սակայն, մեր համոզմամբ, թարգմանությունը կատարված է հայերենից։

49 «Հրահանգ քրիստոնեական վարդապետության ի պէտս մանկանց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, թարգմանութիւն ի Տփլիս, 1825»։ Ալամդարյանի այս թարգմանություն 1847 թ. ձեռագիր մի ընդօրինակությունը պահվում է Մատենադարանում՝ ձեռ. № 8783։

50 Մսեր Մսերյանը գրախոսություն է գրել և 1831 թ.։ «Ի տետրուին, որ մականգրի «Հրահանգ քրիստոնեական վարդապետության» թարգմանալ ի պատուելի Յարութիւն քահանայէ Ալամդարեանց» հոդվածում Մսերյանը

իրեն օգտակար հրեույթ, բարձր է գնահատվել ժամանակին: Այդ գրքի թարգմանության համար Ալամդարյանը սլարգեա-տըրվել է «Աննայի» առաջին աստիճանի շքանշանով:

Մոսկվայում Ալամդարյանը գրեց իր Ռուս-հայերեն քերականության դասագիրքը, որն արժեքավոր ներդրում էր ռուս-հայ քերականագիտության ասպարեզում⁵¹:

Ալամդարյանի դասագիրքը չի տպագրվել, որպեսզի ավելի հստակ լինի վերահիշյալ աշխատության տպագրության գործը ձախողվելու հանգամանքները, ավելորդ չենք համարում ստորև ներկայացնելու այդ առթիվ Ալամդարյանի Հ. Լադարյանին գրած նամակը:

«Յուզագս նախախայծ հրախայրեաց իմոց, համառօտ քերականութեանս ասեմ, զոր խօստացեալ էիք նախապէս ի լոյս ածել՝ արդ իս ըստ տարաբախտութեանս գրէք թէ վասն բազում սխալանացն իւրոց չէ դեռ մտեալ ի տիպ, բարի է, սխալիլն մերձ է մարդկութեանս, բայց յապացոյց բանից ձեռոց յիշէք զերկուս բառս մինն զАЛЧНОСТЬ, զոր դուք ազահութիւն թարգմանէք: Ազահութիւնն ЖАДНОСТЬ լսի ռուսերէն և АЛЧНОСТЬ, թէպէտ բառ առ բառ նշանակէ զանյագութիւն՝ որ ի քաղցուէ պատճառի, բայց որովհետեւ բղխի ի բայցոյս АЛЧУ և АЛКАЮ վասն այսողիկ և ես, որովհետեւ անյագութիւնն անյարմար էր՝ քաղց եղի, ճշմարտութիւն բանիս երեւի ի բառգրքէն ռուսաց Ակադէմիային՝ տպագրեցելոյ ի 1789 թուականին, հատոր 1, էրես 25: Բայց АЛЧНОСТЬ նշանակէ մերթ ևս զազահութիւն, բայց երկրորդապէս, կամ լաւ ևս ասիլ՝ այլաբանօրէն, որում վկայեն բազմութիւնք լեզուագէտ մատենագրաց ռուսաց, թէպէտ և յիշատակեալ բառարանն ո՛չ ինչ խօսի զայսմանէ: Երկրորդն՝ ասէք թէ՛ փոխան եղբօր՝ եղեալ եմ ֆրեր և թարգմանեալ եմ զայն браг: Բառն եղբայր չէր յինէն

լեզվական մի շարք դիտողություններ է անում, սակայն հողվածը, մեղանհայտ պատճառներով, չի տպագրվել: Տե՛ս Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 188, վավ. 8:

51 Ալամդարյանի Ռուս-հայերեն գործնական համառոտ քերականության ձեռագիրը հայտնաբերել է Մատենադարանի ավագ գիտ. աշխատող Շ. Նազարյանը: Մանրամասն տես նույն հեղինակի նշված հոդվածը:

անծանօթ, բայց որովհետև զքանի մի բառ ժողովակալ ալբեր-
նական կարգաւ կամեցաւ դասաւորել երկաքանչիւր լեզուացն
ևս միանգամայն, վասնայսորիկ ի պակասիլ մերումս բառի
ֆ տառիւ, եղի ֆէիւ ֆրեր, զոր առեալ հմբ ի գաղղիացոց, որ
բղխի ի լատին բառէս *frater*, (ֆրատէր) և այն ոչ ըստ քմաց
իմոց, զի ոմանք ի գեղահրաշ բանաստեղծից մերոց վարժեալ
են բառիւս ֆրեր, որպէս Ագաթանգեղոս, Լամբրոնացին: Եթե
կամիր ստուգել զասացեալս՝ տեսէք ի հասարակ բառգիրքն
մեր զայս բառ ի տառն ֆ, յերես 1251, ուրեմն ո՛չ ինչ տգիտու-
թիւն նշմարի յինէն աստանօր, զի այսպիսիք բաղմիցս հանգի-
սին ի գրուածս հեղինակաց, բայց, վեհազնեայ իշխան, թէև
բաց յայսցանէ այլ սխալանք ևս դուցեն, խնդրեմ ըստ ձերումդ
ենթադատութեան սրբապրեալ վաղվաղակի ի լոյս ընծայել, զի
բաղմաժամանակեայ երկասիրութիւնն իմ վասն երկուց սխա-
լանաց եթէ ի տպագրութենէ զրկեսցի, կարծեմ թէ, չիցէ վա-
յելչական: Մի՞թե ամենայն գրուածք, ամենայն բանաստեղծ
հեղինակաց ազատք են ի վրիպակաց: Ահա նայեցարուք ընդ
նախկին շարագրութիւն Աբբայեցոց, լիք են բաղմադիմի
սխալանօք, բայց օր աւուր յառաջացեալ, հասեալ կան այժ-
միկ ի ծայր կատարելութեան...»⁵²:

Այս բողոք-նամակը միաժամանակ բնութագրում է Ա.
Լամդարյանին իբրև հմուտ գիտնական-մանկավարժի. «...Մա-
նաւանդ զի՝ տետրակն իմ ոչ է բնազննութիւն, կամ մեռա-
ֆիզիգայ», — տրամաբանորեն պատճառաբանում է Ա.Լամդար-
յանը, — «որ թեթև վրիպակաւ զմիտս ուսանողին խարբալեա-
ցէ, այլ տետր՝ առ ի կրթութիւն մանկանց, և ևս, վասն երկուց
սխալանաց, զհարիւր ուղիղսն անպատկան է ընդ գրուանաւ
գաղել, և ևս յաղագս այնորիկ ի յառաջաբանութեանն նորա
յաճախ կրկնեմ, թէ՝ ամենայն ինչ ի սկզբանն բաղում թերու-
թեամբ ելեալ է ձեռաց հեղինակին իւրոյ՝ անցմամբ ժամանա-
կաց կատարելագործին, և թեպէտ այնպիսի երկար և ընդար-
ձակ նախերգան անվայել էր փոքրութեան գործոյս, սակայն

⁵² Մատենադարան, Լազարյան ձեմարանի արխիւ, թղթ. 105, գ. 11,
վավ. 4:

վասն աշխորիկ արարի, զի նովաւ որպէս թէ կազեթիւ հրատարակեսցի ընդ ամենայն երկեր ազգաօգուտ և անզուգական մեծագործութիւնն ձեր, չորոց զնմանին դեռևս ոչ է տեսնալ մեր ազգ...»⁵³:

Թե ինչ է պատասխանում Ալամդարյանի այս նամակին Հովակիմ Լազարյանը, մեզ հայտնի չէ: Սակայն մի բան պարզ է, որ աշխատութիւնը չի տալագրւում: Ալամդարյանն իր ուսուցչական գործունեության ողջ ընթացքում օգտագործում է այդ դասագիրքը: Նա ընդօրինակում է իր ձեռագիր աշխատության առանձին մասերը և հանձնարարում աշակերտներին: Մատենադարանի արխիւում պահպանվել են այդ աշխատության մի շարք գլուխների մեկից ավելի ընդօրինակութունները, որ կատարել է Ալամդարյանն՝ իր աշակերտներին տալու նպատակով: Այնպես, որ թեև չի տալագրվել Ալամդարյանի Քերականութիւնը, սակայն այն իբրև դասագիրք շրջանառության մեջ է մտել իր ժամանակին:

«Խրատ տետրակիս չեն աւանդեալք առ ի ծանրաբեռնիլ սորօք զմիտս ողորմելի համբակաց,— գրում է Ալամդարյանը առաջաբանի ձեռագիր պատառիկում,— բարբարոսաբար հրամայելով նոցա առնուլ զայս ամենայն ի բերան. այլ առ ի դիտել նոցա զթարգմանութեան շաւիղ և տալ ի ձեռս նոցա զճրագ իմն առ անխարխափ գնալոյ զթարգմանութեան ճանապարհն: Պարզ մեկնութիւն կանոնաց հիմնելոց ի վերայ անգրիկի օրինակաց՝ զարթուսցէ զմիտս նոցա յընդունելութիւն նորանոր տալաւորութեանց և ինքնին տարրասցի ի միտս նոցա, ուր ընդհակառակն բռնութիւն դասատուութեան և չարաշար կիրառութիւն իշխանութեան իւրոց ի վերայ ընդունակութիւն համբակին, հեղամղձուկ առնէ զնորին սրութիւն և հաստատութիւն մտաց, տայ նոցա միայն զփեճիկ պտղոյն՝ ամենեին անճարակ և զուրկ ի համեղ միջուկէն թողեալ: Զայս ի բաղմամեայ փորձոյ գիտէ արտադրիչ տետրակիս»⁵⁴:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Մատենադարան, ձեռագիր № 3754, Թ. 1:

ինչպես հայտնի է, և ինչպես գրում է ինքը՝ Ալամդարյանը, Ռուս հայերեն գործնական համառոտ քերականությունը սովորական դասագիրք չէ, այլ նաև ուսերենից հայերենի թարգմանական արվեստի սլարդ օրենքները սովորեցնելու մի ձեռնարկ։ Այդ է պատճառը, որ նա իր դասագրքում երկու ընդարձակ բաժին է հատկացրել միայն թարգմանությունը՝ «Գործնական մարզից թարգմանություն» և «Գործնական վարժից թարգմանություն»։

Ալամդարյանն իր այս դասագրքով հետապնդում է հայ մատաղ սերնդի մեջ դեպի ուսաց լեզուն և գրականությունը սեր ու հետաքրքրություն արթնացնելու նպատակ։ Այս առումով նրա Ռուս-հայերեն համառոտ քերականությունը հայ և ուս ժողովուրդների պատմական բարեկամությունը հավաստող երկերից մեկն է, հայ ժողովրդի ուսական անվերապա՝ կողմնորոշման գրական արտահայտությունը։ Ալամդարյանն իր գործունեության առաջին քայլերից գիտակցում է ուս ժողովրդի դերը հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի տնօրինության հարցում։ Պատմական իրականության այս հրամայական պահանջի բերումով է Ալամդարյանը գրում իր Քերականության դասագիրքը։ Հայ ժողովրդի քաղաքական իղձերի իրականացման առաջին նախապայմանը նա համարում է ուսական առաջավոր մշակույթի, գիտության, ուսական լուսավորության ներմուծումը հայ իրականության մեջ։ Ալամդարյանը խրախուսում է հայ մանուկներին սովորելու ուսաց լեզուն և նրա միջոցով հաղորդակից դառնալու ուսական մտքի նվաճումներին։ Իբրև կենսական պահանջ, նա առաջարկում է հայերենը անկորուստ պահելու հետ միասին, սովորել նաև ուսաց լեզուն։ «Հայք, անկորուստ պահեալ զբուն բարբառ իւրեանց, գուն դործեն մեծավաստակ երկասիրութեամբ ուսանել և զլեզու ուսաց. զի նովաւ ակն ունին ներվարժիլ ի հարկաւոր գիտութիւնս և առաւելապէս լուսաւոր առնել զմիտս իւրեանց։ Յայս միտս Ռուսիա է վասն նոցա նոր Աթենք. այլ

առ պաշտօնական կարևորագույն գրեհանց յանձնի ռուսումն լեզուի ուսաց յամենայն ջանք նոցա ի դերե ելանէ»⁵⁵:

Ալամդարյանի հայացքով, Ռուսիան հայության համար մի «նոր Աթենք է», որի քաղաքակրթության սերմերը անհրաժեշտորեն պետք է տարածել դարերով տառապած հայ ժողովրդի մեջ, ուստի քերականական վարժություններում Ալամդարյանը ուսանողներից հայերին թարգմանությամբ գրում է հայրենասիրական բովանդակությամբ օրինակներ. «Россия просвещена Петром Великим—Ռուսաստան լուսաւորվեցաւ ի Պետրոսէ մեծէ»⁵⁶, «Мы любим свою родину—Մեք սիրեմք հայրենիք մեր»,--գրում է նա⁵⁷: «Человек не любящий своего отечества, не может быть ни добрым сыном, ни верным другом—Այր խորթ ի սիրոյ հայրենեաց, չկարէ լինիլ ոչ որդի բարի և ոչ բարեկամ մտերիմ»⁵⁸:

Հատկանշական է, որ Ալամդարյանին ոգևորում է Պետրոս Առաջինի լուսավորած Ռուսաստանը: Այդ նշանակում է, որ նա խորապէս ըմբռնում էր ուսական նոր լուսավորության խորհուրդը: Ռուսասիրությունը նրա համար ինքնանպատակ չէր: Դա բխում էր նրա մեջ արմատավորված ազգային ազատության գաղափարից:

Ռուս-հայերին գործնական քերականության դասագիրքը ցույց է տալիս, թե որքան զգալի է Ալամդարյան մտնկավարժի վրա ժամանակի կամ նախապուշկինյան շրջանի ուս գրականության ազդեցությունը: Հայտնի է, որ XIX դարի առաջին երկու տասնամյակներում ուս հասարակական մտքի, գրականության ու մշակույթի վրա իշխում էր նշանավոր գրող, գիտնական և հրապարակախոս Կարամզինը:

«Կարամզինը հսկայական ազդեցություն է ունեցել ուս գրականության վրա: Նա վերափոխեց ուսաց լեզուն... Կա-

55 Չ. Ալամդարյան, Համառօտ քառարան ի ուսաց լեզուէ ի հայ Մոսկովա, 1821, էջ 1:

56 Նույն տեղում:

57 Նույն տեղում, էջ 5ա:

58 Նույն տեղում, էջ 62ա,

րամզինով ավարտվում է ռուսական գրականության լուսնոստովյան շրջանը... և Կարամզինից մինչև Պուշկինը ընկած ամբողջ ժամանակաշրջանը հարկ է կոչել Կարամզինյան»⁵⁹:

Կարամզինի ազդեցությունը զգալի է նաև Ալամդարյանի վրա: Նա իր դասադրքում ամենից շատ քաղվածքներ է բերում Կարամզինի հրկերից: Ուշագրավ է, որ ընթերցանության համար աշակերտներին հանձնարարում է Կարամզինի «Что нужно автору» հրապարակախոսական հոդվածը, ուր բնութագրվում է գրողի դերը, կոչումը, նպատակը: «Դու վերցնում ես գրիչը և ուզում ես դառնալ հեղինակ, հարցրու ինքդ քեզ, մեն-մենակ, առանց վկաների, անկեղծ, ինչպիսի՞ն եմ ես, քանզի ուզում ես ներկայացնել քո հոգու և սրտի դիմանկարը: Դու ցանկանում ես դառնալ հեղինակ, կարդա՛ մարդկային ցեղի դժբախտությունների պատմությունը, և եթե քո սիրտը արյունով չլցվի, թող գրիչդ, թե չէ նա մեղ կպատկերի քո հոգու սառը մուսկությունը»⁶⁰:

Բանաստեղծը ողիշնչված էր ոչ միայն Կարամզինով, այլև նախապուշկինյան շրջանի ռուսական առաջավոր գրականությունը: Ռուս-հայերեն համառոտ քերականության մեջ հաճախ ենք հանդիպում այդ շրջանի գրականությունից համապատասխան մեջբերումների ու քաղվածքների: Նա օգտվել է Ժուկովսկու, Խեմնիցերի, Վասիլի Պուշկինի, Կուլովի բանաստեղծություններից ու առակներից:

Ալամդարյանը սիրում էր ոչ միայն ռուսական ժամանակակից դասական գրականությունը, այլ նաև ժողովրդականը: Նա իր քերականության դասագրքի մեջ օգտագործել է ռուսական ժողովրդական առակներ, զրույցներ, անեկդոտներ, որոնց մի մասը, ըստ երևույթին, քաղել է «Вестник Европы» ամսագրից:

Հայ-ռուս գրական կապերի պատմության մեջ առանձին տեղ ունի նաև Ալամդարյանի ռուս-հայերեն բառարանը՝

⁵⁹ Белинский В. Г., Полное собр. соч., том 7, М., 1955, стр. 122, 139.

⁶⁰ Карамзин Н. М. Избранные соч., М., 1966, стр. 171.

«Համառոտ բառարան ի ուսաց լեզուէ ի հայ», որը նա պատրաստել է հրատարակութեան Ռուս-հայերեն քերականութիւնից հետո և ապա տպագրութեան հանձնել 1821 թվականին: Թե իր բառամթերքով, և թե բառաքանակով Ալամդարյանի ուսու-հայերեն համառոտ բառարանը նոր խոսք էր հայ բառարանագիտութեան պատմութեան մեջ: Ալամդարյանը, ինչպէս ուսու-հայերեն քերականութիւնը, այնպէս էլ այս բառարանը ստեղծել է օրվա պահանջի թելադրանքով, գործնական նկատառումներով: Եվ իրոք, այն երկար ժամանակ օգտագործվել է հայ աշակերտութեան և ուսուցչութեան կողմից, իբրև մատչելի առձեռն բառարան:

Հայ բառարանագիտութեան պատմութեան մեջ վերջերս միայն ըստ արժանւոյն գնահատվից Ալամդարյանի բառարանը: Բառարանագետ Գ. Գասպարյանը «Հայ բառարանագրութեան պատմութիւն» աշխատութեան մեջ անդրադառնալով Ալամդարյանի վերոհիշյալ բառարանին, նշել է վերջինիս առավելութիւններն իր նախորդներից⁶¹:

Այսպէս, Ալամդարյանը Մոսկվայում ապրում և աշխատում է 1813—1823 թթ.: Մոսկովյան կյանքի տասնամյա այս շրջանը շատ բան տվեց Ալամդարյանին: Նա ձեռք բերեց գործնական աշխատանքի փորձ, գիտելիքների անսպառ պաշար: Մոսկվան հարթեց մեծ գործչի ու բանաստեղծի կյանքի հետագա ճանապարհը:

61 «Կղեկոպատրա Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» (Պետերբուրգ, 1788) բառարանն իր մեջ բովանդակում է 2500 բառահոգված: Նույն թվականին Պետերբուրգում հրատարակվում է Գ. Խալդարյանի «Շաւիղ լեզուագիտութեան» հայ-ուս բառարանը, որը պարունակում է 500 բառահոգված, մինչդեռ Ալամդարյանի բառարանն ունի 9000 բառահոգված»: Գ. Գասպարյան, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երևան, 1971, էջ 167—170:

ԱԼԱՄԴԱՐՅԱՆԸ և XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱԶԳԱՅԻՆ-
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Ալամդարյանը Մոսկվայից իր ծննդավայրը վերադարձավ կյանքի խոր ճանաչողությամբ, գիտելիքների մեծ պաշարով: Դա 1823 թվականի աշնանն էր: Նրա անունն արգեն հայանի էր ամենքին. հայաբնակ տարբեր քաղաքներից նրան հրավիրում են ուսուցչի կամ տեսչի պաշտոնով: Պատանվել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք յուրյց են տալիս, թե ժամանակի հայ մշակութային գործիչները որքան բարձր են գնահատել Ալամդարյանին և որքան մտահոգված են եղել առավել հարմար կերպով օգտագործելու նրա ուժերը ազգային լուսավորության ասպարեզում: Աստրախանցիները թախանձում են, որ Ալամդարյանը մշտական աշխատանքի անցնի հայրենի քաղաքում: Թավրիզի հայ հասարակության անունից Սեթ Ծատուրյանը ներսես Աշտարակեցուն խնդրում է «հանճարափույլ քահանա Ալամդարյանին» Թավրիզ տեղափոխել¹: Նախիջևանցիները նրան հրավիրում են Նոր Նախիջևանում ճեմարան հիմնադրելու: Ներսես Աշտարակեցին, որ վաղուց ի վեր մտադրված էր Թիֆլիսում դպրոց բաց անելու, նրան հրավիրում է աստանձ-

¹ Մատենադարան, Կաթ. դիվ., թղթ. 51, վավ. 162:

նել իր ուսումնարանի տեսչի պաշտոնը: Դեռևս Մոսկվայում, Ալամդարյանը կատարում էր Աշտարակեցու հանձնարարությունները՝ կապված ներսիսյան դպրոցի նախապատրաստական աշխատանքների հետ: Վերջինս Ալամդարյանի հետ խորհրդակցում էր իր ծրագրերի ու անհիթքների մասին: 1823 թվականին, Աշտարակեցին «գիտնական քահանային» հանձնարարում է ապագա դպրոցի տպարանի համար Մոսկվայից ձեռք բերել ուսսերեն տառատեսակներ, տպագրական թուղթ, «կրկնազլան մեքենա» և այլ սխուռքներ: «...Ձի ճշմարիտ է բանս, թէ ախորժեմ ամենայնիւ ըստ ամենայն կարելիաց կացուցանել զայս տպարան փառաւոր և զովանի, ոչ բնավ խնայելով ի ծախսն, վասն այնպիսի արժանաւորութեանց նորին»²:

Ներսիսյան դպրոցը հիմնադրելուց ամիսներ առաջ, Ներսես Աշտարակեցին նախ նամակով, ապա պաշտոնապես կազարյաններին հայտնում է Ալամդարյանին Թիֆլիս բերելու իր մտադրության մասին. «...Ձտէր Յարութիւն, որ երբեմն վարժապետ ձերում մանկանց, համաձայնութեամբ նոցին վեհանձնեայ աղա Յովակիմայ և աղայ Խաչիկայ, պատրաստեսցիք հղիլ վասն ուսումնարանի մերոյ յառաջիկայ պահոցն յորժամ պատրաստեցին զարնանային յաջող ճանապարհորդութիւնք»³:

1824 թվականի ապրիլի 28-ին Ալամդարյանին գրած նամակում, Աշտարակեցին հայտնելով «Քրիստոնէական վարդապետութիւն» թարգմանական աշխատանքի ձեռագիրը ստանալու մասին, վերստին արժարժում է նրան Թիֆլիս հրավիրելու խնդիրը: Նկատենք, որ այս նամակը ևս ցույց է տալիս, թե Աշտարակեցին ինչ մեծ հույսեր էր կապում Ալամդարյանի հետ և որքան խոր հավատ ու սեր ունեւր նրա նկատմամբ: «Յաղագս Ձերոց հոգեշարժ կամաց թէ ոգիք Ձեր իցէն, այո՛, այնպէս, որպէս և նկարագրութիւնքն պատկերացուցանեն, ոգեսիրութիւն Ձեր և եռանդն վասն օգտի

² Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 699,

³ Նույն տեղում, վավ. 586:

հասարակաց հայրենեաց, եղիցին իսկ և իսկ առհաւատաշնայք ինձ ուրախութեան յաւիտենից, վասնորոյ ահա և յուսով ախորժականն իմում ըզձի գրեմ զսոյն, որով և հրաւիրեմ համանդամայն գալ առ իս և որ յաջողեն յամ յամի, յաջողեսցէ և ինձ և Զեզ, զցաւալին մեզ և զհաճոյականն ինքեան...»⁴:

Ալամդարյանը շէր կարող մերժել մեծ երախտավորի առաջարկը: Միաժամանակ նա խորապէս գնահատում էր Թիֆլիսում մի այդպիսի դպրոց բացելու Աշտարակեցու նախաձեռնութիւնը և լավ էր պատկերացնում այն մեծ դերը, որ պէտք է կատարեր Ներսիսյան դպրոցը կովկասահայու-թյան կյանքում: Ալամդարյանն, առանց երկմտանքի, ընդունում է Աշտարակեցու հրավերը և որոշում մեկնել Թիֆլիս: 1824 թվականի օգոստոսի 20-ին նա դիմում է Աստրախանի թեմի վիճակային կոնսիստորիա՝ անձնագիր ստանալու. «Խնդիր տէր Յարութիւն Ալամդարեանց, վասն պաշպորտի, մականգրութեամբ սրբազան առաջնորդի»⁵—կարդում ենք կոնսիստորիայի ելից և մտից գրութիւնների մատյանում: Աշտարակեցին հատուկ գրութեամբ դիմում է Աստրախանի թեմի առաջնորդ Հովհաննէս արքեպիսկոպոսին՝ Ալամդարյանի Թիֆլիս մեկնելու գործն արագացնելու մասին:

1824 թվականի սեպտեմբերի սկզբին Ալամդարյանը Աստրախանից դուրս է գալիս և Մոզդոկի վրայով հասնում Թիֆլիս:

«...Արժանապատիւ տէր Յարութիւն շնորհալի քահանա Ալամդարեանց, սիրելին մեր, զորմէ գրէք, յուսամ ցարդ ժամանեալ իցէ յըսպաս ձերում սրբութեան և ղթասիրեալ ի Զէնջ հայրական գթարկութեամբ, ըստ որում ի վաղ հետէ ճանապարհորդեալ աստի և ժամանեալ ի Մոզդոգ, յորմէ զիր ընկալեալ ի 31-է օգոստոսի, խոստանա, թէ ետ երից աւուրց ունի ելանել անտի և ուղղել դեպ առ Զեզ»,—գրում է Հովհաննէս արքեպիսկոպոսը Աշտարակեցուն⁶:

⁴ Նույն տեղում, թղթ. 166, վավ. 46:

⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 52, ց. 6, դ. 8, թղթ. 15բ:

⁶ Մատենադարան, Կաթ. դիվ., թղթ. 49, վավ. 324:

Ալամդարյանը 1824 թվականի սեպտեմբերի 10-ին Ռիֆլիսում էր⁷։ Տեղի հասարակությունը ուրախությամբ է ընդունում նրա գալստյան լուրը։

Ներսես Աշտարակեցին հայրական սիրով ու խանդավառմամբ է դիմավորում Ալամդարյանին։ «Եկն հաս ողջամբ տէր Յարութին շնորհաշուք քահանայն Ալամդարեանն»,— հայտնում է նա իր բարեկամներից մեկին⁸։ Հովակիմ Լաղարյանը Աշտարակեցուն գրած նամակում խնդրում է նրան՝ հոգատարություն ցուցաբերել Ալամդարյանի նկատմամբ. «...Հայցեմ զշնորհ ձեր և բարերարութիւն առ ձեզ եղեալ տէր Յարութին Ալամդարեանի մերոյ ցուցանել, զի այր պիտանի և հմուտ մերոյ և ուսաց լեզուի է. կարելի է ուսումնարանին ձերոյ և դասատուութեան պիտոյասցի»⁹։ Նախքան այդ, Հովակիմ Լաղարյանը նույնիսկ մտածում էր Ալամդարյանին կրկին Մոսկվա վերադարձնելու մասին և միջոցներ որոնում Աշտարակեցու օգնությամբ նրան վարդապետական աստիճան շնորհելու։

Աշտարակեցուն ուրախացնում է Ալամդարյանի նկատմամբ Հովակիմ Լաղարյանի մեջ տեղի ունեցած շրջադարձը։ Վերջինիս ուղղված պատասխան նամակում նա իր գոհունակությունն է հայտնում այդ առթիվ և դարձյալ առիթը բաց չի թողնում խոսելու այն մեծ հույսերի մասին, որ ինքը կապում էր Ալամդարյանի հետ. «...Ձտէր Յարութին Ալամդարյան՝ համաձայն գրելոցն Ձերում վեհազնութեան, լաւագոյն յուսով ունիմք արժանապատուութեամբ և գոհունակ եմ ցարդ զնմանէ բաւականութեամբ չափ, համանդամայն և հարստացեալ լաւագոյն յուսով վասն մշտնջենաւորութեանց լաւութեանց նորին և համեստութեանց և բարեջանութեանց, որոց զարգասիսն՝ ակն ունիմ պասքեալ հասարակութեանց

7 Տե՛ս նույն տեղում, թղթ. 78, վավ. 189։

8 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 115։

9 Մատենադարան, Լաղարյան ճեմարանի արխիվ, թղթ. 105, գ. 14, վավ. 6։

հօտի մերում վայելել վաղվաղակի ոչ անագան տեառն դոր-
ծակցութեամբ և անսահման շնորհօք»¹⁰։

Ներսիսյան դպրոցը պաշտոնապես բացվում է 1824
թվականի դեկտեմբերի 1-ին, «ձեռամբ Յարութին քահա-
նայի Ալամդարեան», — դրում է դպրոցի անդրանիկ շրջա-
նավարտ Առաքել Արարատյանը¹¹։

Ալամդարյանը թեակոխում է կյանքի նոր շրջան։ Աշտարա-
կեցին սահմանում է տեսչական աշխատանքի փորձնական
շրջան։ Ալամդարյանն աշխատում է մեծ նվիրումով։ Փոր-
ձաշրջանը տևում է շուրջ 6 ամիս՝ 1824 թվականի դեկտեմ-
բերից մինչև 1825 թվականի հուլիսը։ Ամենքին հիացմունք
է պատճառում նրա կազմակերպչական եռանդը, առանձնա-
սուր շնորհքն ու գործիմացությունը։ Այլևս տարակուսանքի
տեղ չի մնում։ Աշտարակեցին։ Ներքին գոհունակությամբ
հրապարակում է Ալամդարյանին Ներսիսյան դպրոցի տեսուչ
կարգելու պաշտոնական հրամանը, որը մեծ ուրախություն է
պատճառում Ալամդարյանի բարեկամներին և Թիֆլիսի ողջ
հայ մտավորականությանը։ Այդ օրերին Ալեքսանդր Առաջի-
նի անվանակոչության առթիվ Ներսիսյան դպրոցում կազմա-
կերպվում է մեծ հանդես։ Աշակերտներից մեկը կարդում է
մի բանաստեղծություն, որի վերջին տունը նվիրված էր
դպրոցի տեսուչ Ալամդարյանին։ Այդտեղ դպրոցի նոր տե-
սուչը բնութագրվում է իբրև «նորոգող կենաց», «աղբյուր
պարտիզաց» և «անձնազոհ՝ ու մտերիմ» այր ճեմարանի։

Դիմեսցուք այժմ առ քեզ՝ վարժապետ բարի,
Անձնազոհ մտերիմ, սոյն ճեմարանի,
Համբուրեսցուք վաղ խաչ՝ որ է պաշտելի,
Որով պսակեցա՛ք յաւուրս սոյն տօնի։
Տէր ետ մեզ Յարութին նորոգող կենաց,
Եւ ծարաւ պատքելոյս՝ աղբիւր պարտիզաց,

¹⁰ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166,
վավ. 190։

¹¹ «Արձագանք», 1898, № 2, էջ 27։

Նոր մեղ լուսաբեր աստղ՝ մխիթար նաւորդաց,
Որով նաւեմքս ուղիղ՝ յերկիրն կենդանեաց¹²:

Կովկասահայոց կյանքում Ներսիսյան դպրոցի հիմնադրումը կուտուր-կրթական նշանակալից երևույթ էր, պատմական կարևոր իրադարձություն: Դա հայկական կրթական երկրորդ խոշոր օջախն էր Լազարյան ճեմարանից հետո: Ներսիսյան դպրոցը ծնունդ էր առնում Կովկասի ամենաառաջավոր քաղաքներից մեկում՝ Թիֆլիսում, ուր հայերը գերակշռող թիվ էին կազմում: Ալամդարյանը քաջ գիտակցում էր, որ Ներսիսյան դպրոցը կոչված էր հայության համար կատարելու ավելի մեծ դեր, քան Լազարյան ճեմարանը, որովհետև այն ծաղկում էր բուն հայկական միջավայրում: Այդպիսի ուսումնական հաստատության ղեկավարումը նա իր համար մեծ պատիվ էր համարում: Ալամդարյանի մանկավարժական սկզբունքները բխում էին նոր դպրոցի պահանջներից և ձևավորվել էին մի կողմից ռուսական և եվրոպական առաջավոր մանկավարժության, ռուս հասարակական մտքի ազդեցության տակ, մյուս կողմից՝ հայ մանկավարժության, հայ դպրոցի դարավոր պատմության հարուստ փորձի ուսումնասիրությամբ:

Թիֆլիսում արդյունավետ դործունեություն ծավալելու համար կար մի բարեհաջող հանգամանք ևս: Ուսումնարանի հիմնադիրը լավատեղյակ էր գործին, շահագրգռված դպրոցի հաջողությամբ ու հայության լուսավորմամբ և հենց սկզբից չի զլանում Ալամդարյանին ցույց տալու ամենօրյա անմիջական օգնություն: Ալամդարյանն էլ իր հերթին պարտքի տակ չի մնում: Կարճ ժամանակում, բազում խոշընդոտներ հաղթահարելով, նա դպրոցին այնպիսի տեսք ու ընթացք է տալիս, որ նախանձելի է դառնում շատերին: Իզուր չէ, որ նրա դործունեության շրջանը Ներսիսյան դպրոցում դնահատվում է իբրև «Դար Ալամդարյան»¹³: Դա մի փառավոր էջ էր ինչպես

12 Ա. Այվազյան, Շար հայ կենսագրության, հ. Ա, էջ 134:

13 Ալ. Երիցյանց, Պատմություն..., էջ 86:

Ներսիսյան դպրոցի, այնպես էլ հայ մանկավարժական մտքի պատմության մեջ: «Դար Ալամդարյան» արտահայտության մեջ մարմնավորվում է Ալամդարյան բանաստեղծի, մանկավարժի, գիտնականի, նոր ժամանակների հասարակական ու քաղաքական գործչի՝ լուսավորչի կերպարը: Մոսկվան, ինչպես նկատեցինք, նախապատրաստեց Ալամդարյանին ավելի մեծ մասշտաբի գործունեության, ավելի լայն ասպարեզի համար: Այդ ասպարեզն, ահա, դարձավ Ներսիսյան դպրոցը: Լազարյան ճեմարանի կրթական, ուսումնադաստիարակչական և կազմակերպչական աշխատանքների փորձը շատ բան էր սովորեցրել երիտասարդ մանկավարժին: Ինչպես Մոսկվայում, այնպես էլ այստեղ, Ալամդարյանը խորամուխ է լինում գործի մեջ՝ սկսելով դպրոցի ներքին կյանքի կարգ ու կանոնի հետ կապված հարցերից: Նա կազմում է նախ մի համառոտ ծրագիր և «Ցուցակ պարտաւորութեանց վարժապետաց» կանոնագիրը, որը Ալամդարյանի մանկավարժական փորձի, նրա տեսական գիտելիքների և գործիմացության խտացումն էր, դա սովորական կանոնագիր չէր, այլ գործողության ծրագիր, ուղեցույց, որով պետք է առաջնորդվին Ներսիսյան դպրոցի ուսուցիչները: Դա հայ դպրոցի և մանկավարժության պատմության մեջ նոր ու նշանակալից երիվույթ էր, իր տեսակի մեջ մի բացառիկ օրինակ: Նույնիսկ Լազարյան ճեմարանն իր գործունեության առաջին շրջանում չստեղծեց նմանօրինակ վավերագիր: Մեզ արդեն ծանոթ «Բանն վասն հիմնադրութեան ուսումնարանի» նախագիծը, որ Ալամդարյանն անցյալներում պատրաստել էր Հովակիմ Լազարյանի հանձնարարությամբ, նման ընդգրկում ու խորություն չունի:

Ալամդարյանի մանկավարժական հրահանգարանը թեև կրում է շատ որոշակի խորագիր՝ «Ցուցակ պարտաւորութեանց վարժապետաց», բայց բովանդակությամբ շատ ավելի լայն է: Նա հավասարաչափ պատկերացում է տալիս դպրոցի թե տեսական, մանկավարժական-մեթոդական աշխատանքների և թե՝ կառուցվածքի, կազմակերպչական սիստեմի մասին: «Ցուցակը...» ընդգրկում է աշակերտների

դաստիարակութեան բոլոր ոլորտները: Ալամդարյանի սուչն հրահանգարանի և համառոտ ծրագրի առանցքը կազմում են երկու վեկնգանի գործոններ, որոնցով պայմանավորված էին դպրոցական մնացած աշխատանքների հաջողութունը: Դրանք են՝ ուսուցիչը և աշակերտը:

Սա աննախագիս էր հայ դպրոցի պատմութեան մեջ: Ալամդարյանը սահմանում էր պարտադիր կանոններ ուսուցչի իրավունքների և պարտականութիւնների մասին: Ինչպիսին պետք է լինէր ուսուցիչը և ինչպիսին՝ աշակերտը: Հենց այս հարցերի պատասխանների մեջ մարմնավորված էին Ալամդարյանի մանկավարժական ու բարոյագիտական հայացքները: «Յուցակ...»-ի ոգին աշակերտի՝ աւագա մարդ-քաղաքացու բարոյական կերպարի կերտումն էր, նրա մեջ հասարակական մարդու անհատականութեան կազմավորումը: Ալամդարյանը փորձառու մանկավարժի, հոգեբանի ու դաստիարակի մոտեցմամբ քննում, վերլուծում և ապա առաջադրում էր այդ դադափարի հետ կապված հարցերը՝ հարակցելով կանոնագրի կենտրոնական խնդրին՝ ուսուցչի պարտականութիւնների հետ: Այլ խոսքով, հարցերի հարցը մնում էր ուսուցչի պարտավորութիւնը, որին հարակցվում էին բազմաթիւ ալլ խնդիրներ: Այսպիսով, Ալամդարյանի «Յուցակն...» արժարժում է դպրոցի ներքին և արտաքին կյանքի բոլոր խնդիրները, թափանցում ուսումնա-արտադրական, բարոյա-դաստիարակչական և արտադպրոցական աշխատանքների բոլոր ոլորտները: Կանոնադրութիւնը լիակատար դադափար է տալիս նաև այն մասին, թի ներսիսյան դպրոցը հիմնադրման առաջին տարիներին ինչ կառուցվածք է ունեցել, ինչ սիստեմով են խմբավորվել, համալրվել դասարանները, ինչպես են կազմվել ծրագրերը, ինչ առարկաներ են դասավանդվել, ինչպես է նախապատրաստվել աշակերտների և ուսուցիչների հավաքագրման գործը, ինչ է ներկայացրել մանկավարժական խորհուրդը և ինչ իրավունքներ են վերապահվել նրան, ինչպիսի փոխհարաբերութիւններ են մշակվել ուսուցչի և աշակերտների, ծնողների և դպրոցի միջև և, վերջապես, ինչ դեր և իրավունքներ է ունեցել դպրոցի տեսուչը:

Ներսիսյան դպրոցում ուսումնառության ընթացքը նախատեսվում էր ամենակարճը երեք՝ և ամենաերկարը տասը տարի: «Կարճ ժամանակ մնալոյ աշակերտի յուսումնարանի է երեք տարի. երկարագոյնն է տաս տարի»,—գրում է Ալամդարյանն իր համառոտ ծրագրում: Պետք է նկատել, սակայն, որ այս օրենքը չէր կիրառվում քարացած ձեռվ, այն հարմարեցվում էր ընդունվող աշակերտի տարիքի և իմացության մակարդակին: Այսպես, ծրագրի համաձայն, ութ տարեկան երեխան կարող է ընդունվել դպրոց և սովորել «զամս տասը», ինը տարեկանը՝ «զամս ինն» և այլն: Ուշագրավ է Ալամդարյանի մշակած հատուկ կարգը առանձին դասարանների համար:

Առաջին դասարանում երեխաները յուրացնելու էին այբբենարանը, հինգ կանոն սաղմոս, նոր կտակարան, հայերեն ու ռուսերեն և համառոտ պատմություն: Երկրորդ դասարանում սովորելու էին. «1) զՀայերէն և զՌուսերէն քերականութիւնս, 2) զՍկզբունս պարսից լեզուի, 3) զԿայելչագրութիւնս երից լեզուացս, 4) զՔառեակ կանոնս թուաբանութեան, 5) զՍկզբունս նկարչութեան, 6) զՍկզբունս աշխարհագրութեան, 7) զՍկզբունս պատմութեան և 8) Երկիցս յօթնեկի լսեն ընդ աշակերտաց երրորդ նախապատիւ դասակարգին զմեկնութիւն քրիստոնէական վարդապետութեան»: Ինչ վերաբերում է երրորդ՝ վերին դասին կամ դասարանին, վերջինիս աշակերտներն էլ անցնելու էին. «1) Զճարտասանութիւն հայերէն և ռուսերէն, 2) Զքերականութիւն պարսից, 3) Զտրամաբանութիւն, 4) Զթարգմանութիւն լեզուէ ի լեզու, 5) Զանվթար շարագրութիւն յերաբանչիւր լեզուս», ինչպես նաև

«Աւարտելու էին. 6) Թուաբանութիւն, 7) Նկարչութիւն, 8) Աշխարհագրութիւն, 8) Ընդհանուր և մասնավոր պատմութիւն, 10) Քրիստոնէական վարդապետութիւն» և, վերջապես, ձեռք էին բերելու «Քաջ տեղեկութիւն գրուածոց բարեացապարտ հին և նոր հեղինակաց հայոց և ռուսաց»¹⁴:

¹⁴ Ալ. Ներսիսյանց, Պատմություն..., էջ 98—99:

Եվ այսպիսի, շարունակաբար աճելու էր դասավանդվող առարկաների թիվը, և ծավալվելու ու խորանալու էին ուսումնական ծրագրերը: Մեծ ուշադրություն էր դարձվում լեզուների դասավանդման գործին: Յուրաքանչյուր աշակերտի համար պարտադիր էր երեք լեզվի՝ հայերենի, ռուսերենի և պարսկերենի ուսուցումը, իսկ «յայլ լեզուս վարժիլ կամ ոչ, թողիցի ի յօժարակամ ընտրութիւն նորա»:

Ալամդարյանը մեծ կարևորություն էր տալիս մայրենի լեզվի ուսուցման գործին. նա գտնում էր, որ աշակերտները պետք է առաջին հերթին հիմնավորապես սովորեն իրենց մայրենի լեզուն և ապա դրան զուգահեռ այլ լեզուներ: «...Իսկ այլազգի լեզուաց և բարբառն և տառքն և օրէնք կարգացմանն ամենևին անժանօթ զոլով նոցա, պէտս ունին եթէ ոչ առաւել՝ գոնէ համաշափ ժամանակի»¹⁵:

«Յուցակում...» մեծ պահանջներ էին ներկայացվում ուսուցչին: Այն միտքն էր զարգացվում, որ ոչ մի մանկավարժ իր բարոյագիտական քարոզներով չի կարող կրթել աշակերտին, եթե ինքը չլինի բարոյականության կատարյալ տիպար, «քանզի եթէ չափահասքն առաւել յօրինակէ համողին ի գործս բարութեանց քան լոկ ի բանից, քանի՞ ևս առաւել համբակք, որոց ներքին և արտաքին զգայութիւնք դիւրատարատրաստք են յընդունելութիւն ամենայն գործոց և՛ բարեաց, և՛ չարեաց, որպէս փորձն հանապազորդ ցուցանէ»¹⁶:

Ալամդարյանը ոչ միայն առաջադրում ու տեսակէանորեն հիմնավորում էր ուսուցչի դերի ու պարտականությունների հետ կապված հարցերը, այլև ուշադրություն էր հրավիրում այն պայմանների ու միջավայրի վրա, որոնք իրենց հերթին պետք է նպաստին ուսուցչի հեղինակության բարձրացմանը: Նրա «Յուցակում...» հատուկ կանոններ են սահմանվում նաև աշակերտի և ուսուցչի միջև անհրաժեշտ բարոյական կապ ստեղծելու վերաբերյալ, առանց որի ուսուցիչը չէր կարող հասնել ցանկալի արդյունքի: Ըստ Ալամդարյանի, ման-

15 Ալ. Երիցյանց, Պատմություն..., էջ 97:

16 Նույն տեղում, էջ 93:

կալարժույթյան մեջ ամեն մի մանրուք դաստիարակչական խորհուրդ ուներ և կարող էր հաճախ վճռական նշանակութիւն ունենալ ուսուցչի և աշակերտի փոխհարաբերութիւնների հարցում:

Հայ դպրոցական կյանքի դարավոր պատմութիւնն մեջ առաջին անգամ Ալամդարյանի «Յուցակով...» կյանքի էր կոչվում մի օրենք, համաձայն որի արգելվում էր դպրոցում ծեծի դորժադրութիւնը: Ալամդարյանը դեմ էր կոստումիւթյանն առհասարակ և ուսուցչից պահանջում էր նուրբ վարձկնոգութիւն ցուցաբերել դեպի աշակերտը: Այս խնդիրը նա արծարծել էր դեռևս լազարյան ճեմարանում զրաժ իր նամակներում, բայց միայն Նիրսիսյան դպրոցում Ալամդարյանը հնարավորութիւն ունեցավ հատուկ օրենք սահմանել այդ առթիւ: «...Հայհոյութիւնն ցուցանէ զգոհակութիւն և զտկարութիւն վարժապետին ի սանձահարութիւն ստահակութեանց համբակաց և իբրև զաննշան բոմբին իմն թնդեալ ի դորժարան լսելեացն՝ ցնդի յօդս և ի քթթել մի ական չքանայ. մոլութիւնն հայհոյեալ անվնաս մնայ ի տեղուց իւրում, և բերան վարժապետին առ փոքր փոքր սովորեալ յարտասանութիւն սոյնօրինակ անտեղութեանց՝ երբեմն և յակամայս ևս հանցէ զայսպիսիս յաններելի դայթակղութիւնն ամենայն լսելեաց»¹⁷:

Այսպիսով, Ալամդարյանի «Յուցակի...» ամենալուսավոր կետերից մեկը ծեծի մերժումն էր, որի փոխարին նա կարող և կանոն խախտող աշակերտի նկատմամբ պատժի մեղմ միջոց էր առաջարկում: «Գան և ծեծ մի՛ լիցին ի դպրոցի: Աշակերտը երրորդ նախապատիւ դասակարգին իսպառ ազատ լիցին յայնցանէ, և ի թիթեագոյն յանցուածն հրամայեացի նոցա կամ ի դուճս անկեալ ի կինդրոնի դասատանն մնալ ժամս ինչ, կամ մրել զերկսս նոցա և կամ արգելուլ զգնալն ի ճաշ...»¹⁸:

17 Ալ. Նրիցյանց, Պատմութիւն..., էջ 94:

18 Նույն տեղում, էջ 94—95:

Ալլամդարյան-մանկավարժը այս խնդրում ևս պահանջում էր անհատական մոտեցում ցուցաբերել. մանկավարժական նուրբ մեթոդներով հանգամանորեն քննել աշակերտի թույլ տված գանցանքի պատճառները և ապա համապատասխան պատիժ սահմանել: Ի դեպ, նկատենք, որ Ալլամդարյանի այս պահանջը հետագայում լիապես կիրառեց նրա արժանավոր ժառանգորդը՝ Խաչատուր Աբովյանը, դպրոցից արմատապես վերացնելով պատժի խստագույն բոլոր մեթոդները:

Ուշագրավ են նաև Ալլամդարյանի մշակած սկզբունքները բուն դասավանդման պրոցեսի վերաբերյալ: Նա առաջադրում էր յուրաքանչյուր դասի համար, այժմյան հասկացողության մեջ, պլան ունենալու անհրաժեշտությունը: «Օրէն է իւրաքանչիւր վարժապետի ունիլ զառանձին դասատետր, ուր համառօտեալ նորա զամենայն սերտելի կանոնս ուսուցանելի առարկայիցն և ըստ կարի պարզաբանեալ զամենայն մթութիւնս, ի վերայ նորա ասիլ զգասն և հրամայել աշակերտացն ընդօրինակեալ զայն՝ առնուլ ի բերան՝ և ըստ այնմ տալ զպատասխանի ի պայմանեալ ժամանակի...»¹⁹:

Ալլամդարյանը բարձրացնում էր ուսման պրոցեսում տեսականը գործնականին զուգակցելու խնդիրը: Նա՝ չէր մոռանում դպրոցական կարգ ու կանոնի հետ կապված և ոչ մի մանրուք: Նա արգելում էր ուսուցիչներին որևէ առիթով աշակերտներից նվերներ պահանջելը. «Եթե ոք յաշակերտաց ի նշանաւոր աւուրս ինչ տարւոյ ընծայ իմն մատուցէ վարժապետաց՝ յաղնուականութիւն կամաց նորա թողցի առնուլ զայն կամ ոչ, յայլ նոցա պահանջիլ ինչ՝ արգելեալ է իբրեւ գործ ամոթալի և հակառակ պատուոյ հիմնադրին»²⁰:

Ուսուցչին մեծ պահանջներ ներկայացնելով հանդերձ, Ալլամդարյանը միաժամանակ տալիս էր նրան արտոնություններ էլ, օգտամանով, որ նա չչարաշահեր դրանք և զանց չառնէր կանոնադրությամբ սահմանված օրինքները: Կարգապահությունը, օրինապահությունը գործի հաջողության երաշխիքն են, առանց որոնց մանկավարժության մեջ հնարավոր

19 Նույն տեղում, էջ 101:

20 Նույն տեղում, էջ 94:

չէ հաջողությունների հասնել: Այս հիմնական պահանջից են բխում «մանրուք» թվացող այն հարցերը, որոնց նմանապես անդրադարձել է Ալամդարյանն իր «Յուլյակ»-ում: «Եթէ պատահիցէ միում ի վարժապետաց գործ ինչ խափանիչ դաւլըստեան նորա ի դասատունն՝ մի իշխեսցէ առանց հրամանի հիմնադրին երթալ՝ ուր ինքեան կամք իցեն, այլ ընկալցի զհրաման և խնդրեսցէ ի միոյ ի պաշտոնակցաց իւրոց վերակացու լինել աշակերտաց փոխանակ ինքեան և զբաղեցուցանել ի գործս իւրեանց:

«Զէ՛ օրէն վարժապետաց ի տօնս ինչ ինքնազուլս արձակել զաշակերտս, այլ միշտ ըստ տօնացոյց աղիւսակին վարիլ: Մի՛ խառնեսցին վարժապետք զանձինս իւրեանց ի կառավարութիւն դպրոցիս, այլ զիտացեն միայն զժամս իւրեանց և զպաշտօն դասասցութեան ամենայն ջերմեռանդութեամբ:

«Զէ՛ օրեն վարժապետաց յաւուրս կիւրակէից կամ ազատութեան աշակերտաց յուսմանէ, կամ զկնի հանապազորդն սովորական դասուցն տանիլ զաշակերտ ի բնակարանս իւրեանց, և անդ առանձինն դաս ստել նոցա կամ յայլ ինչ պարապեցուցանել: Այսպիսի գործք բաց յանկարգութեանէն՝ ցուցանեն զահասիրութիւն վարժապետին, զկողմնապահութիւն և կամ զկեղծաւորութիւն: Յետ լրութեան պայմանեալ ժամուց դասասացութեան հարկ է վարժապետաց առանձին և աշակերտաց առանձինն գնալ ի բնակութիւնս իւրեանց»²¹:

Ալամդարյանի մանկավարժական մեթոդական առաջարկները բխում էին դարի ոգուց և խստորեն հաշվի էին առնւում տուկա հնարավորությունները: Մի կողմից դասագրքերի պակասությունը, մյուս կողմից դասավանդիչին նյութի բարդությունը աչքի առաջ ունենալով, նա պահանջում էր ուսուցչից դասը վարել այնպես, որ աշակերտը այն հիմնականում յուրացնի դասարանում, դասավանդման ընթացքում և տանը մեծ դժվարություններ չկրի դասագրքի բարդ

²¹ Նույն տեղում, էջ 96—97:

հողվածները յուրացնելու գործում: Այստեղ Ալամդարյանն անուղղակիորեն քննադատում էր ժամանակի ուսումնական ձեռնարկները, որոնք բարդ էին և իր իսկ խոսքով ասած՝ «խրթնածածուկ»։ «Քանզի անհնարին է ի վերայ տպագրեալ ընդարձակ և խրթնածածուկ բառիւք յօրինեալ մատենի հեշտաւ դաս ասել և նովին անվթար իմացուցանել զմիտս բանին թերուսումն համբալին, մանավանդ զի և հեղինակք իսկ նոցին ոչ ի վերայ նոցա ասեն զդաս աշակերտաց իւրեանց»²²։

Հաշվի առնելով այս դժվարությունները, նա առաջադրում էր դասավանդման գործնական եղանակ: Ալամդարյանի ըմբռնմամբ դասավանդվող նյութը պետք է մատուցվեր՝ սկսելով պարզից, հիմնական և օժանդակ բոլոր միջոցներն ու մեթոդները գործի դնելու եղանակով: Միայն գրանով կարելի էր վարպետնել աշակերտի մեջ աշխատասիրություն, ընթերցասիրություն, զրեկու, արտասանելու, վայելչագրության սեր, կողմնակի գիտելիքներ ձեռք բերելու ձգտում և այլն: Ներսիսյան դպրոցում Ալամդարյանի ջանքերով ստեղծվեց վայելչագրության մի ինքնատիպ ոճ, որ հայտնի դարձավ «Ալամդարյանի ձեռք» անունով:

Ալամդարյանի, որպէս տեսուչի, գործունեության շրջանակները զնալով ընդարձակվում էին: Ինչպէս Մոսկվայում, այնպէս էլ Թիֆլիսում, դպրոցի հետ կապված ներքին և արտաքին, մեծ ու փոքր հարցերի նախապատրաստումը, առաջադրումը և լուծումը կատարվում էր նրա անմիջական մասնակցութեամբ: Մանավանդ ուսումնական առաջին և երկրորդ տարվա խնդիրներն այնքան շատ էին ու այնքան բազմատեսակ, որ խլում էին նրա ողջ ժամանակը: Ալամդարյանին մտահոգում էր դասագրքերի հարցը: Ամեն հինգ-վեց աշակերտի հազիվ մեկ դասագիրք էր հասնում: Այս պատճառով նա շուտափույթ հրատարակում է ուսերենից թարգմանած իր «Քրիստոնէական վարդապետութիւն» դասագիրքը (1825):

Ներսիսյան դպրոցը հենց առաջին օրվանից գտնվում էր հայ հասարակության ուշադրության կենտրոնում: Ամենքը

²² Նույն տեղում, էջ 101.

շտապում էին իրենց երեխաներին տալու այդ դպրոցը: 1825 թվականի առաջին ամիսներին դպրոցի աշակերտների թիվը հասնում է 216-ի: Սա փոքր թիվ չէր նորաբաց դպրոցի համար, սակայն համապատասխան ուսուցիչներ չկային և Ալամդարյանն ստիպված էր զբաղվել նաև այս գործով: Մեծ ջանքեր էր պահանջում տպարանի կազմակերպումը, որի հետ կապված նախապատրաստական աշխատանքները նա սկսել էր դեռևս Մոսկվայում հղած ժամանակ՝ Աշտարակեցու հանձնարարությամբ: Ալամդարյանը վարում էր դպրոցի նորաբաց տպարանի և վարչական և հրատարակչական գործերը: Ուսումնա-կրթական գործունեության հետ միասին Ալամդարյանի վրա էր դրված նաև Թիֆլիսի հայոց եկեղեցական համայնքի կառավարումը. «Ձեռն անձանօթ բաղմաղբաղ պարտաւորութեանցն Ձերոց ի Ձերում պաշտօնի ուսուցչութեան... կարգեմ զՁեզ զառաջինն այժմ կառավարիչ բարեկարգութեանց սրբոց եկեղեցեաց Թիֆլիզոյ...», — հայտնում է Աշտարակեցին Ալամդարյանին²³: Ալամդարյանի հետ, որպես Աշտարակեցու նշանավոր գործակցի, հաշվի էին նստում ռուսական տերության ներկայացուցիչները: Ալամդարյանի համբավը տարածվում էր ներսիսյան դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքի, ուսման որակի, կարգ ու կանոնի մասին խոսվում էր ամենուր:

Շուտով Ալամդարյանն արժանանում է պետական պարգևի: 1827 թ., համաձայն Աշտարակեցու 1825 թ. դեկտեմբերի 12-ի գրության, «բարձրագոյն բարեհայեցութեան» է ներկայացվում Ալամդարյանի «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան» գիրքը, որ նա թարգմանել էր դեռևս Մոսկվայում հղած տարիներին ու տպագրել Թիֆլիսում և Ռուս-հայերեն դորճնական բառարանը, որոնց համար նրան շնորհվում է «ադամանդակուռ խաչ»:

1827 թ. մարտի 5-ին Ալամդարյանն արժանանում է կաթողիկոսի օրհնության կոնդակին, որով Եփրեմն իր գոհունակությունն է հայտնում հայ և այլազգի երեխաների կրթու-

²³ Մատենադարան, Ներսես Աշտարակեցու ֆոնդ, թղթ. 166, վավ. 509:

Բյան ասպարեղում նրա հայրենանվեր գործունեության համար. «...յաղագս անձնանուէր կամաց ձերոց և փութոց ի յառաջագիմութիւն աշակերտաց բազմութեան մանկանց հայոց և ալաւանց, որոց գտայ ականջալուր և ականատես...»²⁴:

Թիֆլիսի միջավայրը, արտակարգ քաղաքական իրադարձություններով լի կյանքը մի նոր ուժ են ներարկում Ալամդարյանին: Այս պայմաններում առավել ցայտուն է դրսևւորւում Ալամդարյան բանաստեղծի, մանկավարժի և քաղաքացու նկարագիրը: Աճում, զարգանում են նրա մեջ արդեն արմատավորւած ազգային ազատագրական գաղափարները:

Սկսւում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Փոխւում է Ալամդարյանի աշխատանքային կյանքի բնական ընթացքը: Վարչական, ուսումնա-կրթական, տնտեսական և ալ կարգի բոլոր գործերը նա վարում է անձամբ՝ կրկնապատկելով իր եռանդը, հարմարւելով արտակարգ հանգամանքներին: 1827 թ. ապրիլի 2-ին Ներսես Աշտարակեցին մեկնում է պատերազմի դաշտ: Ճանապարհին՝ Զալալօղլիից, նա գրում է Ալամդարյանին. «...Այսօր, ի 6 ամսոյս ժամանակալսյսր ընդ արևածագն դտաք յառաջ քան զմեզ իբրև քառորդ մի ժամու ճանապարհորդեալ նորին գերազանցութիւնն Բեկենդորֆն հանդերձ զօրօք, ի նանապարհն ցանկալի է մեզ և քազմաց, որում և մեք ընթանամք զկնի, որպէս քաջայայտ է, հոգոյ յոժարութեամբ»²⁵,

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Ներսես Աշտարակեցին և Ալամդարյանը նամակագրական սերտ կապ էին պահպանում. առաջինը գրում էր պատերազմական գործողությունների, ռուսական զորքի հաջողությունների, իսկ երկրորդը՝ ուսումնարանի և տպարանի գործերի ընթացքի մասին: Այդ օրերին Ալամդարյանը խորապէս ապրում էր իր ժողովրդի քաղաքական ճակատագրով: «Անվերապահորեն:

24 Մատենադարան, Կաթողիկ. դիվան, Բղթ. 55, վավ. 32ա:

25 Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, Բղթ. 166, վավ.:

կողմնորոշված լինելով դեպի Ռուսաստանը, նա տենդագին հետևում էր պատերազմական գործողությունների ընթացքին: Հայերը ռուսական բանակում արիաբար կռվում էին Կովկասյան բանակի զլխավոր հրամանատար գեներալ Երմոլովի զլխավորությամբ: Պատերազմը բախտը կանխորոշում է Շամխորի մոտ տարած հաղթանակը, որին հաջորդում են մեկը մյուսի հոռից հաղթական այլ ճակատամարտեր: Կանոնավոր զորքերին օգնության են հասնում նաև հայ կամավորական ջոկատները²⁶:

1827 թ. մայիսի 15-ին հայկական կամավորական զունդը Մուղնու եկեղեցու բակում հրդվում է հավատարիմ լինել կայսեր և հայրենիքին: Ալամդարյանը հանդես է գալիս մի կրակոտ ճառով. «Անցանէ ահա դարն հինգերորդ, ո՛վ որբ Հայաստանի, յորմէ հետէ զրկեալ կամք ի թագաւորութենէ, ի հայրենեաց և յամենայն ժառանգութեանց նախնեաց մերոց. հեծեմք ընդ ծանր լծով քրիստոսատեաց պարսից, վշտացեալ, թախծեալ ընդ անրով ծառայութեան աշտոցիկ բարբարոսաց, զի կողոպտեցին սոքա ի մէնջ ոչ զարտաքին ստացուածս և եթ, այլ յաւար հարին և զբարոյական և զբնատուր ձիրս հայկազանցս:

Մեք ստուիրք եմք մերոց նախահարց, չեմք ժառանգորդք արութեանց նոցա և առաքինութեանց, այլ ուրուական նոցա: Յառեցէք զակն ձեր ի հայրենի պատմագրութիւն՝ գծագրեալս արինազանդ տառիւք և հաւատասջիք յայս դառնապէս ճըշմարտութեան...

Ո՛վ հայք, ջերմեռանդութիւն ձեր արժանապէս վարձատրեալ է... Դուք ունիցիք ընդ սեպհական դրօշակօք ձերովը զսեպհական գունդս: Զիդ բաշխի զէն, վասն հաստատելոյ զանդորրութիւն նեղեալ հղբարց ձերոց, վասն պարգեւելով զապահովութիւն ընտանեաց ձերոց, վասն գտանելոյ զողորմութիւն թագաւորի և վասն պաշտպանելոյ հայրենեաց...»²⁷:

Ալամդարյանն օրհնում է հայկական դրոշակը, իսկ հայ

26 Տէ՛ս Ա. Երիցյանց, Պատմություն..., էջ 151:

27 Ա. Երիցյանց, Կովկասի հայք, մասն Ա, 1894, Թիֆլիս, էջ 272—273, 275—276:

զինվորները երգվում են այդ դրոշակի ներքո: Աշտարակեցու հանձնարարութեամբ նա ուսերեն լրագրերից թարգմանում և դպրոցի տալարանում տպագրում է ուս-պարսկական պատե-րազմի ընթացքի վերաբերյալ հատկապես այնպիսի նյութեր, որոնք ժողովրդին հուսադրում էին ապագայի նկատմամբ, ոգևորում համախմբվելու՝ և օգնելու ուսական բանակին:

1827 թ. հոկտեմբերի 1-ին ուսական բանակը Երևանը ազատագրում է պարսիկներից: Ալամդարյանը տեսնում է իր ժողովրդի դարավոր հրազանքների իրականացումը: Նա ող-ջունի ու շնորհավորանքի նամակներ է ուղարկում իր կուսա-կիցներին: Պատմական այս մեծ իրադարձությունը նա գնա-հատում է որպես «դարագլուխ ազատութեան և հրանութեան մերոց ապագայից»։ «Զկնի բազմադարեան ակնկալութեան վերջապէս արար զմեզ արժանի նախախնամութիւնն երկնից տեսանել և լսել զազատութիւն ամենասիրելի հայրենեաց մե-րոց յընդ լծոյ տառապանաց ապառում բռնաւորաց,— գրում է Ալամդարյանն Աշտարակեցուն:— Այս ձայն աւետեաց նախ հնչեալ ի քաղաքի աստ 5 ամսոյս և ապա գրաւորապես յՃ-ն, ելից զհլից զամենեցուն զսիրտս անպատում ուրախու-թեամբ, վասնորոյ և զօրհնութեան երգ ամենեցուն և բերան առեալ՝ նորօրինակ փառատրութեամբ զպարգևատուն ամե-նայն բարեաց զԱստուածն Իսրայելի, օրհնէին և օրհնեն. ես ևս ընդ նոսին մատուցեալ զԱստծոյն՝ Աստծոյ, խոնարհաշունչ համբուրիւ սուրբ զարշապարաց չնաշխարհիկ քահանայապե-տիդ մեծի՝ շնորհաւորեմ զիրկութիւն Հայաստան աշխարհի յերկաթի հնոցէ անագորոյն պարսից և զլրութիւն բազմամեաց փափաքանաց քրիստոսատիպ սրբազան հովուապետիդ իմոյ, տեառն և հօր...»²⁸:

Պատերազմի խառն ժամանակներում և հտպատերազմ-յան անհանգիստ իրադրութեան մեջ Ալամդարյանի վրա էին

28 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 208: Երևանի առման մասին Աշտարակեցին Ալամդարյանին հայտնել էր հոկտեմբերի 3-ի նա-մակով, որը, սակայն, սուրհանդակը սխալմամբ տարել էր Պետերբուրգ և միայն վերադարձին՝ նոյեմբերի 14-ին հանձնել Ալամդարյանին: Նույն տեղում, թղթ. 55, վավ. 211:

դրված նաև հոգևոր կառավարության հետ կապված դատական գործերը, որոնք ղեկավարում էին նրան ղօր ու գիշեր:

Այդ բոլորով հանգերձ, Ալամդարյանի ուշադրության կենտրոնում էին աշակերտների առաջադիմության, ուսումնական պրոցեսի հետ կապված հարցերը: «...Ուսումնարան մեր և սպարան ողորմութեամբ բարձրելոյն ընթանան անընդհատ զասպարէզ յառաջադիմութեան իւրեանց: Քարողն տպագրեցաւ և կազմի այժմ, յորոյ ղնշանակեալ գումար: առաքեցից ընդհուպ առ օրս հրամանագրեալ էր Զեր...»²⁹: Նա անընդհատ նորամոծութիւններ էր անում դպրոցում: 1827 թ. հունիսի սկզբներին դպրոցում բաց է անում մի դասարան ևս: Նույն օրերին սահմանում է նաև ամառային արձակուրդների կարգը, համաձայն որի, ամառնը միայն առաջադիմ աշակերտներն էին պարապում՝ օրական երկու ժամ: Պակաս լարվածութիւն ու եռանդ չէր պահանջում տպագրական գործը: 1827 թ. հունիսին սկսվում է Մ. Զամչյանի Հայոց քերականության տպագրութիւնը: Ալամդարյանն ուշի-ուշով հիանում էր տպագրության ընթացքին և մամուլ առ մամուլ ուղարկում Աշտարակեցուն: Ի դեպ նկատենք, որ Զամչյանի քերականության առաջաբանը գրիլ է Ալամդարյանը: «...Տպագրութիւն քերականութեանն յաւարտ իւր փութայ, հա՞րկ իցէ ղյառաջաբանութիւն ինչ յօրինիլ վասն նորա լէ՛ռչ, ևս ինքնագլուխ չհամարձակիմ խորհիլ ինչ...»³⁰:

Ստանալով Ներսիսի համաձայնութիւնը, Ալամդարյանը գրում է առաջաբանը և պատրաստ վիճակում ուղարկում նրան՝ քննության: «...Զառաջաբան քերականութեանն պատրաստեալ մատուցից ընդ հուպ մեծախնամ տէրութեան Զերում ի դատաքննութիւն՝ որում ամենեկին ոչ ներհակի սղութիւն ժամանակին»³¹:

Ալամդարյանը, հաջողութիւններով ոգևորված, Աշտարակեցուն գրում է. «Ամենաջիւղմուտն փափագանօք համ-

29 Մատենադարան, Կաթ. գիվան, թղթ. 55, վավ. 192:

30 Նույն տեղում, վավ. 210:

31 Նույն տեղում, թղթ. 55, վավ. 213:

բուրիւով զսուրբ զարշապարս ամենաուրախիւ բազմերախտ ծնողութեան Զերոց գոհանամ ի խորոց սրտէ վասն քաջալիրութեանցն Զերոց յանվեհերն աշխատասիրութիւն և յանտրրտունջ տքնութիւն ի գործս՝ յանձն արարեալս իմումս նուաստութեան... որքան բազմանան զբազմունք իմ, այնքան զօրանալ առողջութիւն իմ, այնքան կալղուրին յողուածք մարմնոյ իմոյ...»³²։ Ի հատուցումն Ալամդարյանի այդ ջանքերի, Աշտարակեցին հատուկ զրությամբ դիմում է Թիֆլիսի զինվորական նահանգապետ Նիկոլայ Սիւլյագինին՝ դպրոցի տեսչին պարբերաբար աջակցություն ցույց տալու վերաբերյալ³³։

Ալամդարյանն արժանանում է նաև դեներալ Կրասովսկու հատուկ ուշադրությանը։ Վերջինս առանձնահատուկ վերաբերմունք ուներ ինչպես Աշտարակեցու, այնպես էլ Ալամդարյանի նկատմամբ։ Ռուս զինվորականը բարձր էր գնահատում նրանց անկեղծ ուսասիրությունը։ Նա քաջ տեսնում էր, որ այդ երկու նշանավոր հայ գործիչները խորապես մտահոգված են իրենց հայրենիքի ազատության գործով։ Մի առիթով Կրասովսկին խոստովանում է, որ ինքը պատիվ է համարում Աշտարակեցու նման խորհրդատու ունենալը³⁴։

Սակայն Թիֆլիսում ամեն բան հարկ չի անցնում։ Պատերազմի ավարտից հետո ձախորդությունները հաջորդաբար գլուխ են բարձրացնում։ Ալամդարյանի վիճակը ծանրանում է։ Հոգեորդ կառավարության գրագրությունները մի կողմից, մյուս կողմից Ներսիսյան դպրոցի, տպարանի և վաճառանոցի հազար ու մի հոգսերը, հաշվարկներն ու գործարքները կլանում էին նրա ժամանակը, վատնում, ջլատում ուժերը։ Այսուհանդերձ նա ջանք չէր խնայում ուսումնական գործն անխափան առաջ մղելու համար։

Աշտարակեցու բացակայությունը մեծ դժվարություն-

³² Նույն տեղում, վավ. 198։

³³ Տե՛ս նույն տեղում, վավ. 155։

³⁴ Ուշագրավ է, որ Կրասովսկին Հասան խանի գերությունից ազատագրված Սրապիոն անունով մի ուսու երեսայի խնամքն ու դաստիարակությունը հանձնում է Ալամդարյանին։ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 59, վավ. 381։

ների առաջ էր կանգնեցրել Ալամդարյանին. «...Յանթիւ պարզեա քաղցրագութ խնամոցն Աստուծոյ գերիվերոյն է այն, զի շնորհեցաւ ինձ անւանիլ պաշտօնեայ իսկատիպ պատկերիդ նորին՝ և ընդ հովանեաւ մարգասէր թեոյ Ձերոց անցուցանել զերիս ամս դառնացեալ կենաց իմոց և լրացուցանել զժամանակ ուխտադրութեանս... սիրտ իմ յուզեալ ի բազմապիսի կիրս տրտմախառն խնդութեան՝ ճնշէ յաշացս զարտօսը երախտագետ շնորհապարտութեան և անթարգմանելի գոհութեան, այսուամենայնիւ ոչ սակաւ տանջէ զիս շորեքամսեայ որբութիւն իմ ի դերօրինակ տերութենէ Ձեր և ի ծնողութենէ՝ որում պարտաւորեալ կամ հոգեով չափ մինչև ցվերջին կետ կենաց իմոց»³⁵,

Թեև Աշտարակեցին անսահմանորեն վստահում էր Ալամդարյանին, բայց վերջինս առանց նրա խորհրդի ու գիտության ոչ մի քայլ չէր կատարում: Ոչ միայն դպրոցի, այլև նույնիսկ իր կենցաղի հետ կապված հարցերը նա համաձայնեցնում էր Աշտարակեցու հետ: «...Ունիմ զերիս ընտիր ֆարաճայս, բայց հասարակսն իսպառ մաշեալք են, նմանապէս և կապայս. խնդրեմ զրել սրբազան Սիմէոն արքեպիսկոպոսի կարել տալ ի պէտս իմ զմի հասարակ ֆարաճայ և զմի հասարակ կապայ վասն զգնելոյ ի լուր աւուրս և յուսումնարանի... Յաղայ Շիրմաղանայ ստացա զկնի զ46 թուման. զ4 թումանն յանձն արար ստանալ ի պարոն Միրիման երեսփոխանէն՝ չկարացի ստանալ: Յայսմ գումարէ գնեցի զմի ձի, որ այժմ աշխատի ի գործս շինութեան, զի չգտի զկառավար դրօշկին. գին ձիոյն էր 51 ո. մնացեալ 409 ոտբլիքն՝ որովհետև ի 1-ին նոյեմբերի մինչև ց1 մայիսի, ընդ միջոցս 5 ամսոց բարդեալ կային ի վերայ իմ ռոճիկը վարժապետաց ուսումնարանին և գործավարաց տպարանին, վասնորոյ և վճարեալ ամենեցուն ըստ պարզ հաշուի տումարի իմում, ձեռնունայն մնացի այժմ և վասն մայիս և յունիս ամսոյս պակասին ռոճիկքն վարժապետաց և գործավարաց տպարանին՝ դորոց զկարգաւորութիւնս և զյաւելուածն մատուցեալ եմ

35 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 55, վավ. 202:

առանձին թղթով մեծերախտ քահանայապետութեան ձերում
ի 10 ամսու...»³⁶:

Ալամդարյանի գործունեության շառավիղը հետզհետեւ
լայնանում էր, մտերիմների ու ծանոթների թիվը մեծանում:
Աշտարակեցու փոխանորդը լինելով, նա պաշտոնական
շփման մեջ էր նաև Մոսկվայից ժամանած բարձրաստիճան
անձանց հետ: Թիֆլիս հեղափոխականներն ու
գործիչները առաջին հերթին այցելում էին հայոց ուսումնա-
րանն ու Ալամդարյանին: Վերջինս 1827 թ. հուլիսի 26-ին
ընդունում է ղեկավար Լազար Նդիազարյանին, որն ուղարկ-
ված էր Պասկևիչի հրամանատարության տակ գործելու:
Ալամդարյանն ի պատիվ նրա ճոխ ճաշկերույթ է կազմա-
կերպում, որին մասնակցում են Թիֆլիսի բարձրաստիճան
անձինք:

Ալամդարյանի անհաջողությունները հիմնականում
կապվում են Պասկևիչի և Աշտարակեցու փոխհարաբերու-
թյունների հետ: Նրանի գրավումից հետո կազմվում է ժա-
մանակավոր վարչություն, որը կոչված էր բարեկամելու նախ-
կինում ճնշված ու հալածված հայերի վիճակը, հոգ տանելու
նրանց ֆիզիկական ապահովության և նյութական բարեկե-
ցության մասին և այլն: Նրանի ժամանակավոր վարչության
հաստատմանը Աշտարակեցուն նպաստում էր գեներալ Կրա-
սովսկին: Սակայն Պասկևիչին դուր չէր գալիս Ներսեսի և
Կրասովսկու բարեկամությունն ու համագործակցությունը:
Պասկևիչը Կրասովսկուն և Աշտարակեցուն ներկայացնելով
իրեն անվտանգելի տարրերի՝ հեռացնում է ասպարեզից:
Նրանի հայկական վարչությունը հօդս է ցնդում: Պասկևիչը
չի թաքցնում իր քաղաքական նկատառումները: Այդ օրերին
կոմս Դեբիչին նա գրում է.

«...Չեմ ծածկում ձեզանից և իմ արած սխալներս, որոն-
ցից մեկն էլ այն է, որ Նրեանը նվաճելուց հետո Ներսեսին ևս
մասնակից արի այս երկրի վարչության մեջ: Բայց ես երբեք
չէի կարծիլ, թե այս արքեպիսկոպոսը, որ ամեն բանում ջեր-
մեռանդություն էր ցույց տալիս, հանձն է առել յուր պաշտո-

³⁶ Նույն տեղում, վավ. 196:

ներ միմիայն այն նպատակով, որ յուր բոլոր հոգատարությունը դործ դնե բացառապես հայոց համար և, հոգ շտանելով պետական շահերի մասին, ավելի նախադասե հայոց հոգևորականության և մանավանդ էջմիածնի վանքի շահերը: Ես չէի կարող նմանապես նախատեսանել, որ գեներալ Կրասովսկին կդառնա միմիայն Ներսեսի կամաց կատարող...»³⁷:

Ներսեսի հանդեպ ունեցած Պասկևիչի թշնամանքն ու հալածանքը տարածվում է նաև նրա գաղափարակիցների, մտերիմների նկատմամբ, որոնց մեջ առաջինը Ալամդարյանն էր: Նրա վիճակն անտանելի է դառնում հատկապես այն բանից հետո, երբ, 1828 թ. օգոստոսի 6-ին, Ներսես Աշտարակեցին ուղևորվում է Բեսարաբիա: Ըստ էության Ներսեսն աքսորվում էր: Դա գաղտնիք չէր ժամանակակիցների համար. «Ամենքին հայտնի էր,— գրում է Նրիցյանը,— որ երեկվա հզորագույն արհիմ աշսոր Պասկևիչի կամքով աքսոր է գնում: Սարսափ տիրեց Ներսեսի բարեկամաց և համակրողների վրա, որոց անունները ոստիկանության ձեռքով արդեն գաղտնի ցուցակագրվում էր: Հազիվ Ներսեսը Թիֆլիսից ոտքը դուրս դրեց, որ ուսումնարանի վարժապետները վախից հրաժարվեցին շարունակել յուրյանց սլաշտոնները, պատճառ բերելով, սակայն, թե վերջին ժամանակները կանոնավոր չեն ստանում ուժիկը: Արժրունին և Շերմազանյանը ևս միառժամանակ հտ քաշվեցին, որովհետև լուրեր էին պտտում, թե շուտով դոքա ևս պիտի սև կառքով աքսոր ուղարկվին: Օգոստոսի 8-ին հարկ եղավ փակել ուսումնարանը: 400-ի չափ արձակված աշակերտները ցրվեցին, տարածելով ստահող լուրեր, որ իբր թե տերությունն արգելել է նոցա ուսանիլ և սպառնում է խիստ պատժի ենթարկել»³⁸:

Ալամդարյանը ծանր կացության մեջ էր, դպրոցը՝ փակման վտանգի տակ: Աշտարակեցու կուսակիցները ևս պառակտվում են: Հայ գործիչների մեջ առաջանում է երկու թև՝ ներսեսական և հականերսեսական: Պասկևիչը հովանավոր

37 Ալ. Նրիցյանց, Կովկասի հայք..., հ. 1, էջ 350:

38 Ալ. Նրիցյանց, Պատմություն..., էջ 168:

րում է հականերսեսականներին: Ալամդարյանի դեմ, որպես ներսեսի կուսակցի, ամեն կողմից դավեր են լարում, սակայն նա գերազույն ուժ է գործադրում դպրոցի աշխատանքը շարունակելու համար: Հակառակորդները, օգտվելով խառն իրադրությունից, աշխատում են ներսեսին ևս զրգռել Ալամդարյանի դեմ՝ նրա նկատմամբ անվստահություն առաջ բերել: Ներսեսի և Ալամդարյանի միջև սկսվում է դպրոցական, տնտեսական հաշիվների, ծախսերի, դրամական գործարքների վերաբերյալ անընդմեջ նամակագրություն:

Ջգայուն, ազնվախոհ Ալամդարյանը, որ ասում էր կեղծիքն ու ստորաքարշությունը, սրտի ներքին ցավով տեսնում էր, որ հենց իր միջավայրում հաղթում են նրանք, ովքեր առավել շատ են օժտված այդ հատկություններով: «Նեղեալ հմյոյժ ի խարդախութիանց վանակացելոց ոմանց, որոց անգութ և տարապարտ դաւաճանութիւնք սպառեցին և սպառեն դամեն հնարս համբերութեան իմոյ»³⁹:

Նա ներքին արտասովոր խռովքի պահեր էր ապրում հատկապես Աշտարակեցու կշտամբանքները կարդալով: Անսահմանորեն սիրելով նրան, զգալով նրա բացառիկ ուժն ու մեծությունը, նրա վիթխարի դերը հայ եկեղեցական ու քաղաքական կյանքում, Ալամդարյանը սրբությամբ կատարում էր նրա հրամանները, այնուամենայնիվ, Աշտարակեցու դժգոհություններն ու դանդատները չէին պակասում:

Սկզբից նկատենք, որ Ալամդարյանի ու Աշտարակեցու միջև եղած հակասությունները ոչ մի առնչություն չունեն նրանց քաղաքական համոզմունքների հետ, ինչպես փորձում են մեկնաբանել գրականագետներից ոմանք: «Այդ նույն տարիներին, — գրում է Շ. Նազարյանը, — հակասություններ էին սկսվել նաև Ներսեսի և Ալամդարյանի միջև. այդ ոչ միայն ներքին, անձնական հաշիվներով կամ ներսխայան դպրոցի հետ կապված առիթներով, այլ նաև նրանց քաղաքական հայացքների միջև առաջացող տարաձայնությունների

³⁹ Մատենադարան, Լազարյան ճեմարանի արխիվ, Թղթ. 104, գ. 7, վավ. 47:

պատճառով, որոնք, անշուշտ, կարոտ են հանգամանալից լուսաբանության»⁴⁰:

Ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ Ալամդարյանի և Ներսիսի քաղաքական ըմբռնումների մեջ հակասություններ չկան, ինչպես նկատեցինք արդեն, նրանք ղինվորագրված էին պարսկա-թուրքական զավթիչների լծից Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու մեծ գաղափարին: Այս եզրակացությունը հաստատում է նաև Աշտարակեցու և Ալամդարյանի փոխհարաբերությունների հետագա ընթացքը: 1828 թ. վերջերին, Պասկևիչի հրամանով արտորվելով Քիշինե, Աշտարակեցուն մեծապես մտահոգում է իր կուսակցի և հավատարիմ գաղափարակցի՝ Ալամդարյանի վիճակը: Աշտարակեցին Քիշինե մեկնելու առաջին օրից իսկ վճռում է, ինչ գնով էլ լինի, հանել Ալամդարյանին այդ ծանր վիճակից, որ ստեղծվել էր նրա համար Թիֆլիսում: Միակ ելքը պաշտոնից հրաժարվելն էր:

1828 թ. սեպտեմբերին Ալամդարյանը հրաժարվում է Ներսիսյան դպրոցի տեսչի պարտականություններից: Ուսումնարանի կառավարության անդամները, հաշվի առնելով Ջրպետի մտերմական հարաբերությունները Պասկևիչի հետ, տեսուչ են առաջադրում Ջրպետին: Վերջինս, սակայն, այն դեմքը չէր, որ կարողանար փոխարինել Ալամդարյանին. դրանում շուտով հիանալի համոզվում են բոլորը: Ջրպետի տեսչության շրջանը տևում է միայն ութ ամիս՝ 1828 թ. սեպտեմբերից մինչև հաջորդ տարվա ապրիլը: Ջրպետի կարճատև տեսչության ընթացքում աշակերտների առաջագիմությունն ընկել էր, նրանց թիվը 400-ից իջել էր 180-ի: Ուսումնարանի խորհրդի որոշմամբ Ջրպետն ազատվում է տեսչի պարտականություններից, և Ալամդարյանը վերստին դառնում է տեսուչ (1829 թ. հունվարի 1-ից): Նրա գործադրած ջանքերի շնորհիվ աշակերտների մի մասը վերագաղնում է, և նրանց թիվը սեպտեմբեր ամսին արդեն հասնում է 213-ի:

40 Շ. Նազարյան, Հ. Ալամդարյանի գործունեության մոսկովյան տարիները, «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 197:

Ալամդարյանը ցավով է նկատում, թե Զրպետն ինչ վիճակի առաջ է կանգնեցրել դպրոցը:

«...Ակն յայտնի տեսեալ զանկումն բարեկարգութեան Ներսիսյան դպրոցի մերոյ յաւուրս կառավարութեան տեսուն Յակովբեայ Զրպետեանց՝ բարւոք վարկայ ի սկզբանէ ամսոյս վերստին ստանձնեալ զանաջին բռն իմ վերածել զուսումնարանն և զվարժապետսն և զաշակերտեալսն յառաջին ջերմեռանդութիւն իւրեանց ի ջանասիրութիւն և յաշխատանս. ի 400 համարագրեալ աշակերտաց մնացեալ կան միայն 180, այսպէս կառավարեաց ծանրագին պատուելին մեր յընթացս վեցից ամսոց և զքաղաքս ողջոյն լցոյց բողոքանօք՝ թէ խաբանօք բերեալ մեք զինքն աստ՝ սովամահ սպանանեմք...»⁴¹, — գրում է Ալամդարյանը Աշտարակեցուն:

Ալամդարյանի թշնամիները, Պասկեիչի զխաւորությամբ, շարունակում են հալածանքը նրա դեմ այնքան ժամանակ, մինչև որ հասնում են իրենց նպատակին: Ոստիկանությունը Ալամդարյանի վրա հատուկ հսկողություն է սահմանում, լրտեսները վխտում են նրա շուրջը: Նա կորցնում է իր անդորրը, ապրում և աշխատում է հալածական վիճակում: «...և զօր ամենայն համբաւին զաքսոր իմ երբեմն ի Բայազիտ, երբեմն ի Կարս, երբեմն յայլ տեղի: Միով բանիւ ամենայն նետք թշնամութեանց հզօրագոյն նեղչաց մերոց դարձուցեալ են առ իս. սիրտ իմ լեալ է նպատակ ամենայն նետաձգութեանց նոցա», — գրում է Ալամդարյանը⁴²:

Ալամդարյանը, այնուամենայնիւ, մենակ չէր: Այդ ժանր օրերին, երբ նրան սպառնում էր նույնիսկ ազատագրութեան վտանգը, ճշմարիտ բարեկամները նրա հետ էին և հուսադրում էին նրան: Հայ մտավորականութեան լավագոյն մասը, Թիֆլիսի ողջ հայ հասարակութունը դնահատում և հարգում էր Ալամդարյանին: Ավելին. նա մեծ հեղինակություն էր վայելում նաև ռուս և վրաց մտավորականութեան շրջաններում:

Պասկեիչին անհանգստացնում էր, թե ինչու Ներսեսը Ալամդարյանին է թողել իբրև իրեն փոխանորդ: Նա զաղտնի

⁴¹ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 63, վալ. 316:

⁴² Նույն տեղում, վալ. 321ր:

գրությամբ Եփրեմ կաթողիկոսին հարցնում է, թե արդյոք ի՞նչն է պատճառը, որ Թիֆլիսից հեռանալով, Ներսեսն իր աշխարհիկ և հոգեոր զործերի կառավարությունը հանձնել է Ալամդարյանի նման մի երիտասարդ վանականի այն դեպքում, երբ այդ թեմում կան այլ փորձառու և տարեց վարդապետներ: Արդյո՞ք Ներսեսը համաձայնեցրել է այդ քայլը կաթողիկոսի հետ: Ուշագրավ է, որ Եփրեմ կաթողիկոսը պատասխան գրությամբ հավաստիացնում է Պատկերչին, որ Ալամդարյանը լինելով «քաջ հայկաբան» և «ուսյալ» անձնավորություն, լիովին կարող է փոխարինել Ներսեսին:

Ալամդարյանի բարեկամները, որքան էլ անձնվեր ու հավատարիմ էին, այնուամենայնիվ անդոր էին պետական ուժի դեմ: Ներսիսյան դպրոցի տեսչի նկատմամբ ոստիկանական հետապնդումներն օրավուր խստանում էին: Այն, ինչ Պատկերչիչը չկարողացավ անել Եփրեմի օգնությամբ, իրականացրեց անձամբ, ոստիկանության միջոցով: 1829 թ. հունվարին Ալամդարյանին առաջարկում են հրատարակել հայերեն թերթ. վերջինս հրաժարվում է, պատճառաբանելով. «...ես ցարդ չկարեմ ներել ինձ յանձն առնուլ զայսպիսի զործ զայսպիսի ժամանակին, ակն յայտնի տեսնալ զփոթորիկ ցասման նոցա անդուլ մրրկօք յուզեալ ի վերայ ազգին մերոյ համօրէն»⁴³:

Նույն թվականի փետրվարի 9-ին Ալամդարյանը եկեղեցական զործերով մեկնում է Գորի, ուր տեղի հասարակությունը մտադիր էր հիմնելու հայկական և ռուսական դպրոցներ: Ալամդարյանն, ըստ երևույթին, ինքն էր այդ զործի նախաձեռնողը, նկատի ունենալով, որ Գորիի բնակիչները, ինչպես նա գրում է Աշտարակեցուն, մեծ մասամբ անգրագետ էին, բացառյալ վաճառականներից: «...Հասարակութիւն քաղաքիս միաձայն աղաղակէ և խնդրէ բանալ աստ վասն զաւակաց իւրեանց զփոքրիկ ուսումնարան հայ և ռուս լեզուաց. զի մեր ազգի ժողովրդականք քաղաքիս՝ արք և կանայք, առ հասարակ չգիտեն և ոչ զբառ մի հայերէն՝ բաց յայնոցիկ, որք

⁴³ Նույն տեղում, 63/316: Ալ. Նրիցյանցի գրքում («Պատմություն...», էջ 175) այս նամակը թվագրված է 1829 թ. հունվարի 20, այնինչ բնագրում ունի հունվարի 26-ի թվագրությունը:

նդեալ են ընդ ժամանակս ժամանակս գործովք վաճառակա-
նութեան յայլ և այլ քաղաքս արտաքոյ Գօրոյ... զբազում
իրաց պարզապէս գրել չէ հնար...»⁴⁴։

Ալամդարյանը Գորիում մնում է 22 օր՝ փետրվարի 9-ից
մինչև մարտի 8-ը։ Տեղական իշխանությունները սկզբում
լավ են վերաբերվում նրան, սակայն Թիֆլիսից ստացված
պարսավազրի ազդեցությամբ փոխում են իրենց վերաբեր-
մունքը, հավատալով զրպարտիչներին, թե իբր Ալամդարյա-
նը եկել է կողոպտելու եկեղեցական դրամները։ Գորիի օկ-
րուգի պետին՝ 1829 թ. փետրվարի 19-ին ուղղված գրությամբ,
Ալամդարյանը բացատրում է, որ ինքը գործով է եկել և ոչ
թե դրամ հավաքելու։ Վերջում հիշեցնում է, որ հայոց հոգի-
վոր վարչությունը եկեղեցական գործերում միայն հաշվետու
է հայոց կաթողիկոսին և այլ դավանությունների գործոց մի-
նիստրին։ Մյուս կողմից էլ Ալամդարյանին մտահոգում է
Ներսեսի կարծիքը. նա ստիպված մի առանձին բացատրու-
թյուն էլ Ներսեսին է հղում և շտապում փարատել վերջինիս
կասկածները։

Ալամդարյանը տեսնում և զգում էր իր դեմ օրավուր ա-
ճող թշնամանքը, որն արտահայտվում էր բացահայտորեն՝
ստորադասների անհնաղանդությամբ և մեծամեծների սպառ-
նալից վերաբերմունքով ու դարանակալումով։ Թիֆլիսի հո-
ղևոր թեմի հոտամնաց վանականները իրենց վարքագծով
սպառում էին Ալամդարյանի համբերությունը, հասցնում հու-
սահատության։ «...Յետ վերադարձի իմոյ ի Գօրոյ, այն է՝ ի
10-էն մարտի և ցայժմ զանազան անձինք թէ յեկեղեցակա-
նաց մերոց և թէ յաշխարհականաց ևս և ի ճորտոց իսկ մե-
րոց աւելի քան զքսան բողոքս են մատուցեալ նորին պայծա-
ռափայլութեան ի վերայ հոգևոր կառավարութեան տեղոյս,
կամելով կենդանւոյն քաղել զմեզ և մանաւանդ զիս...», —
գրում է Ալամդարյանն Աշտարակեցուն⁴⁵։

Ներսեսին գրած նամակներում Ալամդարյանը նկարա-
գրում է իր անհուսալի վիճակը և օգնություն խնդրում նրա-

⁴⁴ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 63, վավ. 321ա։

⁴⁵ Նույն տեղում, վավ. 343։

նից. «Գործք վիճակականք և առհասարակ ամենայն վերաբերակքն առ հոգևոր կառավարութիւն ժամ առ ժամ բազմապատկին. ես ի սպառ անօգնական և անտէր՝ չգիտեմ, թէ յինչ ձեռնարկեցից, տարակուսի մատնեն զիս բազմիցս, յորոց նպաստի թերեւ ինձ անկ էր ակնունել: Մի բան Ձեր, թէ յաւուր միում պարտ է ինձ հպիսկոպոսանալ՝ զինւորեալ է ընդդէմ իմ դամենայն հարս և զեղբայրս իմ...»⁴⁶:

Ալամդարյանի բոլոր գործերը խճճվում են: 1829 թ. ուսումնարանի և տպարանի վիճակն օրեցօր վատանում է, աշակերտների թիվը օրավուր պակասում, տպարանական պիտույքների հայթայթումը դժվարանում: Հսկողության տակ է առնվում նաև ներսիսյան դպրոցը. ոստիկանությունը մի հատուկ աշխատակից է պահում այնտեղ՝ հետապնդելու Ալամդարյանին: «...Ձօրն ողջոյն և զգիշերն ողջոյն մի ի գործակալաց պօլիցիայի անխոնջ հսկէ զպարսպօք վանացս՝ առ ի դիտել՝ թէ ո՞վ և ո՞վ երթեկէ առ մեզ. զօր ամենայն տան զթուղթ ծանօթարար առաքչի իւրեանց: Ես զօր ամենայն զրադատարանացս պատասխանեմ ընդ կատակս, թէ ոչ բնաւ տեսչիք ի վանս զանարժան ինչ սրբութիւն սորա, ինքեանք ևս միամիտ սրտիւ ծիծաղին ընդ տղայական խաղարկութիւն իւրեանց, բայց այնուամենայնիւ շարունակեն զհսկումն իւրեանց...»⁴⁷:

«...Վեհազնեայ Եղիազարն Եղիազարեանց աստ է և առողջ, այլ ոչ ի շնորհս. կնիազ Ամատունին, Միրօն Գրիգորիչ Ամիրովն, աղնուականն Արծրունի և այլ ծանօթ մեր օր աւուր հեռանան ի մէնջ. պարոն Խատիսովն և ոչ յամիսն մի անգամ համարձակի մտանել ի վանս մեր, եղբայր Ջեր ևս աղայ Կարապետն երկիցս է մտեալ ի վանս և այն գիշերայն...»

... Ես առ անի չկարեմ գրել զրոպ յամենայն փօշոտի՝ զի մի ըմբռնեցայց ի քակարդս անողորմից՝ որոց սիրտ խորացեալ է իսպառ ի գրութենէ... Երկնչիմ, քէ մի գուցէ յանդար մտատանջութենէս վտանգեսցի բանականութիւն իմ կամ

⁴⁶ Նույն տեղում, թղթ. 59, վավ. 373:

⁴⁷ Նույն տեղում, թղթ. 63, վավ. 321բ:

առողջութիւն առանց վաղաժամ մահուան... երեսանկեալ ազաշէմ դամենապատիւ մեծ քահանայապետութիւն Զիրհրամայել ինձ մարդասիրաբար՝ դալ առ ոտս գերաստիճանեալ տէրութեան Զերոյ՝ կամ գնալ ի սուրբ գահն էջմիածին, և կամ գոնէ առանձնանալ ի սուրբ նշանի վանս Հաղբատայ... ինձ աշուհետե անհնարին է մնալ աստ, առանց ենթարկելոյ զթշուառական գլուխ իմ ակնյայտնի մեծամեծ վտանգից...»⁴⁸, — գրում է Ալամդարյանը Աշտարակեցուն: Վերջինս հորդորում է շուսահատվել. «...Աստուածապաշտութեամբ երկայնամտութիւն մերոց նախահարց պաշտպանեաց գնոսա յամենայն հալածչաց նոցա Յագկերտէ, ի Լանկքամուրայ և յայլոց, որով և մեք անաւասիկ կամք և կեցցով, իսկ ամբարշտացն և հալածչաց մերոց հետք՝ հալածեալք յերեսաց յերկրի կան մնան հատուցմանցն արդարադատութեանց երկնից»⁴⁹:

Ալամդարյանի դեմ եղած բողոքներին Պասկեիչը շուտափուլթ պաշտոնական ընթացք է տալիս՝ նախապատրաստելով նրա վտարումը Թիֆլիսից: Իր նպատակին հասնելու համար նա օգտագործում է Ալամդարյանի հակառակորդներին՝ Զըրպետին և Սերովբե վարդապետին: Վերջինիս հանձնարարում է Զրպետի հետ քննել Ալամդարյանի դեմ գրված թղթերը: Պասկեիչը Սերովբե վարդապետին շահագրգռելու համար մինչև իսկ դրամական պարգև է խոստանում՝ իբր թի հաշվի առնելով նրա ցուցաբերած ջանքերը՝ ռուս-թուրքական պատերազմում:

Ահա Պասկեիչի գաղտնի գրությունը Սերովբե վարդապետին. «Ես հանձնարարեցի Թիֆլիսում գտնվող պրոֆեսոր Զրպետին թղթեր, որոնք վերաբերում են այս վայրի հայկական եկեղեցու վարչությանը, որոնց հիման վրա պետք է կազմվի պատասխաններ և առաջադրվի տվյալ եկեղեցու բարեփոխումը:

Յանկանալով, որ այս գործը որքան հնարավոր է շտապ

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, վավ. 384ա:

ավարտվի, ես խնդրում եմ Ձեզ, Թիֆլիսում հիշյալ պրոֆ. Զրպետի հետ զբաղվել դրանով: Իսկ վերջնական ավարտից հետո, վերցնելով ձեզ հետ այդ թղթերը, բերել դրանք ուղղակի ինձ մոտ:

Ինձ հայտնի է Ձեր ջանադրությունը, պատասխանատու լինել իմ արած հանձնարարության կատարման լրիվ հաջողության համար: Ըստ որում, ինձ համար հաճելի է, որ ամենաողորմած միապետը շնորհեց ձեզ, ըստ իմ ներկայացնելու 300 ռսկի՝ ի վարձատրություն անցյալ թուրքական կամսա-նիայում գործադրած ձեր ջանքերի»⁵⁰:

Բացի Սերովբեի վարդապետից և Զրպետից, Պասկևիչը քանիցս փորձեր է անում թշնամացնել Ալամդարյանի հետ և գրավել իր կողմը նրա բարեկամներից Սիմեոն Բզնունյանցին՝ խոստանալով Թիֆլիսի առաջնորդությունը:

«...Յարութիւն վարդապետն կվկայէ, որ քանիցս անգամ նորին գերազանցութիւն Պասկևիչն և այլ անձինք իմ քովս մարդ ուղարկեցին, թէ Յարութիւն վարդապետն քովիցդ հան, դու քաղաքումս լինիս յառաջնորդ կաւալեր և պինցիա կուստանես և ասութիւնք շատ. չլսեցի նոցա, թէ սրբազանութիւնդ ինչ որ կանոն դրել ես՝ չշեղիմ...»⁵¹:

Ալամդարյանի նկատմամբ փոխվում է նաև էջմիածնի վերաբերմունքը: Ուշագրավ է մասնավորապես Հովհ. Կարբեցու դիրքը. նա առերես ցույց է տալիս, որ գնահատում է Ալամդարյանին՝ իբրև ներսեսի կուսակցի: Բազմաթիվ ընծաներով զալիս է Թիֆլիս, իբր թե Ալամդարյանին էջմիածին տեղափոխելու նպատակով, սակայն տպավորություն է ստեղծում, թե չհաջողվեց իրականացնել իր ցանկությունը: Արտաքուստ նա Ալամդարյանին համարում է «ռսկի սյուն», իսկ ներքուստ չի համակրում ո՛չ նրան և ոչ էլ ներսեսին:

Թե որքան երկդիմի է եղել Կարբեցու դիրքը Ալամդարյանի նկատմամբ, երևում է ներսեսին գրած Վարդան Շիրմազանյանի մի նամակից:

«...Ձեռնարկութիւն յեպիսկոպոսութեան բարձր արժա-

50 ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, № 1854, թղթ. 11:

51 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 67, վավ. 336:

նասպատիւ Յարութիւն վարդապետին կախի լուսարարէն (Հովհ. Կարբեցի) զի արտաքին փաղաքշուքնամբն յամեցուցանէ, մինչ խափանեցի ալլուստ»⁵²:

Տարիներ անց, 1834 թ., երբ Կարբեցին կաթողիկոս էր և ուղում էր Ալամդարյանին՝ Նոր Նախիջևանից տեղափոխել էջմիածին (ցանկություն, որ Ալամդարյանը մի ժամանակ փայփայում էր), տեղի տպարանի և ուսումնարանի աշխատանքները տնօրինելու, դիմում է ներքին գործերի մինիստրին մի դադտնի գրությամբ: Բերում ենք այդ գրության պատասխանը, որից պարզ է դառնում Հովհ. Կարբեցու խաղացած բացասական դերը Հար. Ալամդարյանի կյանքում: Վրաստանի կառավարիչը գրում է Հովհաննես Կարբեցուն, թե քանի որ Ալամդարյանը գտնվում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդի տրամադրության տակ, հարկ է վերջինիս կարծիքն իմանալ, և ապա հիշեցնում է, որ նա (Կարբեցին), ժամանակին վտանգավոր համարելով Ալամդարյանին, թույլ չի տվել, որ նա հաստատվի էջմիածնում և այդ մասին հատուկ պարսավագիր (դանոս) է գրել ներքին գործոց մինիստրությանը: «...Գլխավոր վարչության պրասենյակում հղած գործերից ինձ հայտնի է դառնում, որ Ձերդ բարձրաստիճանությունը հավանություն չի տվել Ալամդարյանի վարքագծին: Վրաստանի առաջնորդ հղած ժամանակ (1830 թ. նոյեմբերի 4-ին, № 3 գրությամբ) հայտնել հր պարոն դենհրալ ֆելդմարշալին, որ Ալամդարյան քահանան ինքնագլուխ եկել է էջմիածին, ձգտում է եպիսկոպոսության աստիճան ստանալ և բավական անախորժությունների տեղիք է տվել: Նրա հեռանալով միայն երկպառակությունները դադարիլ են...»⁵³:

Ժամանակը չէր գործում Ալամդարյանի օգտին: Անձնական և պաշտոնական դիրքերից բխող թշնամանքը մի միասնական ճակատ էր ստեղծել նրա դեմ: Նա մի ելք ուներ միայն. ազատել իր ղուլխը այդ միջավայրից, որքան հնարավոր է շուտ, փախչել՝ էջմիածին, Հաղբատ, Սանահին, Մոսկվա,

52 Նույն տեղում, վավ. 293:

53 Նույն տեղում, թղթ. 82, վավ. 4:

Պուլիս, Հնդկաստան կամ այլուր: Եվ նա վճռում է հրաժարական տալ իր պաշտոնից: 1829 թ. հոկտեմբերի 26-ին Ալամդարյանը գիրում է Սինոդին. «...Քաղցրախնամ գթով հայեցեալ ի հնգամեա վաստակս իմ յօգուտ սրբոյ եկեղեցւոյ և ազգիս, հրամայել ինձ առանձնանալ կամ ի սուրբ մայր աթոռդ էջմիածին կամ ի սուրբ Աստուածածնա վանս Սանահնի և կամ ուր և հաճոյ թուիցի սրբազան Սիւնհոգոսիդ, ես ուխտեմ մնալ յանպայման հնազանդութեան մեծաւորի՝ իմումս առանձնութեան նշանակեալ տեղւոյն...»⁵⁴:

էջմիածնի «Բարձրագոյն խորհրդարանը»՝ Սինոդը, որոշում է. «...Յարութիւն վարդապետն Ալամդարեան, որ կարի իմն դահաւէժ երեկեցաւ ի խորհուրդս ի կամս ի դատողութիւնս իւր հրաժարեցուցանել գլխովին յիշխանութենէ ընդհանրական աւագ քահանայութեան և կառավարութեան ամենայն եկեղեցականաց հայոց Տփլիսիսայ կամ Վրաստանի և որպէս յառաջագոյն յատկացեալ էր առ գործս կամ պարտաւորութիւնս վարժապետութեան և տպարանի կառավարութեան ի նոսին և այժմ թողուլ զնա մնալ»:

Հաստատված է կաթողիկոսի ձեռքով՝ «Եղիցի ըստ այսմ. Կաթողիկոս ամենայն հայոց Եփրեմ»⁵⁵:

Այս վճռի հետ միասին Սինոդը Ալամդարյանին է ուղարկում հորդորագիր, ուր ասված է. «...Եւ ի ձէնջ Յարութիւն վարդապետ որդեակն մէր թէպէտ ունի զլեզուագիտութիւն, զհանճար և զկառավարութիւն, բայց երիտասարդական արիւն նորին անհամաձայն է արեան ծերունեաց, որով ոչ թէ միայն անձն իւրոյ, այլև սրբազնակատար օծեալն ծայրագոյն կառավարչութեան մերոյ և սինօթական կառավարութեան յղացեալ ծնաւ զանպատուութիւն, վասնորոյ արգելաւ ի հոգեւորական հրամանատարութեանց և ի պատիւ ծայրագոյն կառավարչութեան, թողեալ եղև ի մանկավարժութեան և տպարանի իշխանութեամբ (որ ըստ մարմնոյ անժանօթ է մեզ բազմաց), եթէ ետ այսորիկ կշռեսցէ զարիւնն իւր ընդ արեան

⁵⁴ Նույն տեղում, թղթ. 63, վավ. 281:

⁵⁵ Նույն տեղում, վավ. 281ա:

ծերունեաց, յուսալի է լինիլ պիտանի ազգի մերոյ: Ի 1829, հոկտեմբեր, ի սբ էջմիածին»⁵⁶:

Հալածանքը Ալամդարյանի դեմ ավարտվում է նրա հակառակորդների համար խիստ ցանկալի արդյունքով: Ալամդարյանն ազատվում է Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնից և հոգևոր կառավարության պարտականություններից: Այս ամենը, սակայն, չի գոհացնում նրանց. դավադիրները ձգտում են բանաստեղծին եթե ոչ ուղղակի բանտ նետել կամ աքսոր ուղարկել, ապա զոնե իսպառ շեղոքացնել, փակել նրա առջև հասարակական գործունեության ասպարեզը, բարոյական մահվան դատապարտել նրան: Ալամդարյանը հասկանում էր իր համար ստեղծված ծանր կացությունը, զգում իր շուրջը տարածված քաղաքական անվստահության մթնոլորտը: Նա մնացել էր միայնակ, անպաշտպան: Նրա հղոր հովանավորը՝ Աշտարակեցին, փաստորեն մեկուսացված էր Բնասարաբիայում, Թիֆլիսյան համախոհների խումբը՝ ջլատված, Ներսիսյան դպրոցի գործերը խառնափնթոր, ճակատագիրն անորոշ: Ինչպե՞ս դուրս գալ ստեղծված փակուղուց, ո՞ւր գնալ, ի՞նչ անել, որտե՞ղ փնտրել ճշմարտությունը, որտեղի՞ց լսել ձայնն արդարության:

Սինոդը 1830 թ. հունվարի 24-ի № 35 հրամանով որոշում է Ալամդարյանին Հաղպատ ուղարկել: «...Թէպէտ յառաջագոյն,— գրում է Նիքիմ Կաթողիկոսը,— կամք եղին դալ նմա աստ յաթոռս, այլ այժմ որովհետև փոխեցան պարագայք ժամանակին և հարկաւոր դատի նա այդր ի գալ նորոգ առաջնորդին, նամանաւանդ այժմիկ ի ներկայս տօթային է յոյժ եղանակն, վասնորոյ հրամայէ ձեզ Սինհոգոսս առաջագրել նմա ոչ ևս դալ այսր, այլ գնալ ի վանս Հաղբատու...»⁵⁷:

Մինչդեռ Ալամդարյանը հույս ուներ զոնե էջմիածնի միջոցով վերականգնել արդարությունը. «Ես խնդրեալ էի զհրաման դիմելոյ ի սուրբ գահն առ ի պարզ երանգօք նկարագրել առաջի որոյ պետք էին զաղէտս ազգիս և փշրեալ կառավարութեանն մերոյ, ահա սինհոգոսն և զայն արգելու... կուսա-

56 ՉՍՄՁ ՊԿՊԱ, Գ. Աղայանի ֆոնդ:

57 Մատենադարան, Կաթ. դիվան, Թղթ. 67, վավ. 247:

կալը բանիւ Սերովբէ եպիսկոպոսին և կնիադ Բեհբուզովին խնդրեալ է ի սրբազան հայրապետէն մերմէ բառնալ զիս ի վրաստանէ...»⁵⁸:

Վճիռը խիստ անարդար լինելու հետ միասին վերին աստիճանի վիրավորական էր. Ներսիսյան դպրոցի պատվարժան տեսչին ուղարկել Հաղպատի վանքը՝ դա նշանակում էր ազատագրել, աքսորիլ, կենդանի նահատակ դարձնել նրան:

Հաշվի առնելով Թիֆլիսի հայ մտավորականության պահանջը, Սիմեոն արք. Բղնունյանցը հատուկ խնդրագիր է ուղարկում էջմիածին՝ բացատրելով, թե այդ որոշումը որքան կործանարար նշանակություն կարող է ունենալ Ներսիսյան դպրոցի և հայ մանուկների կրթական գործի համար, հորդորում անպայմանորեն վերափոխել վճիռը՝ թույլ տալ Ալամդարյանին շարունակելու աշխատանքը Թիֆլիսում: Սինոդը, անձամբ Եփրեմ կաթողիկոսը, խնդրագիր է ստանում նաև Թիֆլիսի հայ հասարակության անունից: «Ալամդարյանին պատժի և աքսորի ենթարկելով, թշնամիք ձգտում էին գոցել և Ներսիսյան ուսումնարանը, որ հինգ-վեց տարվա մեջ նույն վարդապետի ջանքերով այնքան մեծ արդյունք է ցույց տված ազգիս: Ահա այս վտանգի առաջն առնելու համար քաղաքիս այն ժամանակվա ամենաընտիր և զարգացած անձինք համախմբվեցին՝ Ալամդարյանին և դպրոցս պահպանելու համար:

Այս կուսակցությունը, արհամարհելով թշնամյաց ուժը, 1830 թվի սեպտեմբերին բազմաթիվ ստորագրությամբ մի խնդրագիր ուղարկեց Տ. Եփրեմ կաթողիկոսին, որի մեջ նկարագրելով հիշյալ վարդապետի ծառայությունները ուսումնարանին, խնդրում էին վարձատրել արդեն էջմիածնում գտնվող Ալամդարյանին եպիսկոպոս ձեռնագրելով և հտ ուղարկել Թիֆլիս յուր դպրոցը ղեկավարելու: Եթե յուրյանց ցանկությունը կատարվի, ոգևորված խնդրատուները խոստանում էին վճարել Աթոռի բոլոր պարտքը»⁵⁹:

Թշնամանքն Ալամդարյանի դեմ ավելի խոր արմատներ

⁵⁸ Մատենադարան, Երեցյանի արխիվ, թղթ. 147, վավ. 32:

⁵⁹ Ալ. Նոյեցյանց, Պատմություն..., էջ 209:

ուներ, քան պատկերացնում էին նրա բարեկամները: Ալամ-դարյանին Հաղպատ ուղարկելու վերաբերյալ Սինոդի վճիռը իրականացնելու հարցում տխուր դեր է կատարում նաև Սերովբե վարդապետ Կարնեցին: Լինելով Պասկելիչի կամակատարը և մոլի ցարապաշտ՝ նա չէր հանդուրժում հայ ազգային առաջադիմական գործիչներին: Հասկանալի է, որ Սերովբե Կարնեցին պետք է համադորժակցեր Պասկելիչի հետ՝ ընդդեմ Աշտարակեցու և Ալամդարյանի: Այս բանը լավ գիտեր ինքը՝ Ալամդարյանը: «...Դարձայ յէջմիածին և գիտացի, թէ Սերովբէ արհին մատնեալ կուսակալին զեկն իմ ի դահն,— դրում է Ալամդարյանն Աշտարակեցուն,— յորդորեալ է տարագրել զիս ի Հաղբատ իբր զխոռվարար ոք և ներսիսեան: Նա չորրորդէ զթուղթ իւր առ հայրապետն վասն արսորելոյ զիս, ուստի երկու գիշեր և մի օր կացեալ անդր՝ ելի և բազում տառապանօք մօտի այսր ամսոյս 1 ընդ երեկո...»⁶⁰:

Ալամդարյանի Հաղպատ ուղարկելու վճռին ներքնապես դեմ էր նաև Եփրեմ կաթողիկոսը: Անձամբ ճանաչելով Ալամդարյանին և զնահատելով նրա ծառայությունները, նա չէր կարող համամիտ լինել նման անարդար որոշման, բայց հարկադրված էր ստորագրելու: Նա անզոր էր կանխելու կամ վերանայելու իր ղեկավարած Սինոդի որոշումը, քանի որ դա կնշանակեր ընդդիմանալ Պասկելիչին: Պետք է նկատել նաև, որ այդ շրջանում էջմիածնի ներքին դրությունը շատ խառն էր: Եփրեմ կաթողիկոսը երբեմն չէր ընկալում իր շուրջը կատարվող իրադարձությունների բուն իմաստը և այդ ծանր վիճակից ազատվելու համար, գերադասում է հրաժարվել կաթողիկոսությունից: Հովհաննես Կարբեցին, օգտվելով այդ իրադրությունից, նստում է կաթողիկոսական աթոռին:

60 Մատենադարան, Երիցյանի արխիվ. թղթ. 152, վավ. 207:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1830 թ. հոկտեմբերին Ալամդարյանը մեկնում է Հաղպատ: Իրականացվում է Պասկելիչի և նրա հայ կամակատարների երազանքը: Մեկուսացվում է Աշտարակեցու ամենահեղինակավոր կուսակիցը ևս, անգործության է մատնվում հայլուսավորական շարժման հռանդուն գործիչը: Փաստորեն անդեկ են մնում Ներսիսյան դպրոցն ու Թիֆլիսի հոգևոր թեմը:

Ալամդարյանը Հաղպատ է հասնում դառնացած սրտով, ֆիզիկապես և հոգեպես փշրված: Նա դեռևս Թիֆլիսում խուլերայով վարակված (այդ տարիներին Թիֆլիսում խուլերայի համաճարակ էր) գալիս է էջմիածին: Այստեղ նրա դրուժյունը խիստ ծանրանում է, զրեթի անհուսալի վիճակում նրան տեղափոխում են Երևան՝ հիվանդանոց, որտեղ հազիվ փրկվելով մահից, տակավին չապաքինված, նորից գալիս է էջմիածին և այնտեղից մեկնում Հաղպատ: «Գարուն» («Յամասավիրջն ապրիլի, զպատուհաս բացի») սքանչլի բանաստեղծությունը Ալամդարյանը գրել է Հաղպատում՝ իր կրած հոգեկան և ֆիզիկական անլուր տառապանքների ազդեցության տակ: Հաղպատում նա աքսորականի վիճակում էր՝ բառիս իսկական առումով: «...Յարուրիւն վարդապետն կամի գալ ի Բաղաբս ի Հաղբատայ, բայց ոչ կամին գալն. երևի քէ բանտարկեալ է,

փանիցս աղերսէ, որ գայ փաղափս առ բժիշկս, ոչ կամին. փանիցս ինձ գրէ, քէ գրեայ առ հոգեւոր ծնողն իմ, որ զիս ազատէ, տանի առ ինմն... Եթէ կարելի է, օր մի յառաջ ազատէ քանտէն... այսպէս նեղուրիւն չէ տեսած, վախեմ քէ չհամբերելով՝ վտանգի, յետինն չար լինի, փան զառաջինն: Այսպէս անձն դժուարագիտ է և ժամանակին հարկատու»¹:

Իր դարի համար արտասովոր, «դժուարագիտ», ինչպես բնութագրում է Սիմեոն Բզնունյանցը, Ալամդարյանը մնում է անհիւանդի վիճակում: Նկատենք, որ Պասկեիշը, Հովհաննես Կարբեցու և այլոց միջոցով քանիցս փորձեր է անում Ալամդարյանին իր կողմը գրավելու, ստիպան ապարդշուն. «Ես չկարացի յոժարամտիլ, զի դարձ հոտ էր դաշինն», — գրում է բանաստեղծն իր նամակներից մեկում:

Ցավոք, մեզ շատ տեղեկություններ չեն հասել Ալամդարյանի հաղպատյան կյանքի մասին: Պահպանվել է 1831 թ. մարտի 15-ի մանրամասն նամակը, հասցեագրված Խ. Աբովյանին: Դա մի թանկագին գրական հուշարձան է, որ արտացոլում է այդ բացառիկ մարդու, ազգանվեր մտավորականի հալածական կյանքի պատմության հաղպատյան էջերը:

Ալամդարյանի հաղպատյան օրերի վերաբերյալ հաղվագչու տեղեկություններ պարունակելու հետ միասին, այդ նամակը երկու խոշոր լուսավորիչների մտերմության պերճախոր վկայություններից է և հավաստում է նրանց զաղափարակցությունը: «Մեծ վատաբաղդութիւն է գիտուն լինելն յողբալի և յաշխարհացրիւ ազգի մերում», — գրում է Ալամդարյանը, — նկատի առնելով Աբովյանի և իր համար ստեղծված համանման վիճակը: Այս տողերը միաժամանակ ցույց են տալիս, թե որքան խորն է եղել հալածված ու տանջված, հոգեպես շղթայված բանաստեղծի ողբերգությունը:

Ալամդարյանը Աբովյանին գրում է նաև Հաղպատից Քիշինե մեկնելու իր ցանկության և այդ առթիւ Աշտարակեցու մտահոգության մասին: «Ի կաղդուրիլ առողջութեանս, եթէ տեսնու կամք նպաստեցէն՝ շուեցից աստի ի Բեսարաբիայ առ

¹ Մատենադարան, Աշտարակեցու արխիւ, թղթ. 167ա, վավ. 818:

մեծերախտ և անմոռանալի բաղմարդիւն մեծաւորն իմ՝ որ կոչէ զիս առ ինքն առ ի սպեղանիւ զխղայթս... իմոց»²:

Իրոք, Աշտարակեցին հենց առաջին օրերից, նամակներով հորդորում էր Ալամդարյանին՝ դիմանալ դժվարություններին, ղինվել համբերությամբ, մինչև որ ինքը կկարողանա հաջողացնել նրա ֆիշինև տեղափոխելու գործը: 1831 թ. հունիսի 12-ի գրությամբ Աշտարակեցին դիմում է օտար դավանությունների միևնույն Դ. Ն. Բլուդովին և խնդրում, որ նա, հաշվի առնելով ռուսական տերությանը մատուցած իր երեսնամյա ծառայությունները, միջնորդի կայսեր առաջ Հարություն Ալամդարյանին և Սիմեոն Բղնունյանցին ֆիշինև տեղափոխելու: Աշտարակեցին դիտավորյալ առաջ է քաշում նաև Բղնունու խնդիրը, որպեսզի ավելի դյուրին հղանակով լուծվի Ալամդարյանի Հաղպատից աղատվելու հարցը: Այդ գրության մեջ ներսեսն ըստ արժանվույն բնութագրում է Ալամդարյանին՝ մանրամասն թվելով նրա հայրենանվեր գործերը: «... Նւ պատրաստեալ ի նմա զտպարան արժանի գովութեանց, կարգեցաք կառավարիչ նոցին և ուսուցիչ լիզուի հայոց և ոռոտաց,— գրում է Աշտարակեցին,— զվերատեսուչն հկեղեցական բարեկարգութեանց զՅարութիւն աւագ քահանայ Մանուկեան Ալամդարեանց աստրախանցի, որ բաղմարդիւն աշխատութեամբ աւելի քան զամս վեց փառաւոր յոյժ հանդիսացուցեալ զիւր զպաշտօնատարութիւնսն, կարաց սլանծալի կացուցանել յառաջոյ ամենայն հայկազանց և զանազան աղգաց, որպէս հկեղեցական բարեկարգութիւնսն, նոյնպէս և զուսումնարանս մեր յառաջացուցանելով զբաղմութիւն մանկանց բաւական ուսմամբ, ըստ երկուց լիզուաց ի զուարճութիւն ծնողաց բաղմաց հարստաց և աղքատաց և առաւել ևս ի զուարճութիւն ամենայն հասարակութեան աղգին»: Մեկ առ մեկ թվելով Ալամդարյանի արժանիքները, Աշտարակեցին բողոքում է այն անարդար վերա-

2 ԳԱԹ, Աբովյանի ֆոնդ, № 201: Աշխարհաբար թարգմանությունը՝ «Դիվան խաչատուր Աբովյանի», կազմեց և ծանոթագրեց Նրվանդ Շահազիզ, 1940, էջ 267—268:

բերմունքի դեմ, որ ցույց է տրվել Ալամդարյանի նման հայ-
րենասեր գործչի նկատմամբ: «Ոչ նուազ աշխատութեամբ
վայելչացոյց նա և զտպաբանս, որովք և ապացուցեալ զանձն
իւր մշակ հաւատարիմ սրբոյ եկեղեցւոյ և հպատակաց տե-
րութեանն ազգին հայոց... Յիշեալ բազմավաստակ վարդա-
պետն իմ արդիւնաբար մշակն եկեղեցւոյ և հասարակութեան
ազգի հայրենեաց, ծնունդն հին հաւատարիմ հպատակաց
տերութեանն ուսաց Յարութիւն վարդապետ Ալամդարեան,
աստրախանցի, փոխանակ արժանաւոր վարձուց, զոր ամե-
նարդար վկայությամբ իմով վասն արժանաւորութեանց նո-
րա ամօք յառաջ խոստացեալն էր վասն նորա ձեր գերազան-
ցութիւնն, համաձայն իմոց միջնորդութեանց, զամենայն
անարժանութիւն կրէ նա այս ահա երեք ամս, և ի հետուն
հետէ աւելի քան զամ մի դառնագոյն տուայտանօք մաշի
ի հալածանս անխնամ և սուանց ամենեւին մարդասիրու-
թեանց»³:

Բլուգովն ընդառաջում է Աշտարակեցու խնդրին:

Ալամդարյանը Քիշինեւ մեկնելու իրավունք է ստանում
1831 թ. հունվարի 20-ին և նախապաշտարասովում մեկնել իր
նոր պաշտոնավայրը՝ Թիֆլիսի վրայով: Պասկելիչը այդ մա-
սին տեղեկանալով, շտապում է գրել Վրաստանի նահանգա-
պետ Պանկրատեին, որպեսզի վերջինս հսկողության տակ
առնի Ալամդարյանին և թույլ շտա երկար մնալու Թիֆլիսում:
1831 թ. հունիսի 25-ին Ալամդարյանը գալիս է Թիֆլիս, որ-
տեղից և մեկնում է Քիշինեւ Աշտարակեցին գրկախառնու-
թյամբ է ընդունում նրան: «...եկն եհաս առ իս յետ ձեր և
Յարութիւն վարդապետն Մանուկեան Ալամդարեանց վարժա-
պետն մերում ուսումնարանի ի Թիֆլիզ ի մէնջ բազմադրուատ
բազմերախտ հայրենեաց և ուսուցիչ բազմարդին բազմու-
թեանց մանկանց հայրենակցաց հարիւրաւորաց», — գրում է
Աշտարակեցին Նիքիեմ ամիրա Հովհաննիսյանին⁴:

Գաբրիել Պատկանյանը լինելով ականատես, նկարա-
գրում է Աշտարակեցու և Ալամդարյանի հանդիպումը. «Աչք

³ Մատենադարան, Երեցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 137:

⁴ Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 167ա, վավ. 595:

պետք է տեսներ ներսիս սրբազանի և Հարություն վարդապետի հանդիպման տեսարանը, որ պատահեցավ Գրիգորիոսյուլիս: Ոչ մեկ կարոտակեղ մայր, յուր բազմաթամանակյա հեռավորութեամբ անկեցյալ որդւոյն չէ կարող նույնպէս ցույց տալ յուր մայրական գորովը, ինչպէս ներսիս արհին ցույց տվեց կենդանի նահատակ Հարություն վարդապետին»⁵:

Քիչ տեղեկություններ ունենք նաև քիշինեյան օրերի վերաբերյալ: Այստեղ էլ նա երկար չի մնում: Ակնարկ կա այն մասին, որ Ալամդարյանը հղել է Քիշինեի գիմնազիայի ուսկտոր:

Ալամդարյանի քիշինեյան օրերից մեզ հասած ամենաթանկագին փաստաթուղթը Աբովյանին գրած նամակներն են: Այդ տարիներին ուսուցիչ և աշակերտ նամակագրական սերտ կապի մեջ էին: Աբովյանը Թիֆլիսից Դորպատ էր մեկնել, իսկ Ալամդարյանը՝ Հաղպատ և Քիշինե: Հայլուսավորութեան գործի նվիրյալները շատ բան ունեին միմյանց հաղորդելու. «Տիրացու Խաչատուր Աբովեանց, որդեակ սիրելի,— գրում է Ալամդարյանը Քիշինեից 1832 թ. հունիսի 17-ի նամակում,— ընկալելալ զթուղթ քո գրեալ ի 10 մայիսի և գիտացեալ զառողջութիւն և զյառաջագիմութիւն յուսմունս՝ ուրախ եղէ ի տէր, յորմէ խնդրեմ անդադար օժանդակ լինել քեզ ի մուտս քո և յիւս և առնել զքեզ անօթ ընտրութեան ի յարկի սրբութեան իւրում»⁶:

Ալամդարյանի և Աբովյանի նամակագրությունը ցույց է տալիս, որ նրանց կապն ու մտերմությունը ավելի լայն էին, քան կարող էին լինել ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունները: Ուշադրաւ է, որ գերմանացի գիտնական Պարրուսը հղել է նրանց ընդհանուր բարեկամը, որին Ալամդարյանը հիշում է իր նամակներում: «Առ պատուական բարեկամն իմ,— շարունակում է Ալամդարյանը նույն նամակում,— մե-

5 Գ. Պատկանյան, Հարություն վարդապետ, երբեմն բահանա Ալամդարեանց, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 54, Կ. 249:

6 ԳԱԹ, Խ. Աբովյանի ֆոնդ, № 202 (բնագիր): Տպագրվել է «Դիվան Խաչ. Աբովյանի», էջ 269 (աշխարհարար):

ծանոն վարժապետ և բանասէր պարոն Պարրօտն՝ գրեցի ընդամին թուղթ գոհութեան վասն առաքելութեան երկուց պատկերացն սրբոյ էջմիածնի և լերինն Մասեաց, յանձն արարեալ զՋեզ զգուշաւոր բանիւք խնամակալութեան նորա և շնորհաց: Դեղեալ պատկերն զարմանալի է յոյժ և հաւանելի յամենեցուն, իսկ միւսն առ նովաւ ոչ յոյժ գեղեցիկ երեւի, մանաւանդ զի ապակի նորին փշրեալ ի ճանապարհին՝ մերկեալ է զնա յամենայն վայելչութեանց»⁷:

Ալամդարյանը տեղյակ էր Աբովյանի և Պարրօտի Մասիսը բարձրանալու շուրջ խավարամիտների տարածած բանասարկություններին: 1830 թ. մայիսի 25-ի նամակում Աբովյանը գծողում էր էջմիածնի սինոդականներից, որոնք գրգռում են ոռւս աստիճանավորներին պատրաստելու «կրիտիք» Մասիս լեռը բարձրանալու մասին և բացառելու բոլոր դիտական ծանոթությունները, որ արեւ է «մեծիմաստ վարժապետ Պարրօտը»⁸:

Աբովյանը գրում է նաև, թե այդ պատճառով ինքը հոգեկան մեծ տագնապ է ապրում և ուր որ գնում է, վիշտն ու խավարը ստվերի նման հետևում են իրեն:

Դժբախտաբար, չի պահպանվել Ալամդարյանի պատասխան նամակը, սակայն Ալամդարյանի Աբովյանին գրած ինչպես նախորդ, այնպես էլ սրան հաջորդող նամակներից երեւում է, թե որքան խորն է եղել նրա համակրանքը Աբովյանի և Պարրօտի նկատմամբ և թե որքան կարեւոր է համարել Մասիս լեռը բարձրանալու մասին նրանց ուղևորությունները տպագրելու գործը: «Մեծիմաստ պարոն Պարրօտ բարեկամի իմում,— գրում է Ալամդարյանը Աբովյանին 1831 թ. մարտի 15-ին Հաղպատից,— և քոյդ բարերարի առաքնմ զողջույն աստուածահրաման սիրոյ՝ խնդրելով ի յարգութենէ դորա անմոռաց անիլ զանուն յետնոյս ի բարեկամաց իւրոց առ սահմանօքս Վրաստանի: Ծանո՞ ինձ, թէ տպագրեցա՞նք ցարդ դէպք ճանապարհորդութեան ձերոյ ի կատարն Մասնաց՝ թէ ոչ: Յառաջագէմ զարգացման քո ցանկացող հարա-

⁷ Նույն տեղում:

⁸ Խաչ. Աբովյան, Երկերի լիակատար ժող., հ. 10, 1961, էջ 126:

զատ բարեկամ քոյ և հայր Յարութիւն վարդապետ Ալամ-
դարեանց»⁹,

Քիշինեից Աբովյանին գրած 1832 թ. հունիսի 17-ի նա-
մակում Ալամդարյանը խոսում է նաև Ստեփանոս Նազար-
յանցի մասին և ըստ արժանվույն գնահատում նրան իբրև
լեզվագետ-հայագետի և բանաստեղծի. «Ստեփանոս Նա-
զարեանց, եղբայրն քո այժմ ի Տփլիս յառաջադէմ զարգա-
ցեալ յոյժ ի դպրութիւնս հայ, ռուս, պարսիկ և գաղղիական
լեզուաց՝ նամանաւանդ յընտիր բանաստեղծութեան՝ կատա-
րե զպաշտօն վարժապետութեան ի մերում դպրոցի և գու-
մար տարեկան ռոճկի նորա հասանէ ցերեք հարիւր ռուբլիս
արծաթի, այն է 1200 ռուբլի թղթադրամ, և թուի թէ զյօժա-
րեացի նա դալ ի քաղաքդ և այնդիլ զհետ նոր բաղդի. գրեա
ղու ինքդ առ նա՝ թերևս համողեսցի նա քով յորդորանօք, և
նա անկարօտ է նպաստի ուրուք ի ծախոյս ճանապարհորդու-
թեան...: Զնամակս քո առաքիցի առ պարոն Արարատեանցն
ի Տփլիս, և առ տէր Գաբրիել քահանայն ի Նախիջևան. զի
նա քահանայ ձեռնադրվեցաւ ի 17 յունվարի այսր ամի»¹⁰:

Սույն նամակում կան նաև հետաքրքրական տեղեկու-
թյուններ՝ Քիշինեի բնության, եղանակի, քաղաքի արտաքին
և ներքին վիճակի և այլ հարցերի մասին. «Քաղաքս այս թեև
մեծ է և բաղմամարդ, բայց հայազգի բնակիչք նորա են իբր
100 գերդաստանանք աղքատինք՝ ժողովեալք ի զանազան
գաւառաց Տաճկաստանի, որք և առհասարակ խօսին ի լեզու
տաճկաց կամ մոլդաւացոց, և ճաշակ համաուութեան նոցա
ամենեկին անընտել քաղցր վայելչութեան գերապանծ դոր-
ծուածոց...»:

Ալամդարյանը Քիշինեում երկար չի մնում: Աշտարակե-
ցու հետ տեղի ունեցած անձնական բնույթի փոքրիկ միջա-
դեպը առիթ է տալիս նրան Քիշինեից հեռացնելու Աշտարա-
կեցին հարմար է գտնում նրան ուղարկել նոր Նախիջևանի

⁹ ԳԱԹ, Աբովյանի ֆոնդ, № 201:

¹⁰ Նույն տեղում, № 202:

Սուրբ Խաչ վանքը՝ որպես ժամանակավոր վանահայր: Ալամ-դարյանն այդ միջոցին մտածում էր կրկին Մոսկվա վերադառնալ և դիմում է Լազարյանների միջնորդությանը՝ Աշտարակեցու համաձայնությունն ստանալու: Խաչատուր Լազարյանը պատասխանում է, որ իր միջամտությունն անպատշաճ է, իսկ եթե Աշտարակեցին թույլ տա, իրենք գրկաբաց կընդունեն նրան: «...Իսկ որ ինչ հայի ի տեղափոխութիւն ձեր, մեք խնդրեմք և կարեմք բարեխօսել վասն ձեր առաջի բարձր սրբազան հօր, բայց չէ արժան մեղէն դատել զայնմանէ, վասնորոյ և անձնատու լինիմք յայսմ պահու կամացն արքեպիսկոպոսի, եթէ նա տացէ ձեզ հրաման գալ առ մեզ, մեք ուրախութեամբ ընկալցուք, ապա եթէ սրբազան հայրն նշանակեսցէ զձեզ այլուր ունիլ պաշտօն, չէ մեզ արժան հակառակ կամաց երթալ և ոչ իսկ կամք»¹¹:

1833 թ. հունիսի 8-ին, Ալամդարյանը Քիշինեից մեկնում է Նոր Նախիջևան, որպես Սուրբ Խաչ վանքի ժամանակավոր վանահայր: Աշտարակեցին, զայրացած Ալամդարյանի դեմ, Լազարյաններին գրում է. «Եւ տացէ տէր, զի անբաւական հոգի նորա բաւականացի թիրեա անդէն... ընդհակառակն ունիմ սպասել զանազան ահարկու տարածայնութեանց և ազդի ազդի անպատուութեանց...»¹²: Աշտարակեցին հոգում է նրա ճանապարհածախսը, հատկացնելով 60 թուման արծաթ¹³:

Ալամդարյանը Նոր Նախիջևանում գտնում է ինքնիրեն: Նա լուրջ ծրագրեր է մշակում իր գործունեության համար, ջանում է, ինչպես Գ. Պատկանյանն է գրում՝ Նոր Նախիջևան վանքը դարձնել լուսավորության օջախ:

Ալամդարյանի նշանաբանն էր ծառայել Նոր Նախիջևանի հասարակությանը, օգնել նրան ոչ միայն կրթական-լուսավո-

¹¹ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 74, վավ. 372ա:

¹² Նույն տեղում, թղթ. 79, վավ. 215:

¹³ Տե՛ս Աշտարակեցու տնտեսական օրագրերը, Մատենադարան, Աշտարակեցու արխիվ:

րական գործերում, այլ առհասարակ՝ ինչով կարող էր և ինչ որ հնարավոր էր անել այդ մութ ու խավար ժամանակներում: «Գերապատիւ աղգապետ հայադղի հասարակութեանս աստուածահաստատ Նոր Նախիջեան քաղաքի աղա Յարութին Պաղոսեան, բարերար տէր իմ,—գրում է նա Նոր Նախիջեանի քաղաքագլուխ Հարություն Խալիսյանին,— վերջին կարօտութիւն չորից գիւղացւոյ Սուրբ Խաչ վանացս բռնադատեն զիս դիմել աղերսալից պաղատանօք առ Զեւ ի խնդիր վասն իւրաքանչիւրոցն ի սոցանէ մի մի խսիր ցորենոյ ի պէտս սերման: Երեսանկեալ աղաչեմ զայս շորս խսիրս բարեհաճեալ շնորհել ինձ՝ զի ես տայ սոցա առեալ ի սոցունց զձեռագիր վասն դարձուցանելոյ զայս յետ հնձոյն ի գանձարան հասարակութեանս մերոյ զոյգ ընդ ամենայն ստացելոյն յառաջագոյն յերկուս նուագս յառատութենէ շնորհաց Զերոց. մանաւանդ զի վասն այսոցիկ չորից խսիրաց ես ինքնին յանձն առնում զերաշխատութիւն և եթէ յիշատակեալ անձինքդ անձեռնհաս գտցին ի վճար պարտուց իւրեանց ի պայմանեալ ժամանակի՝ ես եղէց պարտաւոր հասարակութեան գանձարանի:

Կրկնեմ զամենախոնարհ աղաչանս իմ չղարձուցանել զիս ձեռնունայն յայս վերջին անգամ... Իսկ ողորմելի գիւղականացս ի սպառ տիրապետեալ է յուսահատութիւն վերջին և վախճան այսպիսի դառն յուսահատութեան ոչ երբեք կարէ խոստանալ զբարի ինչ»,—եզրակացնում է բանաստեղծը¹⁴:

Հենց առաջին ամիսներին Ալամդարյանը կազմակերպում է ժողովրդի չքավոր տարրերի փոխօգնութեան փոմիտե: Խալիսյանին գրած իր գեկուցագրերից մեկում, ուր խոսվում է վանքի եկամուտների մասին, կարդում ենք. «Երեսանկեալ աղաչեմ այսր կատարել զխոստումն Զեր՝ զոր խոստացաք ինձ յաւուր կիրակէի յաստուածահաստատ տան Զերում և մարդասիրեալ առ աղքատ շինականս սուրբ խաչ վանիցս, շնորհել իւրաքանչիւրում՝ ի դոցանէ մի մի խսիր ալիւր ըստ առաջնոյն, կէս մի ի սպիտակ տեսակէն և կէս մի ի սեաւոյն:

14 ԳԱԹ, Եր. Շահադիդի ֆոնդ, VII, Բ., վավ. 63:

Հաւատացէք յաստուած՝ զի դոքա աղքատ են քան զամենայն աղքատս, և եթէ տեսչիք զարտասուս ընտանեաց դոցա և զխանդարեալ կերպարանս նոցա, Դուք ինքնին ևս ոչ մնացիք առանց արտասուաց»¹⁵։

Նույն խնդրի մասին նա գրում է նաեւ Ն. Աշտարակեցուն, նկարագրում իր գործունեութիւնը՝ վանք մուտք գործելուց սկսած (1833, հուլիսի 1). «Ի ժողովոյ ցորենոյ յետ հնձոյն, — յայսմ ամի շոգյացաւ ինչ աստի, զի ամենայն շինականք ձեռնունայն մնացին յարտորէից իրեանց... Ի հողմաղացէ վանացս՝ որոյ արդիւնք երեւիլի լիցի, եթէ գտցի ցորեան ի ձեռս շինականաց. այլ չընթացս 1833 ամի ի 18 սեպտեմբերի մինչեւ ցայժմ կայ մնայ խափան, որպէս և ամենայն հողմաղացք և ջրաղացք այլոց»¹⁶։

Ալամդարյանը գտնում է, որ որքան ամուր հիմքերի վրա դրված լինի վանքի տնտեսութիւնը և ապահով լինի նրա ունեցվածքը, այնքան կմեծանա ժողովրդին փոխօգնութիւն ցուցաբերելու հնարավորութիւնը։ Ուստի նա մտահոգվում է Սուրբ Խաչ վանքը նորոգելու մասին ևս։ Նրա ջանքերով կարճ ժամանակամիջոցում Սուրբ Խաչ վանքը վերակենդանանում է, դառնում հոգևոր մշակուլթի մի օջախ։ Անգործության մատնված վանականները սթափվում են. «...Ժողովրդեանք, որ իսպառ զզվել էին վանքի վանականներին և վանքի կառավարութեան, հողով և սրտով դարձան առ վանքն, ջիւղմեանդ սիրով առ Հարութիւն վարդապետն...»։ «Տփխիսցիք երանի էին տալիս նոր նախիջևանցոյ, որ այսպիսի գործունյա մարդը նոցա վիճակվեցաւ», — հիշում է Գաբրիել Պատկանյանը¹⁷։

Սակայն, Ալամդարյանը մանկավարժ և լուսավորական գործիչ էր բառիս իսկական իմաստով և ոչ վանահայր։ Ուստի վանքի և նոր նախիջևանի հայ համայնքի հոգևոր գործերը վարելու հետ միասին, նա ծրագրում էր քաղաքում մեծ

15 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1514, թղթ. 6։

16 ԳԱԹ, Եր. Շահադիդի ֆոնդ, VII, բժ., վավ. 67։

17 Գ. Պատկանյան, Հարութիւն վարդապետ, երբեմն քահանա Ալամդարեանց, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 249։

դպրոց հիմնադրել: Այս նպատակի համար սկսում է նախապատրաստական աշխատանքներ՝ ուսուցիչներ, աշակերտներ հավաքագրել, հոգալ դպրոցի շինություն մասին: Ժամանակակիցները վկայում են, թե ինչպես էր նա վանքի վանականներին հանդիմանում տգիտության համար և նրանց հետ հայերեն և ռուսերեն պարապում: Քաղաքից անգամ զալիս էին նրա մոտ ուսանելու: «Մկրտիչ վարդապետը ուսյալ մարդ չէր, նրանից շատ բան չէր կարելի սովորել, իսկ ընդհակառակը, Ալամդարյանը լավ վարժապետ էր: Ես առանձին ուսում չեմ ստացել, դպրոց, ուսումնարան չեմ դնացել, բայց իմ այժմվա ունեցած քահանայական գիտությունս նորանից եմ ձեռք բերել: Նա բացի հայոց լեզվից, լավ գիտեր և ռուսաց լեզուն: Քաղաքից աշակերտներ էին զալիս նորանից քերականություն սովորելու: Շատ անգամ նա ուղղում էր Մկրտիչ վարդապետի ռուսերեն գրությունները», — պատմում են նրա ժամանակակիցները¹⁸: Ըստ երևույթին, Ալամդարյանը քաղաքից եկող աշակերտների հետ ռուսաց լեզու էր պարապում՝ օգտագործելով իր Ռուս-հայերեն քերականության ձեռագիր դասագիրքը: Այդ եմ վկայում Մատենադարանում պահպանվող այդ դասագրքի ձեռագիր մի շարք ընդօրինակություններ:

Նոր նախիջևանում Ալամդարյանի լուսավորական գործունեության համբավը շուտով հասնում է նրա հակառակորդներին, որոնք նրան աքսոր էին ուղարկել, որպեսզի հավիտյան խեղդեին լուսավորության ծառայելու նրա տենչը: Նախիջևանում Ալամդարյանը մեծ մխիթարություն էր գտնում իր սիրելի Սերովբե վարժապետի որդու՝ Գաբրիել Պատկանյանի ընտանիքում: Վերջինս իր անտիպ հիշատակարանում գրում է, որ իր Ռափայել որդին, որ այդ ժամանակ 2—3 տարեկան էր, այնքան էր կապված Ալամդարյանի հետ, որ միշտ լաց էր լինում նրա ետևից, իսկ Ալամդարյանը նրան տեսնելիս բացականչում էր «զքո եմ, զքո եմ»: Այդ բարեկամու-

18 Շ. Նազարյան, Հ. Ալամդարյանի մի նոր ձեռագիր աշխատության մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1949, № 3, էջ 82:

Թյունն ամրանում է մի նոր կապով. Ալամդարյանի ավագ դուստրը՝ Աննան և Գ. Պատկանյանի կրտսեր եղբայր Տեր Պետրոսը ամուսնանում են: Այդ ամուսնությունից 1832 թ. ծնվում է Քերովբե Պատկանյանը՝ ասպագա նշանավոր հայադետն ու արևելագետը:

Ալամդարյանը նոր նախիջևանում լիովին հաղթահարում է մենությունն ու հուսահատությունը, ձեռնարկում լուսավորական-կրթական նոր միջոցառումներ, դրում մի շարք քնարական բանաստեղծություններ: Սակայն այստեղ ևս բախտը չժպտաց նրան: Վաղաժամ ու ողբերգական մահը զրկեց մեծ լուսավորչին իր ծրագրերն իրականացնելու հնարավորությունից:

1834 թ. մայիսի 6-ի լույս 7-ի գիշերը, երբ Ալամդարյանը իր առանձնասենյակում քնած էր, մի խումբ ծպտյալ ավազակներ, թվով 15 մարդ, շրջապատում են նրա տունը: Ալամդարյանն արթնանում է և սկսում է դիմադրել ներխուժած ավազակներին: Անհավասար մարտում նա ծանր վիրավորվում է:

Նորնախիջևանցի մի խումբ քահանաներ Աշտարակեցուն ուղղված գրություն մեջ նկարագրում են այս ահավոր դեպքը, որին զոհ դարձավ հայ լուսավորական շարժման հրախտավորը: «Տեսարան էր ողորմ և դառն յոյժ. հսկայանձն Յարութին վարդապետն անկեալ էր ի դետնի, և ասպ ի մահիճս տողորեալ յիրում արեան. արիւնն յորդէր ի վերայ գլխոյն, աշոյն, ծնօտին, փողոյն, կողից, ուսոցն և յայլ բազում խոցուածոց, կիսաշունչ կամ անշունչ բերին յիտ կէսաւուր քաղաքս...»¹⁹:

Անակնկալ լուրն ալեկոծում է նոր նախիջևանը:

1834 թվականի մայիսի 28-ին Ն. Նախիջևանի քաղաքապետ իս. Խալիպյանը զեկուցագիր է ուղարկում Ներսես Աշտարակեցուն՝ մանրամասն նկարագրելով բանաստեղծի սպանությունը: Խալիպյանը ցավով նշում է, որ չնայած Ալամդարյանի կյանքը փրկելու համար դործադրված բոլոր

¹⁹ Մատենադարան, Կաթ. դիվան, Թղթ. 82, վավ. 163:

միջոցներին, ոչինչ չի օգնել: «...Զանյաջող անցիցն անց-
նելոց ընդ վարդապետս Ս. Խաչ վանից՝ արդեն քաջայոյս եմ,
թէ ծանոյց տեղւոյս հոգեւոր կառավարութիւնն Ձերումդ բար-
ձու սրբազանութեան, բայց և մեք ոչ դանդաղեցուք ըստ մե-
րումս պարտաւորութեան ծանուցանել ձեզ վայնմանէ մի
ըստ միոջէ: Զերկրորդում ժամու գիշերոյ ընդ լուսանալ եր-
կուշաբթի... Իսկոյն ընդ հասանիլն առ իս գուժկանի ի Ս. Խաչ
վանից և առեալ ընդ իս զբժիշկն քաղաքական զմի վիրա-
բոյժ, զմի սափրիչ և զմի ի հոգաբարձաց քաղաքիս դիմեցի
ի Ս. Խաչ ի տեսութիւն վարդապետին կարեւեր խոցելոյ ի
սրոյ աւազակաց և գտեալ զհայր Յարութիւն վարդապետն ի
մեծի վտանգի. ածաք զնա ի քաղաք ի տուն բժշկի ընդ նմա և
զՄկրտիչ վարդապետն թեթև վիրաւորեալ և յանձնեցաք
զերկոսեան ևս ժրաջան հոգածութեան բժշկին... որչափ ի
մեզն էր զօրութիւն, բարձր սրբազան տէր, չխնայեցաք յինչ
ոչ ի դանձա, և ոչ յաշխատանս մեր և ըստ պահանջելոյ ան-
տանելի և անբուժելի վիրացն հայր Յարութիւն վարդապետի
բերաք ի Թալլանէ և ի Զերքասկէ զհմուտ բժիշկս առ ի կօ-
սուլիում առնել ի գտանել զհնարն բժշկութեան այսպիսի
հազուագիւտ անձին, բայց ամիսոս աշխատանաց մերոց, զի
ոչինչ կարացաք օգտել նմա...»²⁰:

1834 թվականի մայիսի 24-ի գիշերը վախճանվում է
Ալամդարյանը:

Աղետաբեր լուրը արագընթաց տարածվում է ողջ հայու-
թյան մեջ: Սգում են հայկական գաղթօջախները, աշխար-
հասփյուռ հայերը: Ալամդարյանի կորուստն առաւել ծանր
զգաց հայ մտավորականությունը, ուսուցչությունն ու ուսա-
նողությունը:

Ալամդարյանի նման մի հազվագյուտ գործչի այդօրի-
նակ մահը ժամանակակիցներին կասկածանքների առիթ է
տվել: Ոմանք կարծել են, թե այդ սպանությունը գործվել է
քաղաքական հակառակորդների կողմից: Ենթադրվում էր, որ
ազդային լուսավորական Ալամդարյանի մղած պայքարը

²⁰ ՀՍՍՀ ՊԿՊԱ, Նոր Նախիջևանի մագիստրատի ֆոնդ:

կղերա-սպահականողական հտադեմ դասի դեմ, նրան հասցրել է նման վախճանի: Այդ ենթագրությունը զուրկ չէր տրամաբանական հիմքից: Սակայն ճշմարտությունն այն է, որ Ալամդարյանի սպանությունը նրա քաղաքական հակառակորդների ձեռքի գործը չէր, այլ ավազակների, մի բան, որ բանաստեղծը կանխազգացել էր դեռ իր ղեկուցագրերից մեկում: Հիշատակելով 1833 թ. նոյեմբերի 4-ի գիշերային գողությունը, երբ տարել էին 10 կամ 15 խսիր ցուրեն, Ալամդարյանը գրում է. «Ասելի խոյզ և խնդիր շարարի յայդմ մասին, զի մի ևս զայրազնեալ աւազակացն մտաբերեացն և յայլ գործս՝ առաւել սարսափելին և հղերականն, քան զբարձ ցորենոյ, մանաւանդ զի յամայի, անսպասար և սակաւամարդ անապատի աստ ոչ ոք չկարէ զծայն մեր լսել և գտլ ի նպաստ»²¹: Եվ, վերջապես, ժամանակակիցների հիշողությունները փարատում են ամեն մի կասկած:

Ալամդարյանի մահվան առթիվ բազմաթիվ նշանավոր գործիչներ իրենց սրտի ցավն են հայտնում՝ գրելով բանաստեղծություններ, նամակներ, հոդվածներ, հուշեր: Արձակ և չափածո այդ հրկերի մեջ նրանք մի կողմից ղեկավարում և մեծարում են Ալամդարյանի գործը, մյուս կողմից արտահայտում իրենց խոր վիշտը, սիրն ու հարգանքը «կենդանի» «նահանուակի» նկատմամբ:

Բանաստեղծի մահվան առթիվ Աբովյանն արտահայտվել է քանիցս: Իր ուսուցչի ողբերգական մահվան բոթը Աբովյանը լսում է հեռավոր Դորսպատում, ամիսներ հետո, 1834 թ. նոյեմբերի 21-ին և իր օրագրում այդ առթիվ գրում է. «Հարություն վարդապետի Ալամդարյան՝ իմ բազմերախտ վարժապետի հանկարծահա մահվան դառն խաբարն, որ ի 21-ին նոյեմբերի 1834-ին ստացա, այնպես տրտմեցուց, շփոթյաց իմ սիրտն, որ ևս անհանգիստ գոլով, մեկ բանի էլա չէի կարողանում ձեռք տալ: Ա՛խ, նրանով մեր ազգի շատ երիտասարդքն կորցրին իրանց բախտը: Նա շատին կարեր լուսավորիչ լինիլ»²²:

21 ԳԱԹ, Եր. Շահազիզի ֆոնդ. VII բժ., վավ. 67:

22 Խաչ. Աբովյան, Երկերի լիակատար ժող., հ. 6, 1955, էջ 302:

Նույն ժամանակ է դրել նաև «Ողբերգութիւն, ի վերայ մահուան բաղմերախտ ուսուցչին իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց, աղնիվ բարեկամին իմոյ Աղաջանաց Շերմաղանեան և քաղցր հօր իմոյ Յարութիւնի Աբովեանց» բանաստեղծութիւնը²³։

1836-ին հայրենիք վերադառնալիս, կանգ առնելով նոր նախիջեանում, Աբովյանն այցելում է Ալամդարյանի շիրմին և ջերմ սիրտ, խոր երախտագիտութեան ու բարձր գնահատանքի խոսքեր ուղղում իր «բաղմերախտ ուսուցչի» հիշատակին։ Նա վեր է հանում Ալամդարյան-ուսուցչի, դաստիարակի, հայ մտավորականի, միաժամանակ մեծ մարդու բարոյական կերպարը. «Ժամանակ պանդխտութեան իմոյ էանց։ Հայրենին ձգէ զիս բուն զօրութեամբ առ ինքն, այլ ո՞ւր հայրենեաց բարեկամն, ո՞ւր հայրն բաղմերախտ, որ ջանք և սէր էր բախտաւորել, լուսաւորել զմերձաւորս իւր թափառեալ։ Սիրտ իմ և ի հեռաւորութեան անդ ղքեզ խնդրէր, քե պանծայր, միտք և յերազի քե մխիթարիւր, քե ղուարթանայր, այլ ո՞ւր գտանեմ զքեզ, դաստիարակ իմ սիրելի. դու առաքեցեր զիս օրհնութեամբ յօտարութիւն, և ես դառնամ այժմ տրտմութեամբ և ցաւովք յաւիտեան զրկեալ ի փարելի ահսութենէ քումմէ. ուխտադրութիւնք մեր կործանեցան, ցանկութիւնք սրտից մերոց այժմ ընդ հողոյ հաւասարին. ուր և ելանեմ, ուր և հայիմ, սուգ և կսկիծ յանդիմանի աչաց իմոց։ Ո՞ր հողմ կատաղի փլոյց, խորտակեցոյց ի քեզ զյոյս և մխիթարութիւն բիւրաւոր անձանց. ո՞ սփոփեցէ դսիրտ մեր վշտազնեալ, ո՞ տացէ մեզ զայն բերկրութիւն բնկերակցական, զոր միմիայն ներկայութիւն քո մեզ պատճառէր։ Ի հասակի առոյգ արականութեան յասպարեզի անհուն աղգօգուտ դործոց խղեաց, կտրեաց անսիրտ օրհասն զկեանս քո՝ բարելից, որդին կարօտեալ ցանկայ լսել զձայն քո քաղցրանոյշ, այլ տապան լռին, տապան անձայն միայն ցուցանէ զտեղի նորա՝ Անմռունչ փակիք աստ ոս-

23 Խաչ. Աբովյան, Երկերի լիակատար ժող., հ. 1, 1948, էջ 88—92։

կերք տօնելիք, այլ կարէ՞ հարազատ բարեկամն հայիլ ի ձեզ առանց ողբալոյ զօրհաս իւր դառնագին»²⁴։

Աբովյանը բարձր է գնահատում Ալամդարյանին ոչ միայն որպէս մանկավարժի, այլև իբրև բանաստեղծի. «Տաղը և երգը նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս զաւակաց ձերոց»²⁵։

Ալամդարյանի դամբարանին այցելելու տպավորության տակ, այդ նույն ժամանակ (1836, մայիսի 15-ին), Աբովյանը գրել է նաև մի ոգեշունչ բանաստեղծութիւն՝ արտահայտելով իր խոր վիշտը ուսուցչի մահվան առթիւ։ Աբովյանը հիշում է իր դաստիարակին, նրա վեհ սլատիերը, դասարանն ու դպրոցը և իր շուրջը դատարկութիւն զգում...

Հայիմ ի սենեակն, հայիմ ի տաճար.
Կենդանահայեաց դէմք քո հրեշտակային
Ինձ անձանանան և ի վայրս մթին,
Հովիտք՝ և անդաստանք ձոր և լեռնավայրք
Ճեպմամբք քովք զմայլեալ և այժմ ծիծաղին
Այլ ինձ նոքա միայն առարկայք սգագին...

Աբովյանին մտատանջում է այն միտքը, թե դեռ ինչեր պիտի աներ Ալամդարյանը, թե որքան մեծ էր նրա դերը հայ կյանքում համատարած խաւարը հտ մղելու գործում։

Ա՞ստ էր թափելոց արիւնն՝ որ բիւրոց
Կարէր ներշնչել նոր կենդանութիւն,
Կեանք այն թանկագին, լի բարեօք անհուն.
Ա՞ստ էր արժանի այսպէս կանխակործ,
Յառոյգ հասակի և յօտար հրկրի
Գաղանաց լինել զոհ անփոխատրելի...²⁶։

Ալամդարյանի մահվան առթիւ հղերերգական բանաստեղծութիւններ են գրում նրա երախտագետ աշակերտները՝ Բ. Խաղամյանը («Դամբանական ի մահ Յարութիւն վար-

24 Խաչ. Աբովյան, Երկերի լիակատար ժող., հ. 8, 1958, էջ 312։

25 Նույն տեղում։

26 Խաչ. Աբովյան, Երկերի լիակատար ժող., հ. 1, էջ 140։

դասուհետի Ալամդարեան»), Առաքել Արարատյանը՝ («Կօծի սղալի շիրիմ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց...», «Համառօտ վկայ զվարուց հօրն Յարութիւն վարդապետի Ալամդարեանց»), Մսեր, Մսերյանը («Տեսիլ կեսգիշերվա», «Մահու հաս ինձ բօթ...») և ուրիշներ: Ալամդարյանի մահը խոր վիշտ է պատճառում նաև Ներսիս Աշտարակեցուն, որը, շնայած իր հաճախ շափաղանցության հասնող խստություններին, բարձր էր գնահատում իր անունը կրող դպրոցի տեսչի տաղանդն ու ծառայությունները, նրա, որպէս ազգային գործչի, կարողությունները: Այդ մասին է վկայում հետեւյալ փաստը. 1848 թ. այցի գալով Ալամդարյանի շիրմին և ողբալով նրա կորուստը, Աշտարակեցին հայտնում է, որ միայն Ալամդարյանն էր արժանի իրենից հետո ժառանգելու Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռը:

Ալամդարյանի երախտագետ սաները՝ Ներսիսյան դպրոցի աշակերտները, ի հավերժացումն իրենց բազմարդյուն ուսուցչի հիշատակի՝ նրա հողաթմբին կանգնեցնում են մահարձան:

Գ Լ Ո Ւ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՄԴԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի առաջին տասնամյակներում զգալիորեն ամրապնդվում են հայ նոր գրականության հիմքերը, սկսվում է զարգացման մի նոր շրջան: Գրականությունը մտնում է նոր հունի մեջ, շոշափում ռեալ, կենսական խնդիրներ:

Դարասկզբի առաջին երեք տասնամյակից մեզ հասած արևելահայ ինքնուրույն և թարգմանական պոեզիայի հեղինակները հղել են լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի ուսուցիչներն ու սաները, որոնց ստեղծագործությունները տեղ են գտել «Նրախայրիք Ներսիսեան դպրոցի» (Թիֆլիս, 1828) և «Մուզայք Արարատեան» (Մոսկվա, 1829) ժողովածուներում:

Այդ գրքերը բավականաչափ պատկերացում են տալիս XIX դարի 20-ական թվականների՝ անցման այդ շրջանի բանաստեղծության մակարդակի մասին: Ներսիսյան դպրոցի և լազարյան ճեմարանի նախկին սաներ Մովսես Հարությունյանցի, Առաքել և Ներսես Արարատյանցիների, Գալուստ Շերմազանյանցի, Ստեփանոս Նազարյանի, Դավիթ Օդաբաշյանցի, Բեռդորոս Խադամյանցի, Պողոս Բեժանբեկյանի, Խաչատուր Էլեմեզյանի բանաստեղծությունները այդ ժամանակաշրջանի հայ նոր պոեզիայի առաջին ուշադրավ նմուշներն են: Հիշյալ հեղինակներից Ստեփանոս Նազարյանը,

Սարգիս Տիգրանյանը, Գալուստ Շերմազանյանցը, Թեոդորոս Խաղամյանը և այլք հետագայում հայ գրականության մեջ նշանակալից հետք են թողել: «Երախայրիք Ներսիսեան դըպրոցի» և «Մուղայք Արարատեան» ժողովածուների հրապարակ գալը երևույթ էր ժամանակի գրական կյանքում: Այս տարիների հայ բանաստեղծության մասն են կազմում Մխիթարյան բանաստեղծների ստեղծագործությունները, որոնք թեև հրապարակված են 1852—54 թվականներին՝ «Տաղը Մխիթարեանց վարդապետաց» խորագրված հատորյակներում, սակայն դրանց զգալի մասը ստեղծվել է XIX դարի առաջին երեք տասնամյակում: Ահա այս բոլորը, ժամանակի ժողովրդական և աշուղական բանաստեղծության հեամիասին, ներկայացնում են XIX դարի առաջին երեք տասնամյակների բանաստեղծությունը: Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի, Մխիթարյանների և ընդհանրապես այդ տարիների գրաբարալեզու բանաստեղծությունը գերազանցապես կառուցված է կլասիցիզմի պոետիկական սկզբունքների վրա: Նրա հիմնական մոտիվը հայրենասիրությունն է, պատմական Հայաստանի մեծարումն, ազգի լուսավորական առաջընթացի հրազանքը: Մեծ տարածում ունին բնության և պատմական անձնավորություններին նվիրված ձոները, ներբողները:

«Երախայրիք Ներսիսեան դըպրոցի», «Մուղայք Արարատեան», ինչպես նաև «Տաղը Մխիթարեանց վարդապետաց» հատորներում տեղ գտած բանաստեղծությունների մի զգալի մասը նվիրված է ուսումնա-կրթական շարժման, եկեղեցական գործիչներին՝ Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի հիմնադիրներին, Մխիթարյան դիտնականներին, վարդապետներին, Աբրահամը: Զգալի թիվ են կազմում ամանորի, զատիկի, ժողովրդական ու եկեղեցական այլևայլ տոների, հանդիսությունների առիթներով հորինված բանաստեղծությունները:

Ժողովրդի ուսումնաստենչությունը, սերը դեպի լուսավորությունը, գրականությունը, դիտությունը, երբեք այնքան ընդգրկուն ու ջերմ արտահայտություն չեն գտել բանաս-

տեղծության մեջ, ինչպես այս ժամանակամիջոցում: Բացի
պրոֆեսիոնալ բանաստեղծներից, քիչ թե շատ աչքի ընկնող
ամեն մի գրագետ հայ՝ ուսուցիչ, աշակերտ, քահանա, բա-
նաստեղծություններ էր գրում, առաջին հերթին ներբողելով
կրթությունը, լուսավորությունը, դպրոցը:

Գեղեցկախօս՝ երամք թռչնոց՝ նուագեցէք,
Նոր եղանակ՝ զանբան երգ ձեր՝ արդ յօդեցէք
Յոբելեան փողք՝ քաջաքարող՝ տարփողեցէք.
Գումարք պարուց՝ պարառութեամբ կայմս հարէք:

Զի երկիրս յերկնից՝ ոչ զանազանի,
Բոլոր Վրաստան, նոր փառօք պճնի,
Միջօցք և տարիք՝ զնին ծանրագնի,
Օրս ի համարի՛ է յոյժ թանգագնի,—

գրում է Հովհաննես Շերմազանյան Վարդանյանցը²⁷:

Ներսիսյան դպրոցի սաների՝ Դավիթ Օդաբաշյանի «Ձայն
հոգենուագ երկնի խորանաց», Թեոդորոս Խաղամյանի «Զէ
նա այնչափ գերերջանիկ իւր բաղձալիս», Գրիգոր Մեսրոպյա-
նի «Յնծութիւն անսահման և ի մեր սիրտ տարածեալ», Ստե-
փանոս Համբարձումյան Գասպարյանի «Զուարթունք վե-
րինք հոյլք գեղանիք՝ խուճապելով ի յերկնից» սկզբնատողե-
րով բանաստեղծությունները և սրանց նման տասնյակ ու-
րիշներ, արտահայտում են ուսումնատենչություն, լուսավո-
րության ծարավ և ներբողում են կրթության երախտավոր-
ներին:

XIX դարի առաջին երեսնամյակի գրաբարաչեղու բա-
նաստեղծության մեջ տիրապետող էր հայրենասիրությունը:
Բանաստեղծական այդ սերնդի առաջավոր ներկայացուցիչնե-
րին խանդավառող, առաջմղիչ ուժը եղել է հայրենիքի
քաղաքական ազատության զաղափարը, որն հատկապես

27 «Նրախայրիք Ներսիսեան դպրոցի», Թիֆլիս, 1828, էջ 12:

արտահայտութիւնն է գտել ներսիսյան դպրոցի և Հազար-
յան ճեմարանի բանաստեղծների ղգալի մասի երգերում:
Մովսէս Հարութիւնյան Վարդանյանցը իր «Մատչիմք ա-
ռաջի՝ ալեղարդ սուրբ հոր՝ վեհիդ ռժութեան» սկսվածքով
բանաստեղծութեան մեջ արտահայտում է իր ցնծութիւնը
պարսկական լուծը խորնակելու և Արեւելյան Հայաստանը
Ռուսաստանին միացնելու անթիվ.

Ով ոք տեսանել՝ կարծէր զՀայաստան՝ զերծ
ի թշնամեաց,
Որ միշտ զտաղնապ՝ համբուրէր, հեղձնոյր՝
յալիս տանջանաց.
Ախ, է՞ր այս ղգալի՝ զի Թագ Գաւազան՝
մեր թագաւորաց:
Բարձան ի գլխոյ՝ և մեք կոծէաք՝ ըստ որբոց,
այրեաց:

Ո՞րպիսի նեղչիք՝ դժնեայ կեղեքիչք՝ յամենուստ
յարեան,
Գրոհ հտուն ի հոտ՝ անհովը, անտէր՝ և
անօղնական.
Գերիք մեր սփռեալ՝ ընդ աշխարհ համայն՝
բարձին ղկական,
Ծովացեալ տեսին՝ զետօրէն հոսեալ՝ զարիւն
Արամեան:

Ո՞ւր է քաջազգի Հայկ մեծ առաջին՝ սատակիչ
Բելայ,
Զարթիցէ, տեսցէ, տօնեսցէ ընդ մեզ զայս հանդես
ներկայ:
Զի նիկողայոս՝ Արփի շնորհալոյս՝ հրկընտիր
արքայ,
Կամեցաւ, բաշխեաց՝ զանճառ փրկութիւն՝
տանն Արարատեայ:

Ո՞ւր են անառիկ՝ ամբողջ ամրակուռք՝ ապաւենք
 Պարսից,
 Ընկճեալ խորտակեալ՝ ի վայր կործանին՝
 Ի թնդանօթից.
 Մի թէ ըզղորաց՝ բարբարոս ազանց՝ աստէն
 լռեցի՞ց,
 Որք արդ քաջ ծանեան՝ թէ Զօրաց Ռուսաց՝ Տէր
 է մարտակից²⁸։

Ինչպէս բերված տողերում, այնպէս էլ դարասկզբի առաջին հրեք տասնամյակի այլ բանաստեղծների ստեղծագործութիւններում, շեշտակի արտահայտութիւնն է ստացել ուսասիրութեան դադափարը։ Դեռեւ անցյալ դարի վերջերից որոշակի դարձավ հայերի ուսական կողմնորոշումը։ Շահամիրչանների «Գիրք անուանեալ Որագայթ փառաց», Հակոբ Շահամիրչանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ», Թադեոս Սողինյանցի «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեաց» հրապարակախոսական պոեմները տողորված են այդ դադափարախոսութեամբ։ Գեորգ Խուբովը և Սերովբե Պատկանյանը բանաստեղծութիւններ էին նվիրում ուսական կայսրին, Նկատերինա կայսրուհուն, ուսն զորավարներին, փառաբանում էին ուսական զորքի հաղթանակները։

Պսակեալ ի վերուստ՝ վայելուչ թագաւոր,
 Նիկողայ Պաւլովիչ՝ հզօր կայսր լուսաւոր,
 Պատկեր տեառն Աստուծոյ, ճշմարիտ ահաւոր,
 Ազգ հայոց միաշունչ զքեզ առնին փառաւոր
 Թէ կրկին յաղթութիւնդ հղիցի շնորհաւոր,
 Թագ և պսակ կիսագնդին Ռուսաց Հայոց,
 մանաւանդ Հայոց²⁹։

Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, երիտասարդ բանաստեղծ

²⁸ «Երասայրիք Ներսիսեան դպրոցի», էջ 19։

²⁹ «Երգք Սերովբե վարժապետի Պատկանյան», Մոսկվա, 1857, էջ 70։

Նիկողայոս Նիկողոսյանցն իր «Տաղաչափութիւն առ 1828 նոր տարին» բանաստեղծութեան մէջ ներբողում է ռուսական պետականութեանը, Ռուսաստանը՝ իբրեւ հուսալի պատվար հայ ժողովրդի քաղաքական ազատութեան: Բանաստեղծութեանը զրկած է Արեւելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրվելու առթիւ:

Ահա վերստին՝ բոցափայլ լուսով՝ Հայաստան
պճնի,
Գետ դառն արտասուաց՝ բաղմամեայ վշտաց՝
հրեաց սրբի.
Սիրտ նորս նեղչի՝ մահաւետ վշտօք՝ այսօր
տազնասլի,
Արծիւ երկզլսի՝ հղօրն Ռուսիայ՝ վրիժառու լինի³⁰:

Նույն ոգևորութեանն է իշխում նաև մյուս բանաստեղծների երգերում: Ռուսական հովանավորութեան, հայ և ռուս ժողովրդի դաշինքի բախտորոշ նշանակութեանը աստիճանաբար ըմբռնում էին հայութեան լայն խավերի ներկայացուցիչները: Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստավոր պայմաններ է ստեղծում հայ հոգևոր մշակույթի՝ արվեստի, գրականութեան ու գիտութեան բոլոր բնագավառների զարգացման համար:

Պետք է նկատել, որ այդ տասնամյակների բանաստեղծութեան մէջ նոր զաղափարների կողքին դեռևս ապրում էր նաև հինը: Գրաբարալեզու բանաստեղծութեանը սերտորեն առնչված էր կրոնի հետ, առատորեն օգտագործված էին ավետարանի ասույթները, առակները, զրույցները, սրբերի վարքերը: Սակայն այդ ամենը հարմարեցվում էին նոր զաղափարներին, ազգային լուսավորութեան գործին:

Բանաստեղծութեանը ձևով, արտաքին տեսքով, ինչ-որ չափով մնում էր կրոնական, իսկ էութեամբ, զաղափարաբանությամբ այն աշխարհիկ էր, ժամանակակից: Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Մովսէս Վարդանյանը «Ոչ քողու տէր

³⁰ «Երախայրիք Ներսիսեան դպրոցի», էջ 22:

զգաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոց: Սաղմ., նիդ, 3»
խորագրով հորինել է 13 տնանոց պատմա-քնարական բա-
նաստեղծություն, որի ուղն ու ծուծը հայրենասիրությունն է:
Նույն բանաստեղծը իր մի այլ երգում, որ կրում է «Տէր
լնու ի բարութենէ զցանկութեան Քո, նորոգեսցի որպէս ար-
ծուոց մանկութիւն Քո» խորագիրը, ողբում է իր ժողովրդի
քաղաքական ծանր վիճակը, նրա զավակների բնավերություն-
նը՝ փրկության ելքը տեսնելով ոռոսական պետականության
հետ հայ ժողովրդի դաշինքի մեջ.

Սիրածին որդիք՝ մանկունք կաթնասունք
սուրբ էջմիածնի,
Արդ լալով շրջեն՝ հեծեն հառաչեն՝ ի յօտար վայրի՝
Ի հնոց երկաթի՝ բարբարոս Պարսից՝ միշտ
ի վտանդի
Ակն ունի փրկչի՝ նոր ինքնակալի՝ Որդւոյն Պօղոսի
Սա նիկողայոս՝ յԱստուած ընտրեալ՝ կայսր
համայն Ռուսաց,
Ունի տարածել՝ կարկառել անշուշտ՝ զբազուկ
փրկանաց.
Առ անկեալ զլորեալ՝ և ամայացեալ՝ Տունն
Ասքանաղեանց,
Եւ փոյթ աղատել՝ զազգ մեր տառապեալ՝ ի ժանեաց
չարեաց³¹:

Արտաքնապես կրօնական բանաստեղծությունները ար-
ձագանքում են ժամանակի հուզող հարցերին, արտահայ-
տում հայ ժողովրդի ազատասիրական ձգտումները: Այս
առումով ուշագրավ են նաև Առաքել Արարատյանի «Աղեր-
սանք», «Տաղաշափութիւն» բանաստեղծությունները, որոնք
թեև կրօնական հյուսվածք ունեն, բայց ոգին հայրենասի-
րությունն է: Կրօնական թեմատիկան, պատկերները, ինչ-
պէս արդեն նկատեցինք, միջոց են դառնում ազատասիրու-
թյան, հայրենասիրության գաղափարների արծարծման:

31 «Երախայրիք ներսիսեան դպրոցի», էջ 13:

Այդ ժամանակներում արդեն ուժեղացել էր հայության համազգային ոգին, համազգային դիտակցությունը, ինչպես ճիշտ նկատում է Ս. Սարինյանը, հայրենիք, կրոն, եկեղեցի միասնական հայեցողությունը³²։ Այս հայեցողությունն է, որ ընկած է XIX դարի առաջին տասնամյակների գրաբար բանաստեղծության հիմքում։

Մեր համառոտ ակնարկից երևաց, որ ժամանակի պոեզիայի մեջ տիրապետող ժանրը ներբողն էր՝ կրոնա-քաղաքական ազգային բովանդակությամբ։ Բացակայում էր, սակայն, քնարական բանաստեղծությունը։ Ահա այդ պակասը լրացնում է Հարություն Ալամդարյանը, մի նոր աստիճանի բարձրացնելով հայ քնարերգությունը՝ թե՛ բովանդակությամբ, և թե՛ արվեստով։

Ալամդարյանը XIX դարի առաջին երեսնամյակի քնարական բանաստեղծության առաջին խոշոր ներկայացուցիչն է։ Ժամանակի գրաբարալիզու բանաստեղծներից Ալամդարյանն առանձնանում է իր առանձնահատուկ դերով հայ նոր դրականության պատմության մեջ։

Բարձր գնահատականի է արժանացել Ալամդարյան բանաստեղծը։ Նա ըստ արժանվույն մեծարվել է թե իր ժամանակի և թե իրեն հաջորդող դրական սերունդների կողմից։ Մանվել Գյումուշխանեցին Ալամդարյանին անվանում է «գեղաբույս բանաստեղծ Հոմերոս»³³։ Ալամդարյանի ստեղծագործական բնատուր քանքարի, «աստվածային շնորհի» մասին են խոսում Սերովբե և Գաբրիել Պատկանյանները, Բաֆֆին սրտի ցավով է հիշում տառապանքների բովով անցած Ալամդարյան բանաստեղծին³⁴։ Ա. Այվազյանն Ալամդարյանին բնութագրում է իբրև «օրվա բանաստեղծ», «օրվա մեծ մարդը»։

«Ալամդարեանց քահանան՝ վառվռուն գրող, խոսող, ներշնչող և արտաշնչող հեղինակություն մ'էր, ժողովրդական

32 Տե՛ս Ս. Սարինյան, Հայկական ողբանկար, էջ 86։

33 Ա. Ինճիկյան, Հարություն Ալամդարյան, «Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, էջ 300։

34 Տե՛ս Բաֆֆի, Խավարի արրանյակները, «Տարազ», 1890, № 5, էջ 84։

համբավ կվայելիւր զի իւր ոգուն երգերն ժողովրդական ամեն խավերուն մեջ տարածված էին. վերջապէս օրվա գրագետն էր, օրվա բանաստեղծն ու օրվա մեծ մարդն էր»³⁵, «...Աշխոյժ երեակայութիւն, զգողտրիկ զգացումն և զգեղեցիկ ճաշակ»³⁶ — այսպէս է Ավետիք Խաղեղյանը բնութագրում Ալամդարյանի պոեզիան:

Գրականության պատմաբանները կարեւորում են Ալամդարյան քնարերգակի դերը հայ գրականության սկզբնավորման փուլում: Լեոն Մանվելյանն Ալամդարյանին համարում է գրական նոր ուղղության ներկայացուցիչը, նրա պոեզիան բնութագրելով այսպէս. «Ալամդարյանը զտարյուն լիրիկ բանաստեղծ է: Նրա բոլոր բանաստեղծութիւնները տոգորված են անկեղծ և խոր զգացմունքով, դա նրա անուրանալի արժանիքն է: Նրա պոեզիայի ուղն ու ծուծը, տիրապետող սերն է՝ իր հրապուրանքով և դառնությամբ»³⁷:

Մ. Աբեղյանն Ալամդարյանին համարում է «XIX դարի առաջին երեսնամյակի միակ քնարերգուն», որի դրվածքների մեջ շինծուություն չկա: «Այն ինչ որ նա գրում է, — նկատում է Աբեղյանը, — ոչ թէ մեռած, մեքենայական ձևով սարքում է, ինչպէս մի Գապասախալյան, և ոչ արվեստով հորինում, ինչպէս Մխիթարյան քերթողները, այլ իր զգացածն ու կրածը, իր վիրավոր սրտի հառաչանքն ու հեծութիւնը անկեղծությամբ, ինքնաբերական, պարզ ու անպաճուլճ ասում է մեղ: Նա յուր իրական, անհատական կյանքի բանաստեղծութիւնն է անում, յուր սրտի պատմութիւնը գրում, որ և քնարերգության իսկական աղբյուրն է»³⁸:

Ինչպէս տեսնում ենք, Ավագյանը և Մանվելյանը շեշտում են Ալամդարյանի բանաստեղծութեան նյութի, բովանդակութեան նորութիւնը: Աբեղյանն ընդգծում է նրա քնարի,

35 Ա. Ավագյան, Շար հայ կենսագրութեանց, հ. Ա, էջ 139:

36 ԳԱԹ, Գ. Պատկանյանի արխիւ, № 28:

37 Լեոն Մանվելյան, Ռուսահայ գրականութեան պատմութիւն, Ա, Ալեքսանդրապոլ, 1909, էջ 28:

38 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 611:

արվեստի անկեղծությունն ու պարզությունը, ապրված լինելը: «Մեր նոր դրականության ակունքներն հետադրատողը,— նկատում է Արամ Ինճիկյանը,— չի կարող անտարբեր անցնել Հարություն Ալամդարյանի՝ այդ շատ ինքնատիպ ու հետաքրքրական անհատականության կողքով: Նա տիպական ներկայացուցիչն է բեկման այն ժամանակաշրջանի, որ ապրել է հայ ժողովուրդը անցյալ դարի 20—30-ական թվականներին»³⁹:

«Ալամդարյանը հայ նոր գրականության առաջին բանաստեղծն է,— գրում է Ս. Սարինյանը,— որ յուրացրեց սենտիմենտալիզմն իբրև գեղարվեստական մեթոդ: Ի հակակշիռ կլասիցիզմի, նա 20-ական թվականներին հայ պոեզիայի մեջ բերեց մոտիվներ, ընկալումներ ու ձևեր, որոնք պետք է նախանշեն հայ նոր քնարերգության ապագան»⁴⁰:

Դժվար չէ նկատել, որ Ինճիկյանը և Սարինյանը հատկապես ընդգծում են Ալամդարյանի կատարած պատմական դերը հայ պոեզիայի զարգացման մեջ:

Մի այլ տեսակետ է առաջադրում երիտասարդ գրականագետ Վ. Սաֆարյանն իր «Մկրտիչ Պեշիկթաշլյան» աշխատության մեջ: «Հայ նոր քնարերգության նմուշներ,— գրում է նա,— մեղանում փորձել են գտնել նույնիսկ Ալամդարյանի գործերում: Բայց մի՞թե նա տալիս է այն քնարերգությունը, որ բերեց, ասենք, Պեշիկթաշլյանը: Ալամդարյանին հայ նոր քնարերգության ապագան նախանշողի դեր վերագրելը շատ վիճելի տեսակետ է: Եվ նրա այն գործերը, որոնք վկայակոչվում են որպես քնարերգության օրինակներ, պարզապես դատողական, բանական, պատմողական բնույթի խոսքեր են սիրո մասին և ոչ թե սիրային ապրում»⁴¹:

Ինչպես նշվեց, Աբեղյանը Ալամդարյանին համարում է «XIX դարի առաջին հրեանամյակի միակ քնարերգուն»,

39 Ա. Ինճիկյան, Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը, ՀՍՍՀ ԳԱ, «Տեղեկագիր», հաս. գիտ., 1957, № 9, էջ 63:

40 Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, էջ 99—100:

41 Վ. Սաֆարյան, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Երևան, 1972, էջ 317—318:

Ս. Սարինյանը հավաստում է. «Ալամդարյանն առաջին բանաստեղծն էր, որ հաղթահարեց կլասիցիզմը և նոր մոտիվներ, նոր ընկալումների բերեց», մինչդեռ Վ. Սաֆարյանը շարունակում է պնդել, թե «կլասիցիզմը ամենևին էլ չհաղթահարվեց նրա պոեզիայում»:

Ա. Ինճիրկյանը Ալամդարյանին համարում է «շատ ինքնատիպ ու հետաքրքրական բանաստեղծական անհատականություն», մինչդեռ Վ. Սաֆարյանն Ալամդարյանի բանաստեղծություններում տեսնում է «դատողական, բանական, պատմողական բնույթի խոսքեր սիրո մասին և ոչ թե սիրային ապրում»։ Կանխակալ միտումը խանգարել է Վ. Սաֆարյանին Ալամդարյանի «Երկու ձեռքն երկու մոմ», «Թշվառություն սոխակի», «Դառ երեակայութեան», բանաստեղծություններում տեսնել ապրած սիրո զգացումն ու վիշտը, որ Աբեղյանը համարում է Ալամդարյանի արժանիքն՝ ի տարբերություն նրա նախորդների: Ինչ վերաբերում է Պեշիկթաշլյանի հետ կատարված համեմատությանը, ապա այդ միանգամայն անտեղի է և ավելորդ: Ինչպե՞ս կարող էր Ալամդարյանը բերել այն, ինչ բերեց Պեշիկթաշլյանը և կամ ո՞վ ասաց, որ պետք է բերեր և չի բերել: Ալամդարյանն ու Պեշիկթաշլյանը տարբեր ժամանակների, տարբեր միջավայրերի ծնունդ են, հասարակական պատմական տարբեր փուլերի արդյունք: Երբ Ալամդարյանը հեռացավ կյանքից, Պեշիկթաշլյանը հինգ-վեց տարեկան էր միայն: Եվ մի՞թե Պեշիկթաշլյանի մեծությունը հաստատելու համար պետք է ժխտել Ալամդարյանի պատմական դերը:

Արդ, ո՞րն է Ալամդարյանի բանաստեղծության պատմական դերը: Իր երգերում շոշափած հարցերով, իր քնարական արվեստով ինչո՞ւ է Ալամդարյանը տարբերվում իրեն ժամանակակից բանաստեղծներից, ինչպե՞ս է նա ապահովում հայ նոր քնարերգության սկզբնավորողի իր դերը:

Նկատեցինք, որ դարամուտի հայ դասական բանաստեղծությունը զարգանում էր նախորդ դարի բանաստեղծության հետ ունեցած ուժեղ կապի մեջ (գրաբար լեզու, կրոնական թեմաներ, Աստվածաշնչի ասույթներ ու կերպարներ, վե-

րացական պատկերներ, նկարագրական, ուսուցողական ոճ և այլն): Նշեցինք նաև, որ այդ բանաստեղծությունը իր վրա միաժամանակ կրում էր ժամանակի առաջավոր գաղափարների շունչը, ազդեցությունը (լուսավորություն, կրթություն, ժամանակակից և պատմական անցյալի հերոսական դեմքերի գովք, հայրենասիրություն, կողմնորոշում դեպի Ռուսաստանը, ատելություն պարսկա-թուրքական տիրապետողների նկատմամբ և այլն):

Մկրամդարյանի գրչի տակ, ինչպես կտեսնենք ստորև, դեղարվեստական չափածո խոսքը աստիճանաբար ազատվում է մի կողմից սխեմատիկ, չոր դատողականությունից, — նկարագրական, մտացածին բանաձևերից, սխեմաներից, շինծուությունից, — ինչպես նկատել է Աբեղյանը, — մյուս կողմից գրաբարյան խրթին ոճերից, բռնահանդից և բառախաղից: Մկրամդարյանը ձգտում է գրել ուրքան հնարավոր է պարզ, ղեղեցիկ լեզվով, պարզ գրաբարով: Սակայն այս դեռ բոլորը չէ և սրանում չէ Մկրամդարյանի դերը: Նորը և առավել ուշագրավը բանաստեղծի պոեզիայի բերած բովանդակությունն է, նյութը, թեման:

Մկրամդարյանի պոեզիայի կենտրոնում մարդն է: Նա խորհում է մարդու մասին, թափանցում մարդու ներաշխարհը և, որը գլխավորն է, կարողանում է երևութականացնել նրա տառապանքն ու սեռը... Այս հարցերն, իհարկե, բանաստեղծության համար նորություններ չէին. դեռևս միջնադարը հարուստ է քնարերգությամբ, բայց Մկրամդարյանը դարասկզբի հայ բանաստեղծության մեջ քնարական իր խոսքը, իր ուրույն արվեստն է ճերում: Նա չի կրկնում, այլ իր ժամանակի գրաբար բանաստեղծության մեջ սիրտ ու հոգի է դնում՝ հեռու արհեստականությունից, վերացականությունից, չորությունից: Նա բերում է իր սրտի խոսքը: Այս է արմատական պատճառն այն ընդունելության, որին անբաժնիանում է Մկրամդարյանն իր քնարով: Ժամանակակիցների վկայությամբ, դեռ Մկրամդարյանի կենդանության օրով, նրա մի շարք բանաստեղծությունները լայն տարածում են գտնում ժողովրդի մեջ: Երկու-երեք տասնամյակ հետո, նրա երգերը

շարունակվում են երգվել և նույնիսկ վեճերի առարկա է դառնում հեղինակի հարցը: Այսպես, Ալամդարյանի «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունը Գալուստ Շերմազանյանը 1851 թ. տպագրում է «Բազմավեպում» իբրև հնից եկած անհայտ հեղինակի մի երգ: Ալամդարյանի աշակերտներից Հարություն Տեր Շմավոնյանցը, լավ հիշելով, որ այդ իր ուսուցչի գրած բանաստեղծությունն է և որ իրենք՝ աշակերտները, երգում էին Ալամդարյանի կենդանության օրով, նույն թվականին Գաբրիել Պատկանյանի «Արարատ» շաբաթաթերթում տպագրում է մի ընդարձակ հոդված և բացահայտում ճշմարտությունը. «Որքա՜ն մխիթարեցաւ սիրտ իմ,— գրում է նա,— ի տեսանել զաշխատունս բազմերախտ վարդապետի իմոյ տպեալ ի գովելի օրագրի ի մխիթարութիւն և ի վայելումն բանասիրաց, այնքան ցավեցաւ հոգի իմ ի վերայ անզգոյշ ծանոթութեան, զոր տալ պարոն Վարդանեանց: Հարիւրաւոր աշակերտք հանգուցեալ Ալամդարեանի, որք այժմ կենդանի են, յորոց միջի եմք ես և պարոն Վարդանեանցն, քաջ գիտեմք, թե այս բանաստեղծութիւն սեպհական շարագրութիւն է Ալամդարյանի: Գիտեմք զժամանակն, զտեղին և զպատճառն յօրինելոյ նորա զայս, գիտէ զայս ամենայն և պարոն Վարդանեանց, բայց ընդէ՞ր խլէ ի վարժապետէ իւրմէ զայս աշխատասիրութիւն և սեփականէ նախնեաց»⁴²:

Հ. Տեր-Շմավոնյանցը «Բազմավեպի» խմբագրին գրում է, որ եթե պարոն Վարդանյանցը տեսնելով «զարժանաորութիւն այսր բանաստեղծութեան անուանէ զայն աշխատասիրութիւն նախնեաց և ցանկայ յաւելուլ այնու զփառս ի վերա փառաց նոցա, սխալի յազգասիրութեան իւրում, զի երևելի նախնիք մեր ի փառաւորութիւն անուանց իւրեանց... «Ծիլ-ծիլ», «Ածեալ են սալլիկն ածեալ են», «Փութա առ մեղ նախշուն կաքաւ»⁴³ և զբազում այսպիսիս մխիթարեսցին և

⁴² «Արարատ», 1851, № 23, էջ 362—364:

⁴³ «Ծիլ-ծիլ» և «Փութա առ մեղ նախշուն կաքաւ» Պ. Ղափանցու բանաստեղծություններն են: Իսկ «Ածեալ են սալլիկն ածեալ» Գր. Նարեկացու հայտնի երգն է:

հոգի և ի մարմին և մի ոք համարձակեսցի ստիպել զնոսա ուրանալ զԱլամդարեանէ Թշուառութիւն սոխակի»... «Թըշ-վառութիւն սոխակի ասացեալ երգը սիրեն և երգեն ի Թիֆ-լիզ, ի Հայաստան, երգեսցեն և ի Պոլիս, ի Զմիւռնիա և ի Հնդկաստան»:

Կենսագրական այս փաստը բավական է համոզվելու համար, թե ժամանակին ինչպիսի ընդունելություն է գտել Ալամդարյան բանաստեղծը և թե որքան մեծ ժողովրդակա-նություն են վայելել նրա երգերը հայութեան տարբեր շրջաններում:

Ալամդարյանի բանաստեղծությունները ժողովրդակա-նացել են նաև եղանակավորելով: Դժբախտաբար մեզ հայտնի չեն, թե ովքեր են եղանակ հորինողները: Հնարավոր է, որ հենց ինքը եղանակած լինի իր որոշ բանաստեղծություն-ները: Դա անհավանական չէ, քանի որ Ալամդարյանը և նրա սիրելի ուսուցիչը՝ Սերովբե Պատկանյանը, ինչպե՞ս նկատեցինք, մեծ սեր են տածել դիպի երգն ու երաժշտու-թյունը, և ունեցել են արտակարգ կրաժշտական ունակու-թյուններ, ճաշակ ու զարգացում: Գ. Պատկանյանը ականա-րկում է, որ Ալամդարյանի երգերը «զգեցան ազգային հղա-նակը» և երգվում էին «խնջույքներում, խրախճանքներում»: Նա, անշուշտ, նկատի ունի Ալամդարյանի «Երկու ձեռքին երկու մոմ», «Նազելոյս դէմքն էր ճերմակ ու կարմիր», «Յոյս իմ ի քոյ տես յաշխարհի» և այլ բանաստեղծություն-ներ, որոնք երգվել են ժամանակին: Ռափայել Պատկանյա-նը վկայում է, որ Սերովբե Պատկանյանի և Հարություն Ա-լամդարյանի երգերի բուն օջախը Աստրախանն է: «Ազգա-յին երգարան հայոցի» առաջաբանում, խոսելով հայ երգի տարածականութեան մասին, նա գրում է. «Զանազան բա-ղաքներ ունեն իրանց համար իրանց սեփական կամ սիրա-կան երգարանները, որոնց երգերը սիրով երգում են... զոր-օրինակ Թիֆլիս՝ Սայաթ-Նովան, Երևան՝ Ադամ-Աղբարը, Հաժտարխան՝ Սերովբե վարժապետն Պատկանյան և Հարու-թյուն վարդապետն Ալամդարեան...»⁴⁴:

44 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 170:

Սաւակն, ինչպէս Տիր-Շմաւոնյանն է վկայում, Թիֆլիսում, Պոլսում, Հայաստանում, նույնիսկ հեռավոր հնդկահայ գաղութում երգում էին Ալամդարյանի երգերը: Ուրեմն, պետք է կարծել, որ Աստրախանից՝ Ալամդարյանի ծննդավայրից են սկիզբ առնում ու տարածվում բանաստեղծի երգերը:

Ալամդարյանի երգերից մի քանիսի ձայնագրությունները տպագրում է երաժշտագետ Մ. Խումաշյանը՝ Վաղարշապատում՝ 1901 թվականին: Ալամդարյանի բանաստեղծությունները, դեռևս հեղինակի կենդանության ժամանակ, տարածում էին գտնում նաև ասմունքի, արտասանության միջոցով: Հայտնի է, որ Ներսիսյան դպրոցի բեմից Ալամդարյանի աշակերտներն արտասանել են նրա «Տեսիլ», «Տաղաչափութիւնք», «Տաղերգութիւն», «Աղօթք», «Ողբերգութիւն Իսրայէլի» բանաստեղծությունները: Այս բանաստեղծությունները տեղ են գտել «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուում, որոնց տակ ստորագրված է դպրոցի աշակերտներից մեկի անունը՝ «Ասաց աշակերտ վեցերորդ դասատան Գրիգոր Հովսեփյան Մելիքյանց»⁴⁵: Գրիգոր Հովսեփյանը ոչ թե այդ բանաստեղծությունների հեղինակն է,— ինչպէս ճիշտ նկատել է Ա. Ինճիկյանը,— այլ՝ ասողը, արտասանողը: Ըստ երևույթին, աշակերտ Գ. Հովսեփյանը ասմունքի առանձնահատուկ շնորհ է ունեցել և Ալամդարյանը միշտ նրան է հանձնարարել արտասանելու իր բանաստեղծությունները:

Ալամդարյանի բանաստեղծություններից մի քանիսը տպագրվել են նրա կենդանության օրով: «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուում տեղ գտած վերահիշյալ երգերը Ալամդարյանի քնարերգության առաջին տպագրված նմուշներն են: Դրանից հետո առանձին բանաստեղծություններ տպագրվել են Գաբրիել Պատկանյանի «Արարատում», «Բաղմավեպում», «Քնար Հայկականում», «Սոխակ Հայաս-

⁴⁵ Տե՛ս «Երախայրիք Ներսիսեան դպրոցի», էջ 30—31, 33—34, 35—36, 50—53: Ա. Ինճիկյանը իր «Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը» հոդվածում հանգամանալից խոսում է այս մասին:

տանի» և այլ երգարաններում, տաղարաններում ու դասագրքերում: Ալամդարյանի երգերը առանձին գրքով՝ «Չափաբերականք» խորագրով, տպագրվում են 1884 թվականին՝ Ալամդարյանի թոռան՝ հայագետ Քերովբե Պատկանյանի աշխատասիրությամբ:

«Չափաբերականքը» պարունակում է 32 բանաստեղծություն: Դրանց մի մասի տակ նշված է ստեղծման վայրը, ժամանակը՝ տարեթիվը և ամսաթիվը, սակայն, դժվար է որոշել, թե ո՞րն է Ալամդարյանի առաջին բանաստեղծությունը: Ե՞րբ է նա սկսել գրել:

Կան տվյալներ, որ Ալամդարյանը ստեղծագործել է սկսել պատանեկան հասակից: Գաբրիել Պատկանյանի վկայությամբ, դեռևս Աստրախանի Աղաբաբյան վարժարանում ուսանելու տարիներին, նա գրել է երգիծական բանաստեղծություններ՝ Սերովբե վարժապետ Պատկանյանի դեմ. «Երկու դիմառնություն էր շարագրել շատ կծու և անպարկեշտ խոսքերով, մեկը «Կայն և Աբել» և մյուսը «Սալուդ և Դավիթ»: «...Երբ Սերովբե վարժապետը կարդաց այս ոտանավորները,— գրում է Գ. Պատկանյանը,— այնքան չզայրացավ նրա ստղտանց վերա, որքան ուրախացավ նորա հաջողակ դուռերով և գեղեցիկ շարագրության վերա»⁴⁶:

Միքայել Պատկանյանը «Մեղու Հայաստանիում» 1865 թ. տպագրած իր հոդվածում հայտնում է, որ Մովսես ավագ քահանա Սայաթնովյանը և Սողոմոն Քեղխուդյանցը ունեն Ալամդարյանի գրչին պատկանող անտիպ «երգեր և առակներ», որոնք պետք է առաջիկայում տպագրության հանձնեն: Դժբախտաբար, անհայտ մնաց այդ «անտիպ երգերի և առակների» հետագա ճակատագիրը: «Չափաբերականքից» դուրս միայն «Առյուծ և էջ» առակը տպագրվեց «Քնար հայկականում», այն էլ տարակուսանքով: «Նիկողայոս Տեր Շմավոնյանցի՝ Հարություն Ալամդարյանի աշակերտի հեղինակություն կհամարվի: Ոմանք էլ Հարություն

46 Գ. Պատկանյան, Հարություն վարդապետ, երբեմն քահանա Ալամդարեանց, ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 249: Տե՛ս նաև Ա. Խճիկյան, Նշված հեղվածք, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, № 9, էջ 64:

վարդապետինը կկարծեին»։ Հետագայում նույն առակը Ա. Ինճիկյանը հանդիպում է գրականության և արվեստի թանգարանի Պերճ Պոռշյանի արխիվում պահվող «Քերթնածք Յարութին վ. Ալամդարեանց» խորագիրը կրող տետրում, որն ընդօրինակված է, ինչպես նշում է գրիչը, «Իսկական օրինակաց հեղինակին»։ Այս փաստը հիմք է տալիս կարծելու, որ Ալամդարյանը այլ առակներ ու երգեր է գրել «Չափաբերականքում» նշված թվականներից առաջ և հետո։ Եվ դա միանգամայն հավանական է, քանի որ Ալամդարյանը, դեռ պատանեկան տարիներին, խանդավառված էր հայ և այլազգի բանաստեղծություններ, 16—17 տարեկան հասակում այնպես գիտեր ուսմ գրականությունը, որ իր քերականության համար քաղվածքներ էր անում։

Ալամդարյանի մեզ հասած առաջին թվակիր բանաստեղծությունները գրվել են Մոսկվայում, 1821 թ.։ Ընդունված այն կարծիքը, թի «Երկու ձեռքն երկու մոմ» բանաստեղծությունը Ալամդարյանը գրել է 1813 թ. իր նշանախոսության առթիվ, ճիշտ չէ։ Ա. Ինճիկյանն իր վերոհիշյալ հոգվածում փաստերով համոզում է, որ այն գրվել է 1821 թ. հոկտեմբերի 1-ին, ինչպես նշված է «Չափաբերականքում»։ Ալամդարյանը 1821 թ. Մոսկվայում է գրել նաև «Նազելույս դիմքն էր ճերմակ ու կարմիր», «Յար վառ է կայծ...», «Երկու ձեռքն երկու մոմ» սկզբնատողերով քերթվածները։ Մեկ բանաստեղծություն միայն՝ «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» խորագրով նա գրել է 1824 թ. օգոստոսի 21-ին, Աստրախանում։ «Տաղերգութիւն», «Տեսիլ», «Աղօթք», «Աղերս առ ամենօրհնեալ տիրամայրն», «Ստորագրութիւն Արմիդեայ» բանաստեղծությունները հորինել է Թիֆլիսում՝ 1825—1829 թվականներին։

«Վարդակորոյս», «Սոխակ ի հոգեվարս», «Կովկովանք վարդի», «Դաւ երեւակայութեան», «Դարուն» գողտրիկ քերթվածները գրել է 1831 թ. Հաղպատում։ Ընդամենը 11 բանաստեղծություն չունին տվյալների ստեղծման ժամանակի վերաբերյալ։ Այսպիսով, Ալամդարյանի մեր ձեռքի տակ եղած

բանաստեղծություններից առաջինը գրված է 1821 թ.: Ըստ երևույթին, կորստյան են մատնվել մինչև վերահիշյալ թվականը հորինած գործերը, ինչպես նաև հետագայում գրածների մի մասը:

Անկախ այս բոլորից, այն ինչ մեզ է հասել, բավական է ներկայացնելու Ալամգարյան բանաստեղծի դիմանկարը, որոշելու նրա տեղն ու դերը հայ քնարերգության պատմության մեջ:

* * *

Ալամգարյանը սիրո երգիչ է: Նրա քնարն ուժգնորեն հնչեցրել է սիրո մոտիվը: Ալամգարյանի սիրո երգերում ջերմորեն սիրած էակի մահվան վիշտն է, խոր տառապանքն ու մորմոքը:

Ապրած տառապանքն ու ցավը, որ նա երգել է իր բանաստեղծություններում, համակում է ընթերցողին, և ընթերցողը բանաստեղծի անձնական վիշտն ընկալում է իբրև համամարդկային զգացում: Անձնականը, մասնավորը դառնում է ընդհանրական, հավաքական: Դա էլ հենց քնարերգության էական հատկությունն է, նրա բուն խնդիրը:

Ալամգարյանը ողբով է սկսում իր սիրո երգը, սգում սիրած էակի կորուստը:

Նա իր երգերում վերապրում է կորցրած սիրո, իր նազելու հետ անցկացրած օրերի հուշերը միայն, ապրած սիրո վայելքի երգը չկա: Այս առումով բացառիկ է Ալամգարյանը: Մեզ հայտնի չէ մի այլ քնարերգու, որ իր սիրո երգերի բովանդակությունը դարձրած լինի միայն և միայն իր սիրելի զուգակցի՝ կնոջ կորուստը:

Սիրելիի մահը այնքան խորն է ցնցել նրա հոգին, վիշտն այնպես է համակել նրան, որ կյանքն ամբողջովին, երևույթները, մարդիկ կորցրել են իրենց նշանակությունն ու իմաստը: Բանաստեղծը իր շրջապատին, կյանքին առհասարակ

րակ՝ նայում է միայն իր վշտահար սրտի հայացքով, հուսահատ հոգու ղգացողությամբ: Սա է Ալամդարյանի քնարական հերոսի առանձնահատուկ գիծը:

Այդ զի՞նչ կսկիծ է, այդ զի՞նչ չար տանջանք.

Քարեայ սիրտ պիտի հանդուրժիլ դոցա:

Թէ լուր ինչ շունիք զանգին չքնաղէս,

Թէ ինձ չիք հնար գտանել զնա՝

Ինձ յափսոս եկայք անշափ նեղելոյս,

Ողջ ողջ դիք յարդանդ մութ դերեզմանի:

Երբ յիշեմ զանուն իմ սիրականի՝

Յօդուածք իմ դողան, սիրտ իմ սարսափի:

(«Ամենեկին ես գեղեցիկ...»)

Հոգեկան ողբերգությունը հասնում է լարման գագաթնակետին: Բանաստեղծը չի հաշտվում կատարվածի հետ: Նա ըմբոստանում է ճակատագրի դեմ, ոչինչ չի կարող մխիթարել նրան: Եվ նա սփոփանք է որոնում մահվան մեջ:

Մահվան դեմ և դեպի մահ, այս է Ալամդարյան քանաւտեղծի խոհականության ուժը, կյանքի հակընդդեմ երևույթների հոգեբանական զարգացման շրջագիծը: Եթե դու կյանք չես վերադառնում, ասում է նա իր սիրունուն, ասյա ինձ տար քեզ մոտ:

Առանց քո ես զամ, ամիս, օր,

Անցուցանեմ միշտ գլխակոր:

Դժգոյն դիմօք, սրտիւ տխուր

Մաշեմ զկեանս հանապաղօր:

Թէ քեզ առ իս գալ չէ հնար,

Գոնեա առ քեզ գիս փութով տար:

Հեռի ի քէն շունիմ զադար:

Կեանք այդպիսի քան մահ է չար:

(«Սուգ»)

Եթե մահվան դեմ մաքառելն անհնար է, քանի որ այն սահմանված է արարչի կամքով, ապա քնարական հերոսը ցանկանում է կենդանի թաղվել իր սիրեցյալի հետ նույն գերեզմանում: «Կոծ» բանաստեղծության մեջ սիրած էակի մահվան առթիվ հերոսի ողբերգությունը թանձրանում, խտունում է: Միջնադարյան ողբասացների նման նա մոռնում է, հեծում կորստի ցավից. աղերսում է ամենքին «կականաբաղձ» ողբալ իրեն, չխնայել, կենդանի թաղել...

Արդ անասուն գործք արարչիս,
Կականաբարձ կոծեցէք զիս, վա՛յ, ողբացէ՛ք զիս.
Զանյազ արգանդ բայէք զերկրիս,
Անդ կենդանուն թաղեցէք զիս. աւա՛ղ, մի՛
խնայեք յիս:
(«Կոծ»)

Սիրած էակի կորստյան ողբ, տառապանք, ցավ ու կսկիծ, ապա բողոք, անեծք, ըմբոստություն չար մահվան դեմ և այդ բոլորից դուրս գալու ելքը՝ դեպի անէություն, դեպի մահ.

Ե՞րբ ես զերծայց յայս տանջանաց,
Ե՞րբ մօտ հոգևոյդ մարմնով եղեայց.
Այլ ճար, հնար իմոց վիրաց
Ոչ գոյ, գոհա՛ր, հո՞ղ իմ կենաց:
(«Սուգ»)

Բանաստեղծը մերթ է որոնում սիրած կնոջը մահվան ճանկերից խլելու, աղաչում է, որ հտ դառնա դեպի կյանք, իր մոտ. «Զիմ սուդ արդ տես, փոյթ դարձ առ իս», մերթ ինքն է թևածում դեպի մահը... Բանաստեղծը չի դադարում ողբալ իր սերը, իր կորուստը: Նա շարունակում է իր դառն հեծեծանքը, իր վշտին մասնակից դարձնելով բնությանը... Եթե «մահաբեր սլաքը» հատիկ է իր սիրտը, և եթե

իր չքնադատես Մարգարիտը «անդարձ» զնացել է, ապա իր կորուստը թող ողբա ողջ տիեզերքը, բնությունը, մարդիկ, թռչունները: Թող ողջ աշխարհը վշտակցի բանաստեղծին, թերևս դա թեթևացնի նրա տառապանքի բեռը:

Պատմեցէ՛ք, մարդիկ, թէ տեսիք զնա,
Պատմեցէ՛ք եղբարք, թէ կայ սիրտ ի ձեզ:
(«Ամենեկին ես գեղեցիկ...»)

Բանաստեղծը մեղմորեն նախատում է երկնքի թռչուններին, թռչունների պարծանք տատրակին, թե մի շարունակեք ձեր խրախճանքը, կարեկից եղևք իմ ցավերին.

Ուրախ ձայնիւ մի՛ դայլայլեր,
Զայրույս այրած սիրտ մի ճմլեր, ո՛հ,
զվէրս մի նորոգեր.
Լերդակիզոյս զուգերգող լեր,
Դու լաւ գիտես, թէ զինչ է սէր, վա՛յ ինձ,
Հուր վառէ սէր:
(«Կոծ»)

«Դու լաւ գիտես, թէ զինչ է սեր»... Հենց այստեղ բացահայտվում է Ալամդարյանի սիրո ողբերգության մի այլ գիծը: Նա բացատրում է ընթերցողին, թե ինչ է կորցրել ինքը և ինչու է ողբում այդքան ուժգին:

Ալամդարյանի սիրո ողբերգության մեջ երևում են նաև այդ ողբերգության պատճառները, պատասխանն այն հարցի, թե ինչո՞ւ է բանաստեղծը մահվան մեջ փնտրում ելք, թե ո՞րն է նրա հուսահատության հիմքը, և թե ո՞վ էր նրա կորցրած սերը:

Սիրող էականորեն միավորում է մի հոգի, մի միտք, մի զգացմունք: Ահա թե ինչու, բանաստեղծը կորցնելով իր սիրուհուն, կորած է համարում և իրեն.

Դուք ի վուր ջանայք զիս մխիթարել.
Զկայ կէս սրտիս՝ զիա՞րդ ապրեցայք,
Իմ կեանք այլ չեն կեանք, առանց
փարեկոյս.

Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք:
(«Ամենեկին հա զեղեցիկ...»)

Սիրող զույգի միությունը մեծ խորհուրդ ունի, նրանք ուխտել են ապրել և մեռնել միասին, առանց մեկի մյուսի կյանքն անիմաստ է: Փոխադարձ, իմաստավորված է նրանց սերը, անկաշառ է նրանց միությունը, անքակտելի է նրանց հոգեկան դաշինքը:

Ա՛խ, անմոռաց կեանք, հոգի, սէր,
Այդպէս երբէք չէր պայման մեր.
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ
Ի միասին՝ խոստումն էր մեր:
(«Սուգ»)

Սիրո զովքի և մեծարանքի, կրքոտ, ջերմ ու հորդառաս զգացմունքների արտահայտութեան օրինակների շատ կան հայ միջնադարյան բանաստեղծների երգերում: Սակայն, Աւամդարյանի սիրո քնարերգությունը հատկանշվում է նախ հոգեբանական խորութեամբ, և ապա, որ նվազ կարեւոր չէ, կնոջը, սիրուհուն նա զնահատում և արժեքավորում է իբրեւ կյանքի ընկեր, «հոգու պատկեր».

Յոյս իմ ի քոյ լուս յաշխարհիս
Յարդ շարաշար խոշտանկէ զիս,
Մտացս աշաց միշտ երեկս,
Սիրոյդ հրով կիզես զհոգիս.

Անդին ընկեր, ոչ խնայես յիս,
Որ սէր ի քոյ մոռացայ զիս.
Զիմ սուգ արդ տե՛ս, փոյթ դարձ առ իս,

Լի՛ց զիմ փափագ, առ քեզ հոգիս:
(«Սուգ»)

Կորցնել սիրած էակին՝ նշանակում է զրկվել հոգուց և դադարել իբրև բանական, ապրող, մտածող անհատ գոյություն ունենալուց, կյանքն անցկացնել լացով և աղի արտասուքով.

Զի՛ք չափ հեղման դառն արտասուաց
Յիմոց պղտոր միշտ թաց աչաց.
Լեզի՛ իմ ջուր, մոխիր է հաց,
Նինջ իմ՝ պատկեր զարհուրանաց.
Հոգւով մարմնով կամ սեւազդեաց,
Կամաւ զրկեալ յամէն բարեաց.
Ո՞չ տեսանես, զի այգայէս կեանք
Դառն է քան բիւր չար կատարած:
(«Սուգ»)

Ալամդարյանը չի հագնում իր վիշտը երգելուց: Նրա քնարն անգամ անզոր է դառնում սփոփելու այն:

Նուադս քեզ ձօն չէ՛ զուգակշիռ,
Ո Մարգարիտ՝ դանձ անկշիռ.
Ա՛խ, ա՛խ, զիս անսուր ղեներ.
Քեզ ի նուէր շունիմ զայլ իր,
Զկեանս իմ դնեմ արդ ի կշիռ,
Աւա՛ղ, ասա՛ մեռի՛ր:

(«Կոծ»)

Ալամդարյանը քնարական զեղումներով է բնորոշում սերը, իբրև բարձրագույն, անսահման, անընդգրկելի, անբիծ ու անարատ, վեհ ու նվիրական, անթաքուստ մի զգացմունք, որի պատճառած ցավերն անգամ քաղցր են.

Անթաքուստ է սէր, քաղցր են վէրք նորա,
Սիրահար սրտի սէրն է անթեղալ:

Մի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ,
Իսկ սէրն առաջին՝ է խոշ միւս սիրոյ:
(«Նիւթք նախապատրաստեալք»)

Աներեւակայելի, անհուն սիրո զգացմունքը Ալամդար-
յանի մոտ հասնում է սիրո պաշտամունքի, իսկ սիրո կո-
րուստը ոչ թե տխուր դիպված է, այլ մի ահեղ, ահաւոր երե-
վույթ, անշիջանելի հուր, որ բանաստեղծի հոգին բորբո-
քում, հրդեհում է և ժայթքում ինչպես հրաքար: Այս վիճակն
է բանաստեղծն արտահայտում «Սուղ» և «Դաւ երեւակայու-
թեան» բերթվածներում:

Աչք իմ միշտ առ քեզ պշնուն, սիրելի,
Հանգէտ երկաթոյ, գերւոյ մագնիսի,
Չեմ երբէք ի քէն բաժան, տենչալի,
Նման լուսասէր խոնարհ ստուերի,
Սիրտ իմ քեզ, յաւանդ ետու, նազելի,
Անսիրտ կամ ահա, որպէս անշունչ դի,
Արդ խէթ հացեցիւք զիս խոցոտելով,
Նման արևու զաշս հողեղինի՝
Զի՞նչ կամիս առնել, հո՞ւր անտանելի,
Մահու խղճալոյս է՞ր լինիս գործի:
(«Դաւ երեւակայութեան»)

Ալամդարյանի սիրո ողբերգության մեջ վառ գծերով
կերպավորվում է սիրած կնոջ՝ Մարգարիտի պատկերը:

Դադարել է Մարգարիտի երկրային կյանքը, բայց բա-
նաստեղծի երեւակայության մեջ շարունակում է հարատեւել
նրա կախարդական պատկերը՝ կենդանի ու շարժուն, մեղմ
ու համեստ, քնքուշ ու առաքինող, Հասակը բարեձև ու շնոր-
հաշուք, գլուխը ոսկեփայլ՝ «գանգրահեր վարսեօք», լուսա-
փայլ ճակատով, «յոնք իւր աղեղունք նետարձակ մարդկան»,
հոգու պարկեշտությունը, մտքի հանճարը դեմքին դրոշմված,
այտերը ինչպես բացված վարդ, ատամնաշարը նման մար-

դարտի, «քաղցրալիզու», «գեղեցկախոս», «ձայնն հրեշտակի», «հրեշտակ, կոյս լուսագեղ»...,— ահա թե ինչպիսին էր Մարգարիտը:

Նազելույս դէմքն էր ճերմակ ու կարմիր,
Հրաշագեղ, շքնաղ, աննման ումեր:
Շնորհաշուք հասակն չէ՛ր երկայն կամ ցած,
Միջակ և քնքուշ՝ զարմանք տեսողաց:
Գլուխն էր պճնազարդ ոսկեփայլ վարսիւք.
Հիւս նոցա այրէր զաշս անզգաստից:
(«Ամենեկն ես գեղեցիկ...»)

«Պարերգութիւն» բանաստեղծությունը գրված է կնոջ մահվան անմիջական տպավորության տակ, այստեղ այնքան կենդանի ու վառվռուն է սիրած էակի պատկերը, որ թվում է, թե բանաստեղծը կերտել է այն նշանախոսության անմիջական ներշնչանքով, մինչդեռ դա անհուն սգի մեջ տառապած մարդու սրտի վերհուշ է միայն, քաղցր օրերի հիշատակների լոկ վերապրումը:

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ, դարձայ քար.
Այն զի՞նչ օր էր և զի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր...
Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վալեհուշ.
Զոտիւքն իւր վարսք քարշ կային,
Ի գոյն քրքմոյ փայլէին:
(«Պարերգութիւն»)

Ալամդարյանի սիրո քնարը, որ միշտ հեծեծում է, ողբում («Ողբերգութիւն», «Կոծ», «Սուգ», «Դաւ երեւկայտութեան», «Անուրջք» և այլն), այնուամենայնիվ ունի նաև հրազանքի, հույսի լար: Թեև վերջինս բեկբեկուն է, թույլ ու

հաճախ էլ խորհրդապաշտական երանգով, բայց, ի վերջո, արտահայտում է բանաստեղծի տողերում թաքնված կենսասիրությունը: Նա մի կերպ համակերպվում է վշտին, նույնիսկ նախատում իրեն՝ թուլասրտության համար և, ի վերջո, իր հույսը կապում «փրկալից խաչի» հետ:

Երանի՜ ասացէք կարմրացայտ վարդիս,
Քաջալիրս տուք նմա ի դով պաշտպանիս:
Աւա՛ղ ինձ, նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զիա՛րդ դիս կարծեցի կորուսեալ անյոյս:
Նախատինք իմ նեղւաց՝ նետ եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:
Ցաւագնեալք, օրհնեցէ՛ք զանուն Տեառն յաւէտ,
Դի՛ք զյոյս ձեր յօղութիւն խաչին փրկաւետ:
(«Գարուն»)

Դա ոչ սոսկ հավատացյալի երկյուղածությունն է և կամ հավատը, թե նրա սիրուհին վերստին կյանք պիտի ունենա երկնքում, այլ յուրօրինակ արտահայտությունը կենսազգացության, որ առկա էր Ալամդարյանի հոգում և որը դրսևորում է գտել նաև նրա մյուս բանաստեղծություններում:

Ալամդարյանի սիրային քերթվածների մեջ մի առանձին շարք են կազմում վարդին ու սոխակին նվիրված երգերը՝ «Սոխակ ի հոգեվարս», «Վարդակորոյս», «Կովկովանք վարդի», «Թշվառութիւն սոխակի» բանաստեղծությունները, որոնք յուրօրինակ արձագանք են միջնադարում արեւելքի ժողովուրդների մոտ լայն տարածում գտած ալլարանության: Սոխակը սիրահար բանաստեղծն է, վարդը՝ բանաստեղծի սիրո առարկան: Ինչպես սիրուհու մահով բանաստեղծի կյանքն է անիմաստ դառնում, և նա անվերջ սգում է՝ այնպես էլ սոխակը, կորցնելով վարդին, այդին անապատ և անվերակ է տեսնում ու սգում, ողբում է վարդի կորուստը:

Քանի առ թուի վարդին

Մերձենայր մօտէր՝

Այնքան ցնորէր, քրտնէր և սարսէր...
(«Թշուառութիւն սոխակի»)

Այս բանաստեղծութիւններում ևս Ալամդարյանն ամբողջովին ինքն է, ապրած ողբերգությամբ, կսկիծով ու տառապանքով, միայն թե այլ պատկերների, համեմատութիւնների ու ձևերի մեջ դրսևորւած.

Այգանայ ահա, այգացաւ ահա,
Ա՛խ, սոխակս հեծէ, դնի անդգայ,
Հաց չառնէր հրէկ, այսօր շատ ողբայ.
Վարդն իւր շերևի, այգն է ցայդ նմա:
(«Վարդակորոյս»)

Վարդի և սոխակի երգերում մենք տեսնում ենք նույն զգացողութիւններն ու ընկալումները, նույն հարցադրումներն ու հոգեբանական լուծումները:

Ինչպես ճիշտ նկատվել է, միջնադարում շատ դործածական վարդի ու սոխակի թեման Ալամդարյանն օգտագործել է ուրույն եղանակով, մարդու հոգեկան տառապանքը, անձնական ցավն ու վիշտը պատկերելով: «Թշուառութիւն սոխակի», «Սոխակ ի հոգեվարս», «Կովկովանք վարդի», «Վարդակորոյս», — այս շորս բանաստեղծութիւնը միջնադարյան վարդի ու սոխակի երգերի թեմատիկ շարունակութիւն լինելով հանդերձ, խիստ ուշադրաւ, ինքնատիպ քնարական բանաստեղծութիւններ են: Ալամդարյանն օգտագործելով միջնադարյան պոեզիային հատուկ վարդի ու սոխակի մոտիվը՝ վարդի կորուստը, սոխակի որոնումները, խնդրանքը այլ ծաղիկներին ու թռչուններին՝ սիրած վարդին դռնելու, «վարդակորոյս» սոխակի ողբը, կսկիծը և այլն, այդ բոլորի մեջ դրել է իր անհատականության, իր արվեստի կներքը:

Ա՛յ անդին վա՛րդ, վա՛րդ,
Իմ կենաց զա՛րդ, զա՛րդ.

Ճոխ թերթիւք բա՛րդ, բա՛րդ,

Բանիս լուր կարճ կարճ...

(«Թշուառութիւն սոխակի»)

Ալամդարյանի այս տողերը հիշեցնում են միջնադարյան անհատական և ժողովրդական մի շարք տաղեր: Այսպէս, Պետրոս Ղափանցին երգում է.

Իմ աննըման վա՛րդ, վա՛րդ,

Պարծանք գարնան, վա՛րդ, վա՛րդ

Մատի՛ր առ իս,

Մի՛տ դիր բանիս,

Եւ հայեա՛ց յիս,

Տե՛ս, թէ զիարդ կիզանիմ⁴⁷:

Ժողովրդական երգերում նույնպէս հանդիպում ենք այս ոճին.

Մի՛ թափի՛ր վա՛րդ, մի՛ թափիր վա՛րդ,

Ես զարիսկ եմ յօտար երկիր...

Զունիմ յաշխարհս երամ, վայ⁴⁸:

Սակայն Ալամդարյանի վարդի և սոխակի երգերը, ինչպէս նկատեցինք, քնարական ինքնուրույն, նորատիպ կառուցվածք ունեն: Դրանք ցույց են տալիս, թե որքան թարմ են, որքան նորաձև՝ միջնադարում շատ տարածված այդ մոտիվի ալամդարյանական մշակումները: Այս առումով առանձնապէս հաջող է «Կովկոսմանք վարդի» բանաստեղծությունը: Այստեղ խտացված է բանաստեղծի հոգու տառապանքն իր սիրած էակի կորստյան առթիւ, որին նա ներկայացնում է իբրև վարդ, գովերգելով նրա պերճությունը, գեղեցկությունը, դիմում է բնությանը, որ նա կյանք ու զորություն տա և իրեն և իր վարդին: Առավուտը լույս տա

47 Շ. Նազարյան, Պետրոս Ղափանցի, էջ 254:

48 Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 163:

նրան, լուսինը՝ «շող պանծաղին», արևը՝ ջերմություն, քան-
զի սգավոր բանաստեղծը կորցնելով իր սիրունուն, զրկվել է
այդ բոլորից.

Արև բարերար, զվարդն իմ ջիւո՛ւ,
Նախածագ լուսովդ, եռանդեամբ լցո՛ւ, զարթո՛ւ,
փայլեցո՛ւ:

Բակետ է, չքնաղ, դիրդ, ջինջ ծով սիրոյ,
Արժանի շողոյդ ջեր, դթոյ, լուսոյ, մաքուր
ի տապոյ:

Ես յանձմանէն ցարդ զուրկ մնացի,
Աչօք դողանալ զնա ոչ կարացի, շատ գուն
գործեցի:

Նախա՛տ, վա՛յ, ամօ՛թ, անդույթ օրհասի,
Զօրէն անողորմ, անհաշտ ոսոխի, ժանտ
մարդասպանի:
(«Կոկոսկանք վարդի»)

Սիրո պաշտամունք, գովք, տառապանք սիրած էակի
կորստյան առթիւ և հույս, ակնկալություն նրան գտնելու,
բնության ստեղծագործ ուժի օգնութեամբ կորցրածը հտ բե-
րելու: Այս գծերով են բնորոշ Ալամդարյանի վարդի և սոխա-
կի երգերը: Թեև այս բանաստեղծությունների բովանդակու-
թյունն էլ սիրո ողբերգությունն է, տառապանքը, սակայն այլ
են երանգները, գույները, պատկերները:

«Վարդակորոյս» բանաստեղծութեան մեջ սոխակը, որ
մարմնավորում է բանաստեղծին, ավելի հուսահատ է: Այն
գրված է 1831 թ.՝ հաղպատյան աքսորի օրերին, որն իր
յուրօրինակ կնիքն է թողել բանաստեղծության վրա: Քնա-
րական հերոսը սգավոր, «վարդակորոյս» է բառիս բուն իմաս-
տով, ու թեև բնությունը կենդանանում է, կյանքը վերածնվում,
բայց բանաստեղծ-Ալամդարյանը միայնակ է, ոչինչ լավ չի
տեսնում իր շուրջը, իր կյանքի լուսաբացի ոչ մի հույս չի
նշմարում... Բնությունը չի խոսում նրա սրտի հետ, չի կա-

րեկցում նրան, վշտահար բանաստեղծի և վերածաղկած բնության միջև մեծ է անդունդը:

Այսպես, ուրեմն, թեև վարդի և սոխակի մոտիվը Ալամդարյանը փոխ առավ միջնադարի տաղերգուներից, սակայն նա հոգեբանական առումով մի նոր աստիճանի վրա դրեց վարդի և սոխակի քնարական երգը⁴⁹: Ալամդարյանի սիրո քնարերգության լավագույն նմուշներից է «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծությունը: Սա դրամատիզմով հագեցված անզուգական ստեղծագործություն է, որ բացառիկ տեղ ունի դարասկզբի հայ դասական բանաստեղծության մեջ: Արդարացի լինելու համար հիշենք, որ այսօրինակ դրամատիկ բանաստեղծություններ ունեն նաև միջնադարի մեր առանձին քերթողներ, սակայն, բոլորն էլ նվիրված են Քրիստոսի խաչելությանը: Դրանց մեջ ներկայացվում են Քրիստոսի տառապանքներն իր աչքով տեսնող աստվածամոր՝ Մարիամի աղեկատուր ողբը և Քրիստոսի՝ որդիական նվիրական զոհամունքները մոր նկատմամբ: Ալամդարյանն իր «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» երգով հանգում է նոր արդյունքների, քնարական նոր խոսք, նոր թեմա է բերում հայ բանաստեղծության մեջ, որով ընդլայնվում են նրա քնարերգության շրջանակները: Այստեղ դրամատիկական հագեցվածությամբ տրված է ընտանեկան կյանքի ողբերգությունը: Հուսահատ հայրը զրուցում է սիրասուն զավակների հետ, նրանց առջև բացում իր սիրտը.

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել, զայն զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սգալի
Խնդրեցից զնա յամենայն երկրի:

Անօշնական որբերը, իրենց միակ ապավենի՝ սիրելի հոր ծանր խորհուրդը իմանալով, թախանձում են նրան՝ հտկանդենել այդ մտքից:

⁴⁹ Մենք նկատի չունենք վարդի և սոխակի մոտիվներով գրված լիրո-էպիկական երգերը:

Հայր մեր, 'նս գիտեմ, ըզմայր մեր ողբայ,
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սղայ,
Ե՞րբ սա մոռասցի վանուն, զկերպ նորա,
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա,—

Թախծալից ասում է Աննան հորը: («Ողջոյն հրաժեշտի դա-
ւակաց իմոց»):

Ծնողական, մայրական սիրուն են նվիրված նաև Ալամ-
դարյանի «Մօր աղեկիզի, ողբ քստմենի ընդ մահ անդրանկի
յօտար աշխարհի» և «Կօծ մեղկաղէտ ծնողաց ի վերայ վա-
ղամեռիկ միամօր դստեր» բանաստեղծությունները:

Ալամդարյանի քնարերգությունը չի սահմանափակվում
միայն սիրո երգերով: Նա գրել է նաև բարոյագիտական, ազ-
գասիրական խոհեր արտահայտող բանաստեղծություններ,
ինչպես նաև կրոնական երգեր:

Սակայն նրա «Աղօթք», «Աղերս առ ամենաօրհնեալ տի-
րամայրն», «Յորդորակ առ ուխտաւորս», «Կողկողանք առ
խաչ փրկչին», «Աղերս առ նախավկայ ամլորդին», «Սաղմոս
ԾԵ», «Սաղմոս ՃԼԹ», «Բանք մօր խաչելոյն» կրոնական բա-
նաստեղծությունները ներշնչված են ոչ թե քրիստոնեական
հավատքին կուրորեն ծառայելու պահանջից, ոչ թե հայ եկե-
ղեցու հավատարիմ սպասավորը լինելու պարտավորությու-
նից, այլ ոեալ կյանքից: Ալամդարյանը, ինչպես գիտենք,
նաև եկեղեցական գործիչ էր (քահանա, ապա վարդապետ),
սակայն, նրա կրոնական երգերում ցոլանում է ժամանակի
աշխարհիկ մարդու հուզաշխարհը:

Ալամդարյանի կրոնական երգերը, գրեթե բոլորը,
մարդկային հոգու հետ են խոսում, նրա ազնիվ խոհերն ու
զգացմունքները մեկնաբանում: Այլ խոսքով, ինչպես ճիշտ
նկատել են բանաստեղծի առաջին կենսագիրներն ու քննա-
դատները, նրա քնարերգության կենտրոնում կանգնած է
մարդն իր բովանդակ հուզաշխարհով, իր ողջ էությամբ, վե-
հությամբ:

Հիշյալ բանաստեղծությունները ներքին տրամադրու-
թյամբ և ներշնչանքի ուժով սերտորեն կապված են Ալամ-

դարչանի քնարական երգերի հետ: Տարբեր են հարցերը, հերոսները, թեմաները, բայց բանաստեղծի հայացքը կյանքի և աշխարհի մասին նույնն է: Այստեղ էլ հիմնականում նույն թախծող, վշտացող, բողոքող բանաստեղծն է: Եթե սիրո բանաստեղծությունների հիմնական բովանդակությունը սերն է, սիրո կորստի վիշտն ու մորմոքը, ապա կրոնական երգերը հալածական բանաստեղծի տրամադրությունների ուրույն արտահայտությունն են՝ կրոնական շղարշով, պատկերներով, աստվածաշնչի հասկացողությունների, մտքերի օգտագործումով:

Ծանոթանանք դրանցից մի քանիսին:

«Ողբերգություն Իսրայելի» բանաստեղծությունը դրամատիկական մի սրտառուլ պատմություն է, ուր թեև ներկայացված է բիբլիական Հակոբի անձնական ողբերգությունը՝ նրա միակ որդու՝ Հովսեփի մահվան առթիվ, բայց իրական շնչով գրված մի աշխարհիկ երգ է, ուր հոգեբանական համոզիչ գծերով ներկայացվում է որդեկորույս հոր կենդանի կեդարը: Գաբրիել Պատկանյանը վկայում է, որ այդ երգի հորինման շարժառիթը եղել է Ալամդարչանի անդրանիկ որդու՝ պատանի Հովսեփի մահը: Աստվածաշնչային կեդարի՝ Հակոբի միջոցով բանաստեղծը խոր հուզականություն մղում է իր որդու մահը: Ալամդարչանն աշխատել է օգտագործել բիբլիական Հակոբի ողբերգության այն բնորոշ գծերը, որոնք համընկնում են իր անձնական ողբերգությանը: Հատկապես ցնցող է այն նկարագրությունը, ուր գուժկանը հայտնում է Հակոբին՝ նրա որդու մահը՝ հանձնելով Հովսեփի արյունոտ պատմուճանը:

Ա՛խ Յովսէ՛փ, Յովսէ՛փ, ցուպ իմ ծերութեան,
Շնորհալի, քաղցրիկ, քնքուշ, գեղազան,
Աչեղ, մրայօն, կարմրայտ, քաղցրաբան,
Խարտեաշ, գանդրահեր, մանուկ աննման...

Վա՛յ ինձ, սգալի անբաղդ ծերունույս,
Այրի, անսփոփ, տխուր անորդույս:

Ռաքել և Յովսէփ, իմ կեանք, աշաց լռյա,
Իջեալ ի շիրիմ՝ չիս թողիք անյոյս:
(«Ողբերգութիւն Իսրայելի»)

Սա ոչ միայն բիբլիական Հակոբի և կամ Ալամդարյանի անձնական ողբերգության նկարագիրն է, այլև միակ որդուն կորցրած հոր տառապանքների բանաստեղծական ընդհանրացումը, մի ցնցող պատկեր, որ անջնջելի տպավորութիւն է թողնում ընթերցողի վրա:

Այստեղ մենք զգում ենք նույն մարդկային ողբերգության ազդեցութիւնը, որպիսին առկա է Ալամդարյանի սիրած էակի կորստի վիշտն արտահայտող երգերում:

Մայրական սիրո, մայրական վշտին նվիրված շատ երգեր են հայտնի մեզ հայ քնարերգության մեջ: Սակայն հայրական սիրո, հայրական հոգու տառապանքներն արտահայտող քնարական ստեղծագործութիւնն մեր բանաստեղծութեան մեջ առաջինը ներկայացնում է Ալամդարյանը: Ի դեմս Ժիրունի Հակոբի, մենք ունենք իր որդու կորուստը սգացող, սիրող ու տառապող հոր քնարական կերպար:

Չէ՛ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահու սիրելւոյն ապրի,
Արդ կեանք իմ մահն է, մահ՝ կեանք ցանկալի.
Փափագիմ դնիլ յորովայն շիրմի:
Ո՛հ որդեա՛կ, որդեա՛կ, զիս բարձ, առ քեզ տար,
Մի՛ թողուր զիս աստ տանջիլ շարաշար.
Ես՝ քո մոլորակ, դու՝ արփի պայծառ,
Առանց քոյ զինե պատեալ է խաւար:

Եթե «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծութեան մեջ վշտահար հորը մխիթարում են նրա դուստրիւրը, ապա այստեղ Ժիրունի Հակոբին հանգստացնում են նրա թոռներն ու հարսները, աշխատելով ամոքել նրա վիշտը, բայց Ժիրունին վերհիշում է նաև իր կնոջ մահը և որդու կորստյան ցավն ավելի է տանջում նրան:

«Սաղմոս Ծն» խորագրով քնարական բանաստեղծության մեջ Ալամդարյանը բողոքում է հասարակական անարդարությունների դեմ, ջատագովում ազնիվ, ընդհանուրի դործին նվիրված մարդկանց, ներկայացնում նրանց հոգեբանության բնորոշ գծերը։ Պիտի կարծիք, որ այստեղ բանաստեղծը ի նկատի ունի հենց իր՝ որոգայթներով լի կյանքը։

Աստուած, լո՛ւր ձայնի իմում, չարք զարարածդ
տագնապին։

Զիս իբրեւ կաւ դռնհաց՝ աշպանելով ընդոտնեն,
կալագին առ քեզ գոչեմ, հա՛յր իմ, լոյս, կեանք,
ապաւեն,

Զի նոցա դաւք անդադար չիս տեղան անձրեօրէն։

Իրականության ճղճիմ բարքերի, անարդարությունների դեմ նույնպիսի ուժգին բողոք է «Սաղմոս ԾԼԹ» խորագրով բանաստեղծությունը։ Վերապրելով իր ծանր կացությունը և երկյուղած չարակամ մարդկանց դավերից, բանաստեղծը թախանձում է աստծուն՝ հեռու պահել իրեն թշնամիների հետապնդող հալածանքից։

Ապրեցո՛ւ զիս, Տէր, ի մարդոյ շարէ,
Զերծո՛ւ զիս, փրկեա՛ւ յանիրաւ առնէ։
Սիրտ նորա է վիհ խորհրդոց շարաց,
Վիճի և կռուոց, նենդոտ խաբանաց...
Խափանել խորհի նա զգնացս իմ բարի,
Գաղտ որոգայթել զանձն իմ դարանի։
Թակարդ հնարի՝ դայթ ոտից իմոց,
Շուրջ զինեւ զնէ զանթիւ հաղբ դաւոց։

Ալամդարյանը բողոքում է ողբագին, թախանձում արտասվախառն։ Սակայն որքան էլ նա դառնացած է կյանքից, այնուամենայնիվ ապրել է ուզում և ոչ թե մեռնել՝ զոհ դառնալ հակառակորդների դիվական պայքարի։ Եթե մի շարք

բանաստեղծություններում, Ալամդարյանը՝ խորապես հուսահատված, փրկությունը մահվան մեջ էր տեսնում և հուսո թույլ ճիշեր աշծակում, այստեղ հաստատորեն գոչում է. «Ապրեցո՛ղ զիս»: Բանաստեղծը ձգտում է հաղթահարել անձնական վիշտը, հոգեկան ճգնաժամից դուրս գալ, սլաք քարել իր թշնամիների դեմ ու հաղթել: «Կողկողանք առ խաչ փրկչին» բանաստեղծության մեջ նա դարձյալ իր հակառակորդների լարած որոգայթների մասին է խոսում, որոնք շրջապատել են իրեն ծննդյան օրից.

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,
Յո՛ւ և զնացի՝ միշտ գտի դարան.
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ դերծայ:
Առ դրան տաճարիդ արդ կամ դետնամած,
Հայցեմ զօգնութիւն հաշիդ պարծանաց.
Յիս գթա՛, խնայեա՛, զանհուն վէրս իմ բժշկեա:

Ալամդարյանի աշխարհայացքն ավելի բուռն և անսքող դրսևորում է ստացել նրա ազատասիրական, հայրենասիրական բանաստեղծություններում, ինչպիսիք են՝ «Տաղաչափութիւն», «Տաղերգութիւն», «Տեսիլ», «Նիւթք նախապատրաստեալք», «Տապանագիրք» և այլն:

«Տաղերգութիւնը» բանաստեղծական վառ երազանք է հայության անցած փառքի և կորցրած պետականության վերականգնման: Բանաստեղծը պատկերում է մի չքնաղ դուրահանդես, «քաջալանջ, արի, սաղավարտ ի գլուխ» աղեղնավորված հայ հերոսներից, որոնք պատրաստ են թոթափելու կեղեքիչների լուծը և ազատություն բերելու իրենց հայրենիքին: Նրանց մեջ երևում է «անդոյգ Հայկ դյուցազնը», որ ոչնչացրել է Բելին և այժմ հրապարակ է իջել ղեկավարելու մարտը.

Հայկ է, բաղմականք, մեր անդոյգ Պիտ, Հայր,
Բեկայ գլխահար,
Հայկայն է ստուերս, նորին կերպարան, պատկեր
անվթար.

Ա՛խ, ուստի՞ եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ
պերճափառ...

Ի թիկնաց վեհիս նազաքայլ ճեմեն Արամ մեծ
անուն,

Զարմայր սաստ քաջաց, Պարոյր թագապերճ,
Արայն քաջ, սիրուն,

Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, Խոսրով
քաջագուն...

(«Տաղերգութիւն»)

Հին քաջերի ոգին ոտքի է կանգնեցնում նորերին՝
պարսկական զավթիչների դեմ զինք բարձրացրած հայ զին-
վորներին, որոնց մարտի է կոչում Ներսէս Աշտարակեցին։
Ալամդարյանը պատմությունը հիշում և զնահատում է ժա-
մանակակցի հայացքով, չի ներանձնանում նրա մեջ, չի
պարփակվում նրա շրջանակներում։ Նա հիշում է անցյալը,
ոգևորվում նրա հերոսների սխրագործություններով, իբրեւ
«օրվա մարդ»։ Նա պատմության գիրկն անցած դյուցազուն-
ների օրինակով ոգեշնչում է ժամանակակից հայ քաջերին.
որոնք հերոսաբար մարտնչում են իրենց հայրենիքի թշնա-
միների դեմ և խուճապի մատնում նրանց.

Սև զի՞ աստ խմբին ստուերք վեհազանց տանս
Ասքանազեան.

Ի զնին իջին ի տես հանդիսի որդւոց զարգացման.

Արդ ժպտին, խնդան, միմեանց ակնարկեն, բայց
բառնան կախան,

Զի մեկնէ զնոսա ի մէնջ մէդ մոլար կռուոց
պաշտաման:

Ո՛հ, մեկնին, ցրուին, ծխօրէն ցնդին.

Արիք երկնչին, խուճապին, փախչին:

Այս բանաստեղծությունը, որ Ալամդարյանը գրել է
1827 թ., ժամանակի ազգային ազատագրական պայքարում

նրա ուսական կողմնորոշման արտահայտությունն է: Իր տեղում նշել ենք, որ ինչպես Ներսես Աշտարակեցին, այնպես էլ Ալամդարյանը, խորապես համոզված էին, որ հայություն փրկությունը Ռուսաստանի հետ միանալու մեջ է: Բանաստեղծի նպատակն է եղել հայ քաջորդիների սխրագործություններով ոգեշնչել 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակից հայ մարտիկներին, պատերազմ, ուր վճռվում էր հայ ժողովրդի կենաց ու մահու խնդիրը:

Նույն դադափարի մարմնավորումն է նաև «Տեսիլ» բանաստեղծությունը: Այստեղ ավելի պերճախոս են քնարական նրբագեղ զեղումների մեջ դրսևորված նրա հայրենասիրական, ազատասիրական դադափարները.

Այն ինչ ես անդր հասեալ ուշաբարձ, տրտմադէմ,
Անթարթափ, սառն աչօք զէակ ինչ որոնեմ՝
Յանկարծուտ ի բարձանց զսհաւոր ձայն լսեմ,
ՅԱրարատ երկնահաս զատեան վեհ տեսանեմ.
Զհրաշագիր դպրութիւն յաջ զուարթնոյն նշմարեմ,
Յոր հայիլ սասափիմ, մերձենալ ոչ իշխեմ:
Սա փողէ սաստկաձայն, յորմէ ցարդ սասանիմ.
«Խմբեսցին աստ, գոչէ, բոյլք հոգւոց լուսաճեմ,
Որք վարուք և արեամբ և քրտամբք ուղփաճեմ
Ոռոգեալ զՀայաստան՝ արարին նոր եղեմ»:

Գիշերվա աղջամուղջին, անծանոթ դաշտի մեջ, բանաստեղծի երևակայության առաջ երկնքի մի կապույտ քողի տակ կուտակվում են սևաթույր ամպեր: Զգայուն բանաստեղծի սիրտն ու միտքը երկյուղով է լցվում, կասկածանքների խլում են նրա հոգու անդորրը: Նա դժվարությամբ առաջ է շարժվում դեպի նշմարելի լեռան կատարը: Ընթացքը ծանր է, ճանապարհն անհարթ և նրա ամեն մի քայլափոխի առաջ «խոչք և խուլք ծնանին»: Բայց մի ներքին ուժ, հովանավոր ձեռք պահում է բանաստեղծին, ոգի ներշնչում նրան և ապահով դուրս բերում մի լայնահուն պողոտա... Եվ բանաստեղծին երևում է երկնահաս Արարատը՝ Հայաստանի վե-

րածննդի խորհրդանիշը... Նրա առջև բացվում է ահեղ մարտի մի տեսարան՝ բնության տարերքի հուժկու պայքար, շանթ ու որոտ, կայծակ, մրրկահույզ փոթորիկ, որից սասանում են լեռները, թալկանում են աստղերը, համբառնում են երկինք ու լույս ցոլում... քնարաչան հերոսը սարսռում է երկնային այդ ահեղ տեսարանից, ահաբեկվում է: Մահվան սարսափը պատում է նրան, բայց ահա նրա շուրջը խաղաղվում է ամեն ինչ... Արարիչը հրամայում է տոնել Հայաստանի ազատութունը.

Հրամայէ. «Մերկասցի՛ր քուրձ սգոյ Հայաստան,
Պճնեսցի՛ր յիւր շքեղ ոսկեխայտ պատմութեան,
Լուսասցի յարտասուաց դարաւոր տրամութեան,
Խնկեսցի՛ր հոտ յանոյշ երկնաբոյս կնդրկան:
Տո՛ւք նմա զքօղ կարմիր նախեղակ հարսնութեան,
Հնչեցէ՛ք յարարածս զերգ փառաց յաղթական.
Քարասիրտ, ոխերիմ, խորամանկ, անպիտան
Թշնամիք եղիկելոյս առ ժամայն բերկրութեան՝
Պրկեսցին ի կապանս անազատ զերութեան,
Մատնեսցին շարաշար անվախճան նեղութեան»:

«Տեսիլը» Ալամդարյանի քաղաքական հրազանքների իրականացումն է, հայկական ինքնուրույն պետականության հասնելու փայփայած գաղափարը.

Դարն ոսկի մոռացեալ՝ արդ կրկին յայտնեսցի,
Սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմայլեսցի:

Տեսիլի ժանրը հայ գրականության մեջ հենց սկզբից ունեցել է քաղաքական իմաստ և բովանդակություն: Աշոտ Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմություն» երկհատոր մեծարժեք աշխատության մեջ ցույց է տվել, որ հայ հին-մատենագրության տարբեր շրջափուլերում ստեղծված տեսիլները, հակառակ իրենց կրոնական շղարշի, արտացոլում էին հայ ժողովրդի ազատագրա-

կան իղձերն ու ակնկալությունները: Այս տեսակետից բըն-
նելով Ալամդարյանի «Տեսիլը», կարելի է այն դիտել որպես
սրամաքանական զարգացում միջնադարյան տեսիլների,
այն սարբերությամբ, որ միջնադարում հայ ժողովրդի երա-
զանքները կապվում էին «Փրանկների» հետ, ինչպես Ճիշտ
նկատում է Աշ. Հովհաննիսյանը, իսկ Ալամդարյանը Հայաս-
տանի փրկությունը տեսնում է Ռուսաստանի հետ դաշինքի,
ռուսական հովանավորության մեջ: Ալամդարյանի «Տեսիլը»
նրա քաղաքական հայացքների բանաստեղծական զրու-
րումն է, այն հիշեցնում է բանաստեղծի ճառը հայ կամա-
վորների առաջ, որոնց նա գոտեպնդում էր ռուս-պարսկա-
կան պատերազմի շրջանում⁵⁰:

Ալամդարյանի ազատասիրական բանաստեղծություննե-
րը կապվում են նրա հասարակական գործունեության հետ:
Պատահական չէ, որ նա իր հայրենասիրական բանաստեղ-
ծությունները գրել է ռուս-պարսկական պատերազմի ժամա-
նակաշրջանում և պատերազմից հետո:

Ինչպես տեսնում ենք, Ալամդարյանն իր քնարով արտա-
ցուցել է ժամանակի հայ մտավորական առաջավոր շերտերի
քաղաքական իղձերը, արձագանքել է նրանց ազատասիրա-
կան պայքարին, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական, իրա-
վական վիճակից բխող հարցերին: Այս առումով ուշագրավ է
նաև «Մօր աղեկիզի ողբ քստմենի ընդ մահ անդրանկի յօ-
տար աշխարհի» քնարական քերթվածը: Ալամդարյանը չէր
կարող անտարբեր մնալ պանդխտության՝ համահայկական
այդ չարիքի նկատմամբ: Բանաստեղծը կերտել է հայ պան-
դուխտի տառապյալ մոր կերպարը: Մենք լսում ենք մոր
սրտակեղ մորմոքը պանդխտության մեջ տառապող իր որդու
համար: Այս թեման, ինչպես հայտնի է, շատ տարածված է
եղել հայ գրականության, մասնավորապես հայ բանաստեղ-
ծության մեջ: Միջին դարերից սկսած մինչև XX դարասկիզբը
գրվել են պանդխտության երգեր:

⁵⁰ Ուշագրավ է, որ Ալամդարյանը հայ կամավորների առաջ իր ճառը
արտասանել է 1827 թ. մալխին, իսկ «Տեսիլը» գրել է նույն թվականի
հոկտեմբերի 1-ին՝ Երևանի գրավման օրը:

«Մօր աղիկիդի...» բանաստեղծության մեջ Ալամդարյանը խոր քնարականությամբ մարմնավորում է մոր հոգեբանությունը, նրա հոգու երազանքը օտար երկնակամարի տակ դեգերող որդու նկատմամբ, մայրական սիրո թովչանքը, այրող կարոտը, «մայրության դառն օրը»:

Փարիմ զքո ոտիւք, որդեակ նազելի,
Զոհ լիցին իմ կեանք քեզ, անգին որդի...
Ընդ քո զիս մեռո, կեցո զիմ հոգի
Վա՛յ, քանի՜ դառն է մայրութիւն, որդի:
Ո գիտէ, թէ յո՛ր անկեան աշխարհի
Ի մէջ օտարաց, յաղտոտ անկողնի,
Հիւանդ, անխնամ, մերձ մահուան դբի
Մա՛յր ձայնես, և ես կամ ի քէն հեռի,
Վա՛յ, ցաւի հոգիս, լեարդ իմ խարշատի...

Թեև Ալամդարյանի հասարակական-քաղաքական, աղատասիրական տրամադրություններով հագեցված երգերը մեծ թիվ չեն կազմում, սակայն, դրանց գոյություն փաստն ինքնին նշանակալի է: Բանաստեղծությունների այս խումբը ցույց է տալիս Ալամդարյանի քնարերգության թեմատիկ զարգացումը, նրա շրջանակների ընդլայնումը: Բանաստեղծն ավելի լայն ու խորն է ընկալում կյանքը և իր ժամանակի հուզող, կենսական հարցեր շոշափում:

Ալամդարյանը խորապես ապրից սիրո ողբերգությունը, հասավ անկման եզրին, բայց և հոգեբանական ուժղին դարձ կատարեց, հաղթահարեց, վերստին մտավ կյանք: Գնահատելին և ուշադրավն այն է, որ Ալամդարյանի ոչ միայն սիրո երգերի, այլև առհասարակ նրա պոեզիայի բովանդակությունը մարդն է իր հոգեկան տվյալտանքներով, հույզերով ու ձգտումներով: Դրանով էլ պայմանավորված է նրա դերը հայ նոր դրականության և մասնավորապես պոեզիայի պատմության մեջ:

Մի քանի խոսք Ալամդարյանի բանաստեղծական արվեստի առանձնահատուկ գծերի մասին:

Ալամդարյանի քնարերգությունն իր լեզվով (գրաբար), կրօնական, ավետարանական ասույթների առկայությամբ, կապվում է հնի, միջնադարի հետ, իսկ զգացմունքայնության ուժով, հոգեբանական խորությամբ, լիրիկական հագեցվածությամբ և, մանավանդ հարցերի, երևույթների առաջադիմական ըմբռնումով՝ նոր ժամանակների պոեզիային:

Ալամդարյանը բնության երգիչ է: Բնությունը նրա ստեղծագործության ներշնչման աղբյուր է և մեծ տեղ չի գրավում: Այն նպաստում է բանաստեղծի պոեզիայի խոհականությանը և հուզական հագեցվածություն տալիս: Երբեմն նա դիմում է բնությանը և նրա միջոցով մեկնաբանում իր միտքն ու հոգին: «Լաց դստերն Յեփթայեայ» բանաստեղծության մեջ նա դառնում է սգավոր Եփթայի և իր վիշտն ու ցավը պատմում է ոչ միայն մարդկանց, այլև անտառներին, բլուրներին, դաշտերին, հովիտներին.

Ա՛յ ծանօթք լերինք և հովիտք,
Ա՛յ պայծառ դաշտք ծաղկափթիթք,
Ահա ի ձէնջ հրաժարիմ,
Փութով եղայց ի շիրիմ:
Լացէ՛ք զիս, ով անտառք, բլուրք,
Լացէ՛ք հարք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Յօղուածքս այժմին սարսափին:

Վերազարթնող, փթթող գարնանային բնությունն իր ծաղկազարդ դաշտերով՝ հակապատկերն է սիրած էակից զրկված, թշնամիներից հալածված բանաստեղծի հոգեվիճակի, որն այդ հակադրությունից ավելի է մռայլվում:

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Զձինաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայսու իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին:
(«Գարուն»)

Այսպիսով բնությունն օգնում է բանաստեղծին իր մտորումները, հոգու խռովքն արտահայտելու:

XIX դարասկզբի բանաստեղծությունը գերազանցապես նկարագրական, ներբողական բնույթ ուներ: Ալամդարյանի արժանիքն այն է, որ նա բանաստեղծության մեջ բերեց հոգեբանություն, խոհականություն, զգացմունք, վառ պատկերների, համեմատությունների ու հակադրությունների միջոցով դրսևորեց մարդկային հոգու վայրուվերումները: Ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Սարինյանը, «կլասիկական շափաբանության դատողական կառույցի նկարագրական պատումին Ալամդարյանը հակադրեց ներքին ապրումների լիրիկական զեղումը...»⁵¹:

Ալամդարյանի քնարերգությունը հատկանշվում է գունավառ պատկերավորությամբ: Ահա բանաստեղծի սիրած էսկի կենդանի «դիմանկարը»:

Փայլէր ճակատուն լոյս ի հայեցողն.

Յօնք իւր՝ աղեղունք նետարձակ մարդկան:

Ի լայն յօնամէջն կայր տիպ հանճարոյ.

Պարկեշտ տեսք աշացն քաղէին զհոգի:

Ճոխ յայտից վերայ բաց վարդբ ժպտէին.

Շարք ջինջ ատամանցն էր մարգարտայեռ:

(«Ամենևին ես զեղեցիկ...»)

Նույնպիսի մի խոստուն պատկեր է «Երկու ձեռին երկու մոմ» բանաստեղծությունը, ուր նկարագրվում է նշանադրության արարողությունը, հրաշագեղ, ծաղկափթիթ ամոթխած հարսը.

Երկու ձեռին երկու մոմ՝

Ինձ քնդ առաջ ել իւր տան,

51 Ս. Սարինյան, Հայկական ոտմանտիզմ, էջ 106:

Մի հարցանէք ո՞վ է նա,
Հրեշտա՞կ, թէ կոչս լուսագեղ:
(«Պարերգութիւն»)

Ահա և սիրահար փեսան, որ շիկնած սիրած էակի հմայ-
քից, քար է կտրում հուզմունքից:

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար...

Սիրո անհաղթ, տարերային զորութիւնը բանաստեղծն
արտահայտում է այսպիսի պատկերներով.

Որպէս նկտն առ իւր նոյատաւ բերի,
Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝
Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի
Քեզ բաղձայ, սէ՛ր իմ, քեւ վառի, մաշի,
(«Դաւ երեակայութեան»)

Իր սիրած էակին նա գերադաս է համարում բիրլիական և
պատմական բոլոր գեղեցկուհիներից.

Յուդիթ, Սաթինիկ, Բերսաբէ, Եսթեր,
Մեծ Կղէոպատրայն, որ զաշխարհ գերէր,
Պարք օրիորդաց ի Կողքիս, յծգեր,
Ոյց սիրով երբեմն Հռովմ հեծեծէր,
Ռաքելն Յակովբայ՝ որ գեղով այրէր,
Զքեռ իւրոյ նախանձ ի բոց արծարծէր՝
Առ քեւ չեն այլ ինչ, բայց միայն ստուեր,
Դու՝ տիւ աննման, իսկ դոքա՝ գիշեր:

Ալամդարյանի բանաստեղծութիւնների մեջ իշխող
տարրը քնարական հույզն է, զգացմունքայնութիւնը, նրա
լեզուն, ոճն ու պատկերներն էլ զգացմունքային են, հուզա-
կան:

Ալամդարյանը հարստացրեց դարասկզբի բանաստեղ-

ծովթյունը, հատկապես էլեգիան, ներբողը: Նրա պոեզիայում զարգացում ապրեց նաև քնարական-դրամատիկական, քնարական-էպիկական բանաստեղծությունը: «Ողբերգութիւն Իսրայելի», «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց» բանաստեղծությունները այդ ժանրի ընտիր օրինակներն են, որ ստացավ հայ քնարերգությունը շնորհիվ Ալամդարյանի:

Ալամդարյանի քնարական հերոսը սիրող և տառապող մարդն է, որը բանաստեղծի հոգու տառապանքներն է ներկայացնում, նրա ազդի ցավը պատմում, բայց ստեղծում է ոչ միայն իր՝ տառապյալի կերպարը, այլ առհասարակ մարդ արարածի սիրո ողբերգությունը, համամարդկային սիրո ողբերգությունը: Անձնական վիշտը դառնում է հանուր մարդկության ողբերգություն:

Անդրադառնալով Ալամդարյանի գրական ուղղության հարցին, պետք է ասել հետևյալը:

Հայ իրականության մեջ դարասկզբի գրականության, այդ թվում նաև բանաստեղծության տիրապետող ուղղությունը կլասիցիզմն էր: Ալամդարյանը, բնականաբար, չէր կարող տուրք չտալ այդ ուղղությանը:

Ալամդարյանը հայկական կլասիցիզմի հետ առնչվում է գրաբար լեզվով, կրոնական թեմատիկայով և միջնադարյան հայ դասական պոեզիայի որոշ ժանրերի և ձևերի օգտագործմամբ (ներբող, աղոթք, դիմառնություն): Սակայն կյանքն իր նոր երևույթներով, Ալամդարյանի ստացած կրթությունն ու դաստիարակությունը, միջավայրը, արեմտական մրոսական և ուսական ումանտիզմի և սենտիմենտալիզմի ներկայացուցիչների՝ Բայրոն, Շելլի, Կարամզին, Բողդանովիչ, ազդեցությունը իրենց որոշակի կնիքը դրին նրա գրական ճաշակի և գեղագիտական հայացքների վրա:

Ալամդարյանը հանդես եկավ անցման շրջանում, երբ կլասիցիզմին ղուգահեռ զարգանում էին գրական նոր ուղղություններ: Նա կանգնեց երկու ճանապարհների միջև: Հնից սկսեց իր ընթացքը և հասավ նորին, դառնալով նոր գրական ուղղությունների՝ սենտիմենտալիզմի և ումանտիզմի ներկայացուցիչը մեր գրականության մեջ:

Հայկական ումանտիզմի տեսաբանը հիմնավորել և բնութագրել է Ալամդարյանի գրական ուղղությունը. «նրա (Ալամդարյանի—Է. Գ.) գրական պատմական դերն ուրվագծվում է այնտեղ, ուր հայ նոր պոեզիան անցում է հայտաբերում կլասիցիզմից սենտիմենտալիզմին և ումանտիզմին: Այստեղ է, որ Ալամդարյանը նոր աշխարհ տրամադրեց հայ պոեզիային՝ մարդու զգացմունքների աշխարհը»⁵²: Ալամդարյանը կլասիցիզմից թեքվեց դեպի ումանտիզմը, սակայն չհաղթահարեց այն:

«Մի նշանակալից փաստ է, որ հայ նոր պոեզիայի հիմնադիրներից մեկը գրական ասպարեզ է մտնում, շրջանցելով հայրենի գրականության մեջ իշխող ուղղությունը՝ կլասիցիզմը: Նա ընտրում է սենտիմենտալիզմի և ումանտիզմի ուղին: Բայց հենց սկզբից ասենք, որ Ալամդարյանը չհաղթահարեց ումանտիզմը...»⁵³:

Ալամդարյանի պոեզիայի մեջ սենտիմենտալիզմի և ումանտիզմի վերևում նկատված դժերը, առանձնահատկությունները ինքնին ապահովում են նրա նոր ժամանակների՝ XIX դարի պոեզիայի սուաջամարտիկի դերը: Եթե գրաբար կրոնահայրենասիրական բնույթի նրա բանաստեղծությունները նորություն չէին հայ պոեզիայի համար, ապա նույն գրաբարով ստեղծված սիրո և ազատասիրական, հասարակական հարցեր շոշափող քնարական բանաստեղծություններով նա հաստատեց իր արժանի տեղը հայ գրականության մեջ:

* * *

Ալամդարյանի «Հոամիզդ և Զենոբիան» պատմական թեմայով գրված առաջին ողբերգություններից մեկն է հայ գրականության մեջ: Ժամանակագրական կարգով «Հոփիսիմե» կրոնական ողբերգությունից (կվով, 1667) և «Խտրադիմայ դրժողութեան» (Կալկաթա, 1821) կենցաղային կա-

52 Ս. Ն. Սարինյան, Հայկական ումանտիզմ, էջ 106:

53 Նույն տեղում. էջ 99:

տակերգությունից հետո, դա երրորդ թատերական երկն է, ուր հանդես են գալիս կին գործող անձինք:

«Հռամիզդ և Զենոբիա» ողբերգության շուրջը բանասիրության մեջ տարակարծիքներ, վեճեր շատ են եղել: Պիեսի բնագիրը հայտնի դարձավ 1950-ական թվականներին սկզբներին միայն: Մինչ այդ բանասիրության մեջ թուղցիկ ակնարկ կար նման մի երկի գոյության մասին: 1925 թ. «Հայարտում» հանդեսում տպագրած իր հոդվածում Ս. Նրզնկյանը հայտնում է, որ Ներսիսյան դպրոցի գրադարանում տեսել է այս պիեսի տպագրված օրինակը: Այդ հայտարարությունը, սակայն, չի հաստատվում:

1949 թ. բանասեր Շ. Նազարյանը Մատենադարանի արխիվում Ալամդարյանի Ռուս-հայերեն քերականության ինքնագիր հատվածների հետ հանդիպում է նաև «Հռամիզդ և Զենոբիա» պիեսի բնագրի անավարտ մի ընդօրինակությանը⁵⁴: Շ. Նազարյանի համոզմամբ պիեսի այդ ընդօրինակությունը կատարել է Գաբրիել Պատկանյանը ոչ թե հեղինակային ինքնագրից, այլ մի ուրիշ գրչագրությունից:

Նազարյանի հաղորդմանը հետևում է թատերագետ Վ. Թերզիբաշյանի ընդարձակ հոդվածը «Հռամիզդ և Զենոբիա» պատմական դրամայի մասին:

1959 թ. Վ. Թերզիբաշյանը «Հայ դրամատուրգիայի պատմություն» ստվարածավալ աշխատության «Բատրոնը և դրամատուրգիան XIX դարի առաջին կեսերին» և «Հ. Ալամդարյանի «Հռամիզդ և Զենոբիա» դրամայի պրոբլեմը» գլուխներում համակողմանիորեն քննության է ենթարկում պիեսը⁵⁵:

Ալամդարյանի վերոհիշյալ պիեսին անդրադառնում է Ա. Ինճիկյանն իր «Ալամդարյանի գրական ժառանգությունը» հոդվածում, ուր նոր և ուշագրավ փաստերով լուսաբա-

—

54 Շ. Նազարյան, 1846.-թ. Գանձակում բեմադրված մի պիեսի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1952, № 3:

55 Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, Երևան, 1959, էջ 236—258:

նում է պիեսի ստեղծման պատմության հետ կապված մի շարք հարցեր:

«Հռամիրզ և Զենոբիա» պիեսի այսպես կոչված «պրոբլեմի» առանցքը կազմում են հետևյալ հարցերը.

1. Ո՞ւր է «Հռամիրզ և Զենոբիա» պիեսի հեղինակը:

2. Պիեսն ավարտվա՞ծ է եղել, թե ոչ:

3. Բեմադրվե՞լ է արդյոք:

4. Տպագրվա՞ծ է եղել, թե ոչ:

5. Ալամդարյանի և Գրիբոյեդովի առնչակցությունն այս հարցում:

Վաստսիաշատ Թատերագետ-բանասեր Վ. Թերզիբաշյանը ի մի բերելով «Հռամիրզ և Զենոբիա» պիեսի մասին եղած ձեռագիր և տպագիր փաստերը, հանդում է այն եզրակացության, որ Ալամդարյանն է գրել այդ պիեսը, բայց կիսատ է թողել, և որ այն շարունակել և ավարտել է Թեոդորոս Խաղամյանը: Մեր կարծիքով այսպիսի մի եզրակացության համար Թատերագետի փաստարկումները չեն բավարարում: Վ. Թերզիբաշյանը հիմք է ընդունում Հովհ. Մալխասյանի «Համառոտ տեսություն» ձեռագիր անավարտ աշխատությունը. «Այստեղ, — գրում է Վ. Թերզիբաշյանը, — անհրաժեշտ է ճշտել թվականը: Հ. Մալխասյանը որոշակիորեն ասում է, որ Նոր Նախիջևանում Թատերական ներկայացումների կազմակերպվել են 1837—1840 թթ. շրջանում, երբ խաղացվել է նաև «Ռամիրզ և Զենոբիա» պիեսը, որի հեղինակը, ըստ Հովհ. Մալխասյանի, Թեոդորոս Խաղամյանն է»⁵⁶:

Ահա Հովհ. Մալխասյանի անավարտ աշխատության այդ հատվածն ամբողջությամբ. «Զմյուռնիայից ու Թիֆլիսից հետո 1837—1840 թվականներից հայերեն ներկայացումներ կազմակերպվում են Նոր Նախիջևանում: Կազմակերպողն եղել է Թեոդորոս Խաղամյան անունով մի ուսուցիչ, որ ավարտելով Լաղարյան ճեմարանը, գալիս է հայրենիք (Նոր Նախիջևան), բաց անում պրոգիմնազիա, հավա-

⁵⁶ Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, էջ 240:

քում է աշակերտներ, սրպիսի աշակերտներն եղել են տա-
ղանդավոր պատանիներ, նրանց հետ սկսում է պիեսների բե-
մադրել: Նա՝ Թ. Խասաճյանը, գրել է մի քանի ինքնուրույն
սյուսմական և կենցաղագրական պիեսներ, ինչպես՝ «Ռա-
միզդ և Զենոբիա», «Տրդատ Թագավոր», «Քաջն Վարդան»,
«Ժլատ»⁵⁷:

Հովհ. Մալխասյանն՝ օգտվել է Թեոդորս Խաղաճյանի
որդու՝ Հարություն Խաղաճյանի 1890-ական թվականներին
գրած հիշողություններից, որի մի պատառիկը պահվում է
գրականության և արվեստի թանգարանում, որը և օգտա-
գործել է Վ. Թերզիբաշյանը: Զմոռանանք նկատել, որ Հա-
րություն Խաղաճյանն իր հիշողությունները գրել է հոր պատ-
մածի հիման վրա:

«Նա այսպես կպատմեր...—գրում է Հար. Խաղաճյանն
հոր մասին,—երկու տարվա մեջ տասի շափ ներկայացում-
ների տվինք, երկու անգամ կրկնելով հետագա պիեսները.
«Ռամիզդ և Զենոբիա», «Տրդատ Թագավոր», «Քաջն Վար-
դան» և ուրիշներ»⁵⁸: «Հռամիզդ և Զենոբիա» պիեսը Թ. Խա-
ղաճյանին վերագրելու մասին ոչ մի խոսք չկա: Մնում է
կարծել, որ Հովհ. Մալխասյանը պարզապես սխալ տպավո-
րության տակ է գրել այդ տողերը: «Հռամիզդ և Զենոբիա»
պիեսը Թ. Խաղաճյանի գրչին վերագրելու կամ նրա կողմից
այն ավարտելու մասին որևէ այլ վավերագիր մեզ չի հա-
սել:

Շ. Նազարյանի հայտնաբերած պիեսի ձևագիրը ընդո-
րինակության վրա գրված է՝ «Հռամիզդ և Զենոբիա». եղե-
րերգութիւն յօրինեալ ի Յարութիւն վարդապետէ Ալամդա-
րեանց. հանդերձ վարքագրութեամբ հեղինակին և քանի մի
ընտիր և գեղեցկահիւս երգովք նորին, ի լոյս ածեալ աշխա-
տասիրութեամբ Աւետիքայ Խաղեղեանց»: Դա բավարար
հիմք է տալիս հավաստելու, որ պիեսի հեղինակը Հ. Ալամ-
դարյանն է: Ինչպես պարզ է դառնում, Ավ. Խաղեղյանը

57 ԴԱԹ, Հովհ. Մալխասյանի ֆոնդ, 109, էջ 6:

58 Վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, էջ 242:

1858 թ. ձեռնարկած է եղել Ալամդարյանի հիշյալ պիեսի և մի շարք բանաստեղծությունների տպագրությանը, սակայն նրան չի հաջողվել մտադրությունն իրականացնել: Ալամդարյանի ժամանակակիցներից և աշակերտներից Գ. Պատկանյանը, Հովհ. Քուչուբեկյանը, Առ. Արարատյանը, Մ. Մսերյանցը և այլք, տարակույս շունեն, որ հիշյալ պիեսը Ալամդարյանի գրչին է պատկանում:

Մյուս կարևոր հարցն այն է, թե Ալամդարյանն ավարտե՞լ է արդյոք իր պիեսը, թե՞ ոչ: Մեզ հասել է պիեսի թերի օրինակը:

Այս առթիվ Ա. Ինճիրկյանը գրում է. «Մենք ունենք երկու հավաստի վկայություն, որոնք լիովին իրար համապատասխանում են և սպառիչ պատասխան են տալիս առաջադրված հարցին:

Առ. Արարատյանը, որ, ինչպես գիտենք, Ալամդարյանի աշակերտներից էր, աշխատակցել է «Նրախաչրիքին» և ապա կազմել «Արգասիք Ներսիսյան դպրատան» ձեռագիր ժողովածուները, վերջինիս երկրորդ հատորում ղեռնդեղով իր ուսուցչի բանաստեղծությունները, — 1851 թ. հունվարին դիմում է Մ. Մսերյանին, ինգրեղով ուղարկել իրեն Ալամդարյանի ողբերգության ձեռագիրը: Մսերյանը նույն թվականի հունվարի 28-ի նամակում նրան գրում է հետևյալը.

«Զբարհհիշատակ հ(օր) Յ. վ. Ալամդարեան ղեղերերդութիւն «Հումիզդ և Զինոբիա» օրինակեալ էի ի Քիշնե ի բնագրէ հեղինակին, գտելոյ ի ձեռս քահանայի ուրումն նախիջեանցւոյ, և ապա զիմ գրածն տուեալ՝ առեալ էի զբնագիրն, զոր և առ իս ունելով ի գալն իմ այսր՝ ընծայեալ եմ որդեգրի երանելոյն՝ Յարութիւն քահանայի Ալամդարեանց (խոսքը Հարություն քահանա Գևորգեանի մասին է, որ Ալամդարյանի որդեգիրը լինելով, նրա մահից հետո միառժամանակ կրում էր իր հոգևոր հոր անուն-ազգանունը — Ա. Ի.): Սակայն, — շարունակում է նամակագիրը, — առ ի լնուզ զփափագ մտերմիդ, առեալ վերստին զնոյն իսկ բնագիրն՝ հասուցից առ Զեղ կամ փօշտով կամ ընդ ձեռն ուղևորաց: Այս գործ ի բնագրին ևս քերի է, վի մինչև ժամանեալ էր հեղի-

նակն յաւարտումն նորին՝ զիւրն աւարտեաց զկեանս՝ աղե-
տալից մահուամբ»⁵⁹:

Իսկ Ա.վ. Խաղեղյանը Ալամդարյանի երկերի իր կազմած ժողովածուի առաջաբանում գրում է. «Ի 1833 ամի կարգե-
ցաւ Վանահայր սուրբ Խաչ վանուց Նոր-Նախիջևան քաղա-
քի.—սմին իրի գրեաց զերկոսին երգս առ սուրբ Խաչն՝
«Անարատ գառին» և «Յառաջ քան զբարերար...», ընդ նմին
և զթատրոնական դայս բանաստեղծութիւն չափաբերական,
ընդ վերտառութեամբս «Հռամիզդ» բայց վաղաժամ մահ նո-
րա շեթող նմա ի կատար գործոյն ժամանիլ...»⁶⁰:

Հարցը պարզ է, որոշակի:

Ավելորդ ենք համարում անդրադառնալու նաև պիեսի
տպագրութեան հետ կապված բանասիրական վեճերին:
Ա. Ինճիկյանի բերած փաստերը համոզում են, որ «Հայար-
տուն» հանդեսում տպագրված տեղեկութիւնը և դրա հի-
ման վրա Ա. Երեմյանի «Ռուսահայ թատրոնի պատմութիւն-
ներ» աշխատութեան առաջին հատորում «Հռամիզդ և Զենո-
բիա» ողբերգութեան տպագրված լինելու մասին եղած հա-
ղորդումը անհիմն են:

Անդրադառնալով անցյալ դարի 30—40-ական թվա-
կաններին Նոր Նախիջևանում «Ռամիզդ և Զենոբիա» անու-
նով պիեսի բեմադրութեան փաստին, ապա պետք է ընդու-
նել հավանական այն ենթադրութիւնը, որ Թ. Խաղամյանը
լրացրել է իր ուսուցչի (Ալամդարյանի) անավարտ ողբեր-
գութիւնը և բեմադրել՝ այլ թատրերգութիւնների հետ միա-
սին («Տրդատ թագավոր», «Քաջ Վարդան» և այլն):

Վ. Թերզիբաշյանը իր «Հայ դրամատուրգիայի պատ-
մութիւն» արժեքավոր աշխատութեան մեջ կարևոր տեղե-
կութիւններ է հաղորդում «Հռամիզդ և Զենոբիա» ողբերգու-
թեան սյուժեով համաշխարհային գրականութեան մեջ եղած

59 Ա. Ինճիկյան, Հ. Ալամդարյանի գրական ժառանգութիւնը, ՀՍՍՀ
ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1957, № 9, էջ 70—71:

60 Նույն տեղում, էջ 71:

պիեսների, ինչպես նաև օպերային լիբրետոների մասին⁶¹, նկատենք, որ Գրիբոյեդովի և Ալամդարյանի համանուն պիեսները միմյանց հակադրելու Թերզիբաշյանի միտումն անտեղի է և անապացույց: «Մենք ունենք հիմքեր ենթադրելու,— գրում է նա,— որ Ալամդարյանը նույնպես իր համանուն ողբերգության գաղափարը հղացել է մոտավորապես նույն թվականներին: Սակայն նրա հղացումը և երկի գաղափարական-քաղաքական բովանդակությունը շատ հեռու է Գրիբոյեդովի ծրագրած ողբերգության գաղափարից»⁶²:

Նախ՝ չի կարելի վճռական խոսք ասել գործերի մասին, որոնցից մեկի (Գրիբոյեդովի) սոսկ պլանն է պահպանվել, իսկ մյուսը (Ալամդարյանինը) մնացել է անավարտ: Եվ ապա՝ միևնույն նյութի հիման վրա գրված ամեն մի երկի հեղինակ գաղափարական իր միտումը, իր հայացքներն է մարմնավորում, հետևաբար, Գրիբոյեդովը և Ալամդարյանը գաղափարական-քաղաքական միևնույն հիմնական ունենալ չէին կարող: Մշակելով հայ ժողովրդի պատմական անցյալին վերաբերող այդ թեման, ինչպես արևմտաեվրոպական գրողները, այնպես էլ Գրիբոյեդովը, իր ժողովրդի վիճակից բխող հարցեր է բարձրացրել: Եթե Գրիբոյեդովը հայ ժողովրդի պատմական անցյալի՝ (քրիստոնեության առաջին դարի) դեպքերը դնելով իր երկի հիմքում ձգտել է լուծելու իր ժողովրդի՝ XIX դարի 20-ական թվականների ուս իրականության համար մի «հրատապ քաղաքական պրոբլեմ՝ ժողովրդի և թագավորական իշխանության փոխհարաբերության պրոբլեմը՝ հենելով դեկաբրիստների ապստամբական փորձից» (վ. Թերզիբաշյան)⁶³, ապա Ալամդարյանն օգտագործելով պատմական նույն ժամանակաշրջանի անցքերը, իր պիեսում արծարծել է քաղաքական-գաղափարական այլ հարցեր,

61 Տե՛ս վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, էջ 247, տես նաև նույն հեղինակի «Հայկական թեմաները համաշխարհային գրականության մեջ», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. 3-իտ., 1956, № 3:

62 վ. Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, էջ 248:

63 Նույն տեղում:

որոնք բխում էին ժամանակակից հայկական իրականությունից:

2. Ալամդարյանի «Հռամփղղ և Զննոբիա» ողբերգության մեղ հասած հատվածից Վ. Թերզիբաշյանը եզրակացնում է, որ «պիեսի կենտրոնական իդեան միանգամայն անընդունելի է: Հեղինակը փորձել է հայ և վրացի ֆեոդալների միջև ծագած վեճը և թշնամությունը ներկայացնել որպես երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող ազգամիջյան հակառակություն, ինչպես փորձել են անել հետագայում բուրժուական պատմագիրներն ու տեսաբանները»⁶⁴:

Վ. Թերզիբաշյանի այս եզրակացությունը ճիշտ չէ: Ալամդարյանի պատմական դրամայի մեջ գերիշխող է հայրենիքի ազատագրության գաղափարը: Այստեղ «հետագարձ» արձագանք են դտել քաղաքական այն դեպքերը, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան Արևելյան Հայաստանի համար, և որոնց ականատեսն էր դրամայի հեղինակն ինքը.

Հռամփղղը խոր ատելություն է տածում պարսկական նվաճողների դեմ.

Նթէ օգնեսցին՝ մեղ դիք հարց մերոց
Վանել յաշխարհէս՝ ՂԴարեհ արքայ մեծ,
Յայնժամ գեր Տիրիթ՝ լիցի զէնքնկեց
Փութասցի թաքչիլ՝ յամուր ինչ ամրոց:

Նա խորհում է Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու մասին: Պիեսում դատապարտվում է պարսիկ իշխանների ագահությունը, ընչաքաղցությունը: Ահա թե ինչ է ասում Արշակ զորավարը.

Լայնարձակ դաւառք՝ Պարսից տերութեան
Անթիւ գանձք նորա՝ արդիւնք տարեկան,
Թի յանազ ըղձին շեղին բաւական
Զի՞նչ կամի քաղել՝ նա ի Հայաստան:

⁶⁴ Նույն տեղում, էջ 252:

Հռամփղղը ատելությամբ է լցված դեպի պարսից թագավորը: Նա բնութագրում է Դարեհի դաժան կերպարը.

Դարեհ է հպարտ՝ ազա՜հ՝ նախանձոտ,
լի անթիւ գանձուք՝ միշտ գանձուց կարօտ,
Արշաւէ յերկիրս՝ անահ, անամօթ,
Յասման անմահից՝ պահառոտ անօթ:

Ալամդարյանի դրամայում արտահայտություն է դրել ոչ թե հայ և վրաց ժողովուրդների, այլ տիրող վերնախավերի հակամարտությունը, որի առանձին դրսևորումներին ականատես է եղել դրամատուրգն իր գործունեության Ռիֆլիսյան տարիներին: Ավելին. դրամայի գլխավոր հերոսի՝ Հռամփղղի միջոցով Ալամդարյանն արտահայտել է հայ և վրաց ժողովուրդների բարեկամության զաղափարը, որ չկա նրանց միջև խտրություն դնելու հիմք:

Ընդ հայ, ընդ վրացի՝ չիք բան խտրութեան,
Իմ որդիք, զաւակք՝ են ամենեքեան,—

ասում է նա:

Ալամդարյանը հայ հեթանոսական կյանքի թեմայով հորինված իր երկով արձագանքել է ժամանակակից կյանքին: Այստեղ արծարծված են XIX դարի առաջին տասնամյակներին հայ ժողովրդի առջև ծառացած ազատագրական պայքարի հարցերը: Ալամդարյանը ընդգծում է հայության անմիաբանության փաստը և դրան հակադրում միաբանության, անձնուրաց պայքարի անհրաժեշտությունը՝ Հայաստանը օտար տիրակալների լծից ազատագրելու գործում:

Անհրաժեշտ է նկատել սակայն, որ Ալամդարյանի պիեսում տիրապետող է այն սխալ մտայնությունը, թե հայ ժողովրդի դժբախտության միակ պատճառը անմիաբանության մեջ է...

«Հռամփղղ և Զինոբիա» պիեսը Ալամդարյանի զրական ժառանգության անբաժան մասն է, արվեստով ու բովանդա-

կությամբ նրան հարադատ: Այստեղ էլ, ինչպես նրա կրո-
նա-քաղաքական և ազատագրական երգերում, ուժեղ է սե-
րը դեպի Հայաստանը, հայկական բնաշխարհը, ժողովուրդը:

Ալամդարյանի երկն ունի սուր դրամատիկական կոնֆ-
լիկտ: Բիւն մի շարք հատկանիշներով առնչվում է կլասիցիս-
տական դրամաների հետ, բայց և էական գծերով առանձ-
նանում է նրանցից: Նախ՝ կին զործող անձերով, ասլա՝ գոր-
ծող անձանց հոգեբանության, ասլրումների բացահայտու-
մով: Ողբերգության առանձին հատվածներում դրսևորվել է
նրբագեղ քնարականությունը:

Չնայած իր անավարտվածությանը, Ալամդարյանի
«Հումսիզդ և Զենդբիա» ողբերգությունը հայ նոր դրամա-
տուրգիայի սկզբնավորման կարևորագույն գեղարվեստական
վավերագրերից է:

Խիստ կարճ, բայց բեղմնավոր և իմաստավորված
կյանք ապրեց Ալամդարյանը: Նա հայ նոր քնարերգության
առհիւրաններից է: Գեղագետի ճշմարիտ զգացողությամբ և
բարձր արվեստով նա իր բանաստեղծությունների մեջ կեր-
պավորեց մարդու ներաշխարհը, նրա խոր անհատականու-
թյունը, նրա անձնական վիշտն ու թախիժը:

Ալամդարյանը XIX դարի առաջին հայ գործիչներից էր,
որոնք հայ ժողովրդի՝ օտար նվաճողների լծից փրկության
ուղին տեսան Ռուսաստանին միանալու մեջ:

Հարություն Ալամդարյանը ճանապարհ հարթեց հայ նոր
քնարերգության և մանկավարժության մտքի հետագա զար-
գացման համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յ ա ջ ա բ ա ն 5

Դ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Պյանբը և գրական-լուսավորական հայացքների ձևավորումը . 17

Դ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Ալամդարյանը և XIX դ. առաջին կեսի աղգային-հասարակական .
կյանքի մի քանի հարցեր 58

Դ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

Պյանքի վերջին տարիները 94

Դ Լ Ո Ւ Խ Ջ Ո Ր Ր Ո Ր Դ

Հարություն Ալամդարյանի ստեղծագործությունը 112

ԷԼՄԻՐԱ ՍՈՍԻ ԴԵՎՈՐԴՅԱՆ
ЭЛЬМИРА СОСЕВНА ГЕВОРКЯН

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՄԴԱՐՅԱՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր

Ժ. Մ. ԱԴՈՆՅ

Նկարիչ

Հ. Կ. ՄՆԱՅԱԿՍՆՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐԾՍԿԱԼՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Սրբագրիչ

Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 04321

Պատվեր 958

Հրատ. 4533

Տպաքանակ 2000⁰

Հանձնված է շարվածքի 19/X 1976 թ., Ստորագրված է տպագրության.
3/V 1977 թ., Տպագրական 10,5 մամուլ, հրատ. 7,1 մամուլ, պայման..
8,82 մամուլ+1 ներդիր: Թուղթ № 1, 84×108¹/₃₂, գինը 80 կոպ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24-դ.

Издательство АН Армянской ССР. Ереван, Барекамутян, 24-д.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան

MEMORANDUM FOR THE RECORD

Subject: [Illegible]
Reference: [Illegible]

[Illegible text block]

[Illegible text block]

ԳԻՆԸ 50 Կ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԴԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն — 1977

A II
58387

ԳԼԱ ՉԽՆԱՐԱՐ ԳԻՒ. ԳՐԱԴ.



220058387